

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**YEREVAN STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
*ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*

**ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА**  
*МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ*

**JOURNAL OF YEREVAN UNIVERSITY**  
*INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE*

*ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*  
*ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ*  
*SOCIAL SCIENCES*

**№ 1 (40)**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ**  
**ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**  
**YEREVAN STATE UNIVERSITY PRESS**

**ԵՐԵՎԱՆ - 2023**

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Международные отношения, Политология». Выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».

Three issues of “Journal of Yerevan University. International Relations, Political Science” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ **Պետրոսյան Գեղամ** (ս.գ.դ., պրոֆ.)

**Ազյան Վահագն** (ս.գ.թ., դոց.), **Ալեքսանյան Աշոտ** (ք.գ.դ., պրոֆ., պատ. քարտուղի), **Ավագյան Արսեն** (ս.գ.դ., պրոֆ.), **Բայբուրդյան Վահան** (ս.գ.դ., պրոֆ.), **Գալստյան Խաչիկ** (ք.գ.դ., պրոֆ.), **Ենգոյան Աշոտ** (ք.գ.դ., պրոֆ.), **Լեպեխին Վլադիմիր** (փ.գ.թ., Մոսկվա), **Մանուկյան Ժակ** (ս.գ.թ., դոց.), **Մարգարով Ալեքսանդր** (ք.գ.դ., պրոֆ.), **Մարուքյան Արմեն** (ս.գ.դ., պրոֆ.), **Պետրոսյան Վահրամ** (ս.գ.թ., դոց.), **Սաֆարյան Արամ** (ս.գ.թ., դոց.), **Սիրյան Նիկոլայ** (ս.գ.թ., Մոսկվա), **Քեռյան Գարիկ** (ք.գ.դ., պրոֆ.)

Редакционная коллегия:

Главный редактор: **Петросян Гегам** (д.ист.н., проф.)

**Авагян Арсен** (д.ист.н., проф.), **Аглян Ваагн** (к.ист.н., доц.), **Алексян Ашот** (д.пол.н., проф.б отв. секретарь), **Байбурдян Ваан** (д.ист.н., проф.), **Галстян Хачик** (д.пол.н., проф.), **Енгоян Ашот** (д.пол.н., проф.), **Керян Гарик** (д.пол.н., проф.), **Лепехин Владимир** (к.фил.н., Москва), **Манукян Жак** (к.ист.н., доц.), **Маркаров Александр** (д.пол.н., проф.), **Марукян Армен** (д.ист.н., проф.), **Петросян Ваграм** (к.ист.н., доц.), **Сафарян Арам** (к.ист.н., доц.), **Силаев Николай** (к.ист.н., Москва)

Editorial Board:

Editor-in-chief: **Petrosyan Gegham** (Sc. D. in History, Professor)

**Aglyan Vahagn** (Ph.D. in History, Associate Professor), **Aleksanyan Ashot** (Sc. D. in Political Science, Professor, Executive Secretary), **Avagyan Arsen** (Sc. D. in History, Professor), **Bayburdyan Vahan** (Sc. D. in History, Professor), **Engoyan Ashot** (Sc. D. in Political Science, Professor), **Galstyan Khachik** (Sc. D. in Political Science, Professor), **Keryan Garik** (Sc. D. in Political Science, Professor), **Lepekhn Vladimir** (Ph.D. in Philosophy, Moscow), **Manukyan Zhak** (PhD in History, Associate Professor), **Markarov Alexander** (Sc. D. in Political Science, Professor), **Maruqyan Armen** (Sc. D. in History, Professor), **Petrosyan Vahram** (Ph.D. in History, Associate Professor), **Safaryan Aram** (Ph.D. in History, Associate Professor), **Silaev Nikolay** (Ph.D. in History, Moscow)

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԹ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՈՒԼԻ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ (1918 Թ. ՀՈՒՆԻՄ-ՀՈՒԼԻՄ)**

**ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հոդվածում վերլուծվում է 1918 թ. հունիսի 22-ից հուլիսի 3-ը Կոստանդնուպոլսում գտնվող Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեությունը, գնահատական է տրվում Հայկական հարցի լուծման վերաբերյալ թուրքական իշխանությունների հետ բանակցությունների արդյունավետությանը: Այս առումով կարևորվում են հայկական պատվիրակության դիվանագիտական այն քայլերը, որոնց նպատակն էր շարունակել նախընթաց դիվանագիտական հանդիպումներն ու բանակցություններն օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Կատարվող դիտարկումներից պարզ է դառնում նաև այն, որ հայկական պատվիրակության առաջին դիվանագիտական հանդիպումներն ու բանակցությունները օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության բարձրաստիճան պաշտոնյաների ու մամուլի հայտնի ներկայացուցիչների հետ Հայկական հարցի լուծման համար բարենպաստ ընթացք չունեցան: Օրինակ՝ հայկական պատվիրակությունը փորձեց արժարժել Բաթումի հայ-թուրքական հաշտության դաշնագիրը վերանայելու հարցը՝ նպատակ ունենալով համաձայնություն ձեռք բերել թուրքերի կողմից բռնագավթված հայկական պատմական հայրենիքի տարածքների մի մասը վերամիավորելու Հայաստանի Հանրապետությանը՝ կենսունակ պետություն ստեղծելու համար: Բայց հայ դիվանագետների ջանքերը զուր էին, նրանց ներկայացրած գործնական պահանջներին թուրքերը վերաբերվում էին հույժ զգուշավորությամբ, բացառապես սեփական շահախնդրական դիրքերից: Ակնհայտ էր, որ թուրքերը հայկական կողմին հուզող հարցերին տալիս էին դիվանագիտական անորոշ կամ խուսափողական պատասխաններ կամ մերժում դրանք: Հաճախ էլ տարբեր պատրվակներով դիվանագիտական ճնշումներ էին բանեցնում հայկական պատվիրակության անդամների վրա:

**Բանալի բառեր** – *Հայաստանի Հանրապետության պատվիրակություն, Հայկական հարց, թուրքական իշխանություններ, դիվանագիտական բանակցություններ, արևմտահայ նահանգներ*

1918 թ. հունիսի 22-ից հուլիսի 3-ը Կոստանդնուպոլսում էր գտնվում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Հայկական հարցի լուծման վերաբերյալ թուրքական իշխանությունների հետ բանակցություններ վարելու նպատակով:

Հայկական պատվիրակությունը շարունակեց նախընթաց դիվանագիտական հանդիպումներն ու բանակցությունները օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության բարձրաստիճան պաշտոնյաներ՝ արդարադատության նախարար Հալիլ, արտաքին գործերի նախարար Նեսիմի բեյերի, ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշայի և մի քանի նախարարների հետ<sup>1</sup>: Հունիսի 22-ին օսմանյան Թուրքիայի արտաքին գործերի նախարարության հատուկ ներկայացուցիչ Մուխթար բեյի ուղեկցությամբ հայկական պատվիրակությունն այցելեց արդարադատության նախարար Հալիլ բեյին, որը 1918 թ. մայիս-հունիսին Բաթումի թուրքական պատվիրակության նախագահն էր և առաջիկայում պատրաստվում էր նախագահելու Կոստանդնուպոլսի խորհրդածողովը<sup>2</sup>: Երեք օր անց՝ հունիսի 25-ին, Հալիլ բեյը փոխադարձ այցելություն կատարեց հայ դիվանագետներին, որոնց միացել էր Կոստանդնուպոլիս ուշ ժամանած հայկական պատվիրակության անդամ Մ. Պապաջանյանը (1918 թ. մայիսին Բաթումի անդրկովկասյան պատվիրակության անդամ, մայիսի 29-ից հունիսի 4-ը՝ հայ-թուրքական բանակցությունների հայկական պատվիրակության անդամ): Ալ. Խատիսյանը (1918 թ. փետրվարից Տրապիզոնի, մայիսի 11-26-ը՝ Բաթումի անդրկովկասյան պատվիրակության անդամ, մայիսի 29-ից հունիսի 4-ը՝ հայ-թուրքական բանակցությունների հայկական պատվիրակության նախագահ) և Մ. Պապաջանյանը, ինչպես տեսնում ենք, դիվանագիտական շփումներ են ունեցել Հալիլ բեյի հետ դեռևս Բաթումի թուրք-անդրկովկասյան և հայ-թուրքական բանակցությունների ժամանակ:

1918 թ. հունիսի 3-ին Հալիլ բեյը օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության անունից պահանջել էր հայկական պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանից ստորագրել թուրքանպաստ մի փաստաթուղթ և ստանձնել որոշակի պարտավորություն. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է պատերազմի (Առաջին աշխարհամարտ – Գ. Պ.) ամբողջ ընթացքում չպահպանել և ոչ մի տեսակի դիվանագիտական կապեր այն պետությունների հետ, որոնք գտնվում են պատերազմական վիճակում Օսմանյան կայսրության հետ»<sup>3</sup>: Հաջորդ օրը՝ հունիսի 4-ին, ստորագրվել էր Բաթումի հայ-թուրքական «հաշտության և բարեկամության» դաշնագիրը: Օսմանյան Թուրքիայի կողմից ստորագրել էին թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյը, թուրքական բանակի գլխա-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117, ց. 2, գ. 12, թ. 40:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 40:

<sup>3</sup> Նույն տեղում:

վոր հրամանատար Վեհիբ փաշան, իսկ Հայաստանի Հանրապետության անունից՝ Ալ. Խատիայանը, Հովհ. Քաջագունին և Մ. Պապաջանյանը: Իրականում, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ կնքված Բաթումի հաշտության դաշնագրերով օսմանյան Թուրքիան լայն հնարավորություն էր ստանում ապահովելու իր ռազմաքաղաքական և տնտեսական ազդեցությունն ամբողջ տարածաշրջանում:

Ալ. Խատիայանը փաստում է, որ Կոստանդնուպոլսում փոխադարձ դիվանագիտական հանդիպումների ժամանակ «Խալիլ պեյ մեզ ընդունեց շատ սիրալիք կերպով. մեր խօսակցության առարկան եղաւ առաջիկայ խորհրդածոդովը, անոր օրակարգը եւ այն միջոցները, որոնք անմիջապէս պէտք է առնին հայերու վիճակը Կովկասի մէջ բարելաւելու համար: Մեր հիմնական միտքը հետեւալն էր, որ որոշ կերպով արտայայտեցինք խօսակցության ընթացքին. «Կամ Հայաստանը պիտի ապրի, ըսինք մենք Խալիլ պեյին, **այն ատեն տւէք անոր յարմար սահմաններ**, կամ չպիտի ապրի, այն ատեն մեր բոլոր խոսակցութիւնները աւելորդ են»<sup>4</sup>: Սակայն Հալիլ բեյը բանակցությունների ժամանակ վերացական և խուսափողական պատասխան տվեց հայ դիվանագետների առանցքային և գործնական հարցադրումներին և, վկայակոչելով Բաթումի հաշտության դաշնագիրը, շեշտեց. «Դաշնագիրն արդեն ստորագրված է, պէտք է միայն տերությունները (Քառյակ միության պետությունները – Գ. Պ.) **նույնպէս ձևականորեն ստորագրեն**»<sup>5</sup> (վավերացնեն – Գ. Պ.): Այս հայտարարությունը, իհարկե, աննպատակ չէր: Դրանով Հալիլ բեյը հասկացնել տվեց հայ դիվանագետներին, որ օսմանյան Թուրքիան, համաձայն Բաթումի հաշտության դաշնագրով ամրագրված սահմանների և պայմանների, չի կարող տարածքային որևէ զիջում կատարել Հայաստանի Հանրապետությանը:

Հուլիսի 4-ին լրանում էր օսմանյան Թուրքիայի Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ ստորագրված Բաթումի հաշտության դաշնագրերը Կոստանդնուպոլսում վավերացնելու համար սահմանված մեկամսյա ժամկետը: Հունիսի 25-ին հայ դիվանագետներն այլ աղբյուրներից տեղեկացան, որ դաշնագրերի վավերացման քննարկումների «գլխաւոր կենտրոնը ներկայումս Բեռլինն է»<sup>6</sup>: Ուստի նույն օրը՝ երեկոյան, Կոստանդնուպոլսում հայկական պատվիրակությունը գումարեց խորհրդակցություն, որին ներկա էին նախագահ Ավ. Ահարոնյանը, անդամներ Ալ. Խատիայանը, Մ. Պապաջանյանը և պատվիրակության դիվանի կառավարիչ-առաջին քարտուղար Հ. Քոչարյանը: Առաջին նիստում Ալ. Խատիայանն առաջարկեց քննության դնել Բաթումի հաշտության դաշնագրի վավերացման խնդրի վերաբերյալ պատվիրակության դիվանագիտական մարտավարությունը, այսինքն՝

<sup>4</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 100:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 59:

**վավերացնելու կամ չվավերացնելու հարցը:** Երկարատև քննարկումների արդյունքում խորհրդակցությունը որոշեց. «Գրել կամ հեռագրել Բերլին մեր ներկայացուցիչներին և իմանալ նրանց կարծիքը, խնդրելով բանակցել այդ մասին գերման. պաշտ. շրջանների հետ:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է գտնում հեռագրով դիմել Թիֆլիզ՝ Ազգ. Խորհրդին և խնդրել անմիջապես ուղարկել պատգամաւորութեան անունով, յատուկ կուրիերով, **երկու թուղթ, որոնցից մեկով Ազգ. Խորհուրդը հաստատում է Բաթումի դաշնագիրը, իսկ միւսով մերժում է: Պատուիրակութիւնը կունենայ այդ երկու (պաշտոնական – Գ. Պ.) գրութիւնները իր ձեռքի տակ, և ապա, ամբողջ յետագայ իրադարձութիւնը ի նկատի ունենալով կօգտուի դրանցից մեկից կամ միւսից»<sup>7</sup>:**

Ինչպէս արդէն ասվել է, իրականում Բաթումի հաշտության դաշնագրերի վավերացումների հարցը դիվանագիտական ճանապարհով լուծելու այլընտրանք չկար, և այդպէս էլ դրանք ուժի մեջ չմտան: Ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունում Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, ղեկավարվելով տարածաշրջանում աշխարհաքաղաքական և տնտեսական շահերով, պահանջում էին դաշնակից օսմանյան Թուրքիայից՝ 1. հրաժարվել Բաթումի հաշտության դաշնագրերը վավերացնելուց, 2. տեղակայված թուրքական զորքերը ետ քաշել կովկասյան գրավված տարածքներից մինչև Կարս, Արդահան, Բաթում՝ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված սահմանները, 3. անհապաղ դադարեցնել տարածաշրջանում շարունակվող թուրքական ռազմական ներխուժումներն ու տարածքային բռնազավթումները: Այսուհանդերձ, Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարությունը բացահայտորեն հրաժարվել էր կատարել իր դաշնակիցների այդ պահանջները: Հարկ է նշել, որ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան թե՛ միմյանց միջև, թե՛ դաշնակից օսմանյան Թուրքիայի հետ Կովկասի գլխավոր խնդիրների շուրջ դեռևս համաձայնության չէին եկել:

Առաջին աշխարհամարտում Արևմտյան ռազմաճակատի գերմանա-թուրքական տարբեր խմբավորումների ռազմական նոր անհաջողություններով պայմանավորված՝ թուրքերը «հայեացքները ուղղած էին դեպի արեւելք, - գրում է Ալ. Խատիսյանը: - Կորսնցնելով Պալքանները, արաբական երկրները՝ յոյս ունէին թէ իբրեւ փոխհատուցում պիտի ստանան կենդանի ուժ եւ հող Կովկասի, Թուրքիստանի եւ պարսկական Ատրպատականի մէջ»<sup>8</sup>: Ստեղծված պայմաններում օսմանյան Թուրքիան ձգտում էր իրականացնել համաթուրանական ռազմավարական և մարտավարական երկու հիմնական ծրագրեր. «Առաջին՝ ենթարկել Կովկասը Թուրքիոյ, յենւելով մուսուլմանական մեծամասնութեան վրայ եւ իջեցնել հայերու եւ վրացիներու ուժը նւագագոյն չափի

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 84:

մը. տարածւիլ Թուրքիստանի վրա եւ Մակուի վրայով նորէն պարսկական Ատրպատականի վրա: Երկրորդ՝ ստեղծել Կովկասի մէջ կովկասեան պետութեանց զօրեղ դաշնակցութիւն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս – Գ. Պ.) մը եւ այսպիսով ուժեղ պատար մը առաջ բերել Թուրքիոյ դարեւոր թշնամիին՝ Ռուսիոյ դէմ: Թուրքերէն ոմանք կը ջանային այս երկու ծրագիրները միացնել. այդպէս էր օրինակ Հիւսէին Ճահիտ պէյը, որ կ'ուզէր ստեղծել կովկասեան զօրատր դաշնակցութիւն մը Թուրքիոյ հովանաւորութեան տակ»<sup>9</sup>:

Հայկական պատվիրակությունները շաբաթներ ու ամիսներ շարունակ գրեթէ տեղյակ չէին Կոստանդնուպոլսում և Բեռլինում անդրկուլիսային կամ բացահայտ դիվանագիտական ռազմավարական և մարտավարական սուր բախումների իրողություններին, որոնք գնալով ավելի ու ավելի էին թեժանում՝ պայմանավորված Առաջին աշխարհամարտում Քառյակ դաշինքի մոտալուտ պարտությամբ: Ա-Դոն վկայում է. «Կոնֆերանսը, որի համար հատկապէս եկել էին պատվիրակությունները, չէր կայանում. ինչու էին ձգձգվում, հասկանալի չէր լինում...»<sup>10</sup>:

Հայկական պատվիրակությունը հաջորդիվ դիվանագիտական այց կատարեց նաև օսմանյան Թուրքիայի արտաքին գործերի նախարար Նեսիմի և ներքին գործերի նախարար Ջանփոլադ բէյերին<sup>11</sup>՝ նրանց ներկայացնելով պատվիրակության Կոստանդնուպոլիս գալու նպատակները: Մակայն հայ դիվանագետների ներկայացրած գործնական պահանջները զանազան պատրվակներով չարժանացան թուրք նախարարների ուշադրությանը և քննարկմանը: Պատվիրակության անդամ Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ երկու նախարարների հետ դիվանագիտական հանդիպումները նույնպէս «շատ քիչ բան աւելացրին նախորդ տպաւորութիւններու վրա: Բոլոր թուրքերն ալ իրենց խոսակցութիւններուն մէջ շարունակ կը շեշտէին այն միտքը, թէ հայերն ու թուրքերը բաժանողը Անգլիան եւ Ռուսիան են, որոնք երկու հարեւան ժողովուրդները իրար հետ կուեցնելով պղտոր ջուրի մէջ ձուկ կ'որսան»<sup>12</sup>:

Օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական դեկլարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ դիվանագիտական հանդիպումներից և բանակցություններից բացի, հայկական պատվիրակությունը հանդիպեց մի շարք հասարակական, քաղաքական գործիչների հետ: «Նկատելով, որ մեր խորհրդաժողովը ձգձգումներու կենթարկւի, - գրում է Ալ. Խատիսյանը, - մենք կը ջանայինք գրաւել մեր կողմը Թուրքիոյ հանրային կարծիքը՝ աշխատելով ցոյց տալ թուրք հասարակական գործիչներուն, որ համաձայնութիւնը հայերու հետ թուրքերու համար ալ օգտակար է: Մեր պատճառաբանութիւնները հետեւեալներն էին.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 84-85:

<sup>10</sup> Ա-Դոն (Հովհաննէս Տէր-Մարտիրոսյան), Հայոյթյան երկունքը, Եր., 2019, էջ 543:

<sup>11</sup> Տէ՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 40, Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 84:

<sup>12</sup> Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 84:

Առանց ժխտելու մեր պրոպականտը արտասահմանի մեջ, ինչպես նաև հայասերներու գործունեությունը ամենուրեք, մենք կը յայտնեինք թէ այդ բոլորը պիտի շարունակվի ի վնաս թրքական վարկին, որքան ատեն որ հայկական հարցը լուծուած չէ գոհացուցիչ կերպով: Միւս կողմէ մենք կը խոստանայինք բարոյական աջակցութիւն Թուրքիոյ վերաշինութեան գործին մէջ, ցոյց կուտայինք, որ անկախ Հայաստանի, Վրաստանի եւ Ատրբէջանի գոյությունը ապահով սահմաններ կը ստեղծէ Թուրքիոյ համար...»<sup>13</sup>:

Հայ հրապարակախոս Տիգրան Զավենի ուղեկցությամբ հայկական պատվիրակությունն այցելեց թուրք հասարակական, քաղաքական հայտնի գործիչ Հուսէյին Բէյին: Հայ դիվանագետները նրան ներկայացրին Կոստանդնուպոլիս ժամանելու նպատակները: «Ան պատասխանեց մեզ, - գրում է Ալ. Խատիսյանը, - որ ինքը կառավարական կուսակցութեան չի պատկանիր եւ ընդդիմադիր մէկն է, ուստի հազիւ թէ կարողանայ գործնական օգտակարութիւն ցոյց տալ մեզ, բայց իբրև հանրային գործիչ մը ան անհրաժեշտ կը գտնէ գոհացում տալ հայերուն: Ան ըսաւ. «Դուք պէտք է ձեզ հաշիվ տաք եւ ըմբռնէք նաեւ մեր ազգային կենսական պահանջները»: Եւ սկսաւ մեզ ներկայացնել զանոնք: Վերցուց քարտէսը եւ սկսավ պարզել այն տեսութիւնը, թէ Թուրքիոյ մէջ պատերազմէն յետոյ հազիւ թէ 6 միլիոնէն անելի թուրքեր կը մնան: «Մեզ պէտք են կենդանի ուժեր, ըսաւ ան, **եւ հայերը պէտք չէ որ մեր ճամբան փակեն դէպի մեր եղբայրները**: Եւ ցոյց տուաւ երկու ճանապարհներ, որոնք կը տանին դէպի այդ եղբայրները. առաջին՝ **Զանգեզուր-Ղարաբաղ** (Սյունիք-Արցախ – Գ. Պ.) **ճամբան, եւ, երկրորդ՝ Ախալքալաք-Բորչալու գիծը**: «Աստուծոյ մէկն ու մէկը, եզրակացուց ան, պէտք է բաց մնայ մեզ համար, բայց ասոր զուգընթաց պէտք է որոշ գոհացում տալ նաեւ ձեզ»»<sup>14</sup>: Ինչպէս տեսնում ենք, Հուսէյին Բէյն առանց վարանելու վերահաստատում է, որ Օսմանյան կայսրության որդեգրած ազգայնական, համաթուրանական ծավալապաշտական ռազմավարությունն ու մարտավարությունը դարձել են Թուրքիայի պետական քաղաքականության առանցքը:

Թուրքիան այն հետևողականորեն շարունակում է մինչև մեր ժամանակները՝ պայմանավորված տարածաշրջանում ժամանակ առ ժամանակ աշխարհաքաղաքական զարգացումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախումների իրողություններով՝ հաստատելու իր ազդեցությունը Հարավային Կովկասից մինչև Կենտրոնական Ասիա, Չինաստան և այլն: Այսօր այդ ծրագրի իրականացման մի մասը Արցախի և Սյունիքի բռնազավթումն է Ադրբէջանի կողմից, որը ձգտում է կյանքի կոչելու Թուրքիայի անմիջական նախաձեռնությամբ ու ակտիվ օժանդակությամբ:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 85:



Կոստանդնուպոլսում թուրք հասարակական, քաղաքական այլ գործիչների հետ հանդիպումների ընթացքում թուրքերը հայկական պատվիրակությանը միշտ ընդունում էին առերես սիրավիրությանը՝ հավաստիացնելով, որ թուրքական իշխանություններն անկեղծ ցանկություն ունեն բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Հայաստանի Հանրապետության հետ: Մինչդեռ իրականությունն այլ էր: Թուրք գործիչները զանազան պատրվակներով հայ դիվանագետների հարցադրումներին շարունակ տալիս էին վերացական և խուսափողական պատասխաններ, սակայն հրամցնում էին նախապայմանապարտադրանք՝ հայկական կողմի զիջման գնով օսմանյան Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու կեղծ կարգախոսը: Իրականում, հայ-թուրքական բարեկամություն չի եղել և չէր կարող լինել, որովհետև Հայաստանի և Թուրքիայի շահերը տրամագծորեն հակադիր են:

Խորհրդաժողովի ձգձգման պայմաններում հունիսի 23-ից հուլիսի 3-ը հայկական պատվիրակությունը պարբերաբար փոխադարձ այցելություններ և հանդիպումներ ունեցավ նաև Կոստանդնուպոլսի թուրքական մամուլի հայտնի ներկայացուցիչների և թերթերի խմբագիրների հետ<sup>15</sup>: Օրինակ՝ հայկական պատվիրակությանն այցելեց «Վաքիթ» թերթի խմբագիր Էմին բեյը: Նա հավաստիացրեց հայ դիվանագետներին, որ «նոր ճամբաներ կը փնտռեր հայ-թրքական մերձեցման համար, - գրում է Ալ. Խատիսյանը, - ան բարեխղճօրեն ներկայացուց մեր պահանջները իր թերթին մեջ, **պաշտպանելով զանոնք, «առանց սակայն վնաս մը հասցուցած ըլլալու թրքական շահերուն»**»<sup>16</sup>: Թերթի հունիսի 27-ի համարում Էմին բեյը հրապարակեց «Հայաստանը» հոդվածը, որտեղ մասնավորապես ասում է. «... Հայկական հարցի ծագումը զրկում էր երկիրն (Թուրքիան – Գ. Պ.) ամենաարժեքավոր և ամենակարող տարրի օգնությունից: Ոչ ոք չի կարող ժխտել, որ հայերը բազում ծառայություններ են մատուցել մեր երկրում եվրոպական գաղափարների և հաստատությունների տարածմանը:

Զնայած մեր երկրի հասարակական կյանքում Հայկական հարցի ունեցած վատթար հետևանքներին, մենք հայերի հանդեպ որևէ թշնամանք չունեինք: Առ այսօր ի հայտ եկած բոլոր իրադարձությունները եղել են երկու կողմերի հսկողության բացակայության, ինչպես նաև օտարերկրացիների հրահրած գերլարվածության արդյունքը: Եթե այդչափ դառը փորձություններից հետո գործն ավարտի հասցվի երկու կողմերին պայմանավորվածության հանգեցնելով, և ամբողջ հարցը լրջորեն և վերջնականապես կարգավորելու ցանկության դրսևորմամբ, այդ կնշանակի, որ վերջ է տրվել օտարերկրյա մեքենայությունների ազդեցությանը: Լավագույն փաստը, որ մենք հայերի նկատմամբ որևէ

<sup>15</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:

<sup>16</sup> Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 86:

թշնամանք չենք տաձում, հենց այն է, որ մենք առաջիններն ենք քաջալերում հայկական անկախ պետության կազմավորումը: Այսօր մենք ուրախությամբ և ողջամտորեն սատարում ենք հայկական ձգտումները, որոնք դեռևս երեկ, մեր շրջանում համընդհանուր կասկածամտության պատճառն էին իրենց անհեթեթ և ցնորական տեսքով:

Հայերն առաջինները պետք է ըմբռնած լինեն այն չարիքները, որոնց հանգեցնում է հնազանդությունը սադրանքներին և անիրագործելի քմահաճույքներին: Նրանք հասկացել են, որ տերությունները, որոնք նրանց հրահրում էին, չունեին որևէ այլ շարժառիթներ, քան իրենց սեփական շահերը»<sup>17</sup>:

Կոստանդնուպոլսի մամուլի մյուս օրգանները հրապարակում էին բացառապես հակահայկական հոդվածներ: ««Թաավիրը Էֆքեարը» եւ «Ազգամը» բուռն կերպով հակառակ կ'արտայայտւէին մեզ»<sup>18</sup>, «Թուրքերը ոչինչ չեն տալիս և մամուլում միայն ողջունում են «Հայկական հարցի վերջնական լուծումը», վկայակոչելով, որ իրենք են ստեղծել Հայաստանը (անկախ պետականությունը – Գ. Պ.) և դրա համար էլ հարցն սպառված են համարում»<sup>19</sup>, - գրում է Ալ. Խատիսյանը:

Հուլիսի սկզբին ավարտվեցին հայկական պատվիրակության համարյա ամենօրյա առաջին դիվանագիտական հանդիպումներն ու բանակցությունները օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև հասարակական, քաղաքական մի շարք գործիչների, մամուլի հայտնի ներկայացուցիչների և թերթերի խմբագիրների հետ: Հայկական պատվիրակությունը դիվանագիտական բանակցային գործընթացների ժամանակ փորձեց արձարծել Բաթումի հայ-թուրքական հաշտության դաշնագիրը վերանայելու հարցը՝ նպատակ ունենալով համաձայնություն ձեռք բերել թուրքերի կողմից բռնագավթված հայկական պատմական հայրենիքի տարածքների մի մասը վերամիավորելու Հայաստանի Հանրապետությանը՝ կենսունակ պետություն ստեղծելու համար: Բայց հայ դիվանագետների ջանքերը զուր էին, նրանց ներկայացրած գործնական պահանջներին թուրքերը վերաբերվում էին հույժ զգուշավորությամբ, բացառապես սեփական շահախնդրական դիրքերից: Դրա վկայությունն էր բանակցությունների ընթացքում հայկական պատվիրակությանը հուզող բազմաթիվ հարցերին թուրքերի կողմից դիվանագիտական անորոշ պատասխաններ կամ մերժում ստանալը:

Պատվիրակության անդամ, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանը, ամփոփելով հայ դիվանագետների առաջին հանդիպումների և բանակցությունների արդ-

<sup>17</sup> «Մեծ տերությունները. Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)», հատոր II, աշխատասիրությամբ Ա. Պելեյրյանի, Եր., 2005, էջ 354:

<sup>18</sup> Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 86:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:

յունքները, գրում է. «Ընդհանուր առմամբ ուել դրական արդիւնք չտւին»<sup>20</sup>, «թուրքերը առամներ կը կրճտացնէին մեր դէմ, բայց ժպիտով ու անուշ հայեացքով կը խօսէին մեզ հետ»<sup>21</sup>: Այդ առնչությամբ ուշագրավ է նաև Ա. Խաչատրյանի հետևյալ իրատեսական գնահատականը. «Թուրք դիւանագիտութեան ընթացքն արդէն ծանօթ է մեզի, անոնց շոդում ու մեղրանուշ լեզուն ու համբաւ հանած հիւրասիրութիւնը խողրնակ համեմատութեան մէջ եղեր է միշտ իրենց իրական գործունէութեան հետ: Թուրքիան միշտ խոստացեր է ամէն բան, բայց կատարեր է ոչինչ, ամէնէն մտերիմ ու անուշ լեզուով կը խոսի, բայց կը գործէ ռիսէրիմ թշնամիի մը պէս: Այսպէս պիտի վարուէր և հայ պատւիրակութեան հետ. փառաւոր ընդունելութիւն, սիրալիր վերաբերում և խոստումներ, բայց իրականի մէջ ինչ կը տեսնուի»<sup>22</sup>:

Հուլիսի սկզբին թուրքական կողմի հետ առաջին հանդիպումներից և բանակցություններից հետո հայ դիվանագետներն ակնկալում էին, որ խորհրդաժողովը կսկսի աշխատանքները: Սակայն հայկական և կովկասյան մյուս պատվիրակություններին հայտնի դարձավ, որ խորհրդաժողովի գումարումը դարձյալ հետաձգվում է, և այն, հավանաբար, իր աշխատանքները կսկսի հուլիսի 15-ից ոչ շուտ<sup>23</sup>: Եվ այնուամենայնիվ, հայ դիվանագետներին շարունակ հասկանալի չէր, որ Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության դիվանագիտական մարտավարությունը նպատակաուղղված էր Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովի խափանմանը: Դրանով հայկական պատվիրակությունն ակնհայտորեն մղվում էր դիվանագիտական փակուղի: Չնայած Բեռլինի և Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակությունների մեծ ջանքերին՝ նրանք չունէին բանակցային գործընթացների վրա ներագդելու դիվանագիտական գործնական որևէ միջոց, ինչն անշուշտ պատահական չէր և պայմանավորված էր օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պատճառներով: Օրինակ՝ հիշատակության է արժանի Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանի հետևյալ գնահատականը. «Ե՛րբ եւ որտե՛ղ պէտք է նրանք իւրացնէին դիւանագիտական յարաբերութիւնների «նրբութիւնները», վարչական իշխանութեան պրտաքին մեքենականութիւնը եւ ներքին գաղտնածածուկ կողմերը: Ե՛րբ եւ որտե՛ղ պէտք է նրանք հմտանային այն բոլոր խարդախութիւնների, խորամանկութիւնների եւ խաբեբայութիւնների մէջ, որոնք ժամանակակից պետական գործիչների անհրաժեշտ յատկանիշներն են համարում, ... ուր սուտն ու կեղծիքը բացայայտօրէն դաւանում են իբրեւ

<sup>20</sup> Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 84:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>22</sup> Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Եր., ՀԱՄ, 2010, էջ 118-119:

<sup>23</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:

պետական իմաստութեան գերագոյն հրամայականներ, այլ եւ մնացած մեծ ու փոքր պետութիւնների մէջ, որոնք դեռ եւս բավականաչափ «պարկեշտութեան զգացում» ունին իրենց խաբէբայութիւնները թզե-նու տերելով ծածկելու համար...»<sup>24</sup>:

Խորհրդատուական ձգձգման պայմաններում թուրքական կողմը, դի-վանագիտական ճնշմանը զուգահեռ, այնպես էր անում, որ ժամանակը հայկական, ինչպէս նաև կովկասյան մյուս պատվիրակությունների ներ-կայացուցիչների համար «ձանձրալի» չլինէր: Օրինակ՝ հունիսի 30-ին օսմանյան Թուրքիայի արտաքին գործերի նախարարության հատուկ ներկայացուցիչներ Ռաուֆ (Տրապիզոնի բանակցություններում թուր-քական պատվիրակության նախագահ) և Մուխթար բեյերը հատուկ նա-վով նրանց հրավիրեցին շրջագայության «...օսմանյան բարձր նաւային դպրոցը Հալկի կղզու վրա. Ա. Ահարօնեան, Ա. Խատիսեան, զեն. Կորգա-նով (Կորգանյան – Գ. Պ.), Մ. Բունիաթեան, Գ. Խատիսեան և Յ. Քոչա-րեան, - ասվում է հայկական պատվիրակության օրագրության մէջ: – Ժամը 10-ին գնացին ... կղզիներ, ... ժամը 1-ին նախաճաշ ծովային դպրոցում, ապա այցելութիւն դպրոց: ... Թէլ շոգենաւի վրա»<sup>25</sup> և այլն:

Ակնհայտ է նաև, որ Կոստանդնուպոլսում, հունիսից սկսած, հայ-թուրքական փոխադարձ այցելությունների և բանակցությունների ժա-մանակ թուրքական կողմը շարունակ տարբեր պատրվակներով փոր-ձում էր խաթարել հայկական պատվիրակության դիվանագիտական աշխատանքը: Ա. Խաչատրյանը այդ առնչությամբ գրում է. «Թուրքերու առաջին գործն եղեր էր կղզիացնել պատիւրակութիւնը Մայր երկրէն, ուստի և ոչ մէկ լուր կամ հաղորդակցութիւն: Եւ այս շատ հասկանալի է. Հայաստանի մէջ կատարուածը հակադիր էր միանգամայն իրենց խոստումներուն և բնաւ չէր համապատասխանէր իրենց բարեկամա-կան վերաբերումին, ուստի պետք չէր, որ իմանային հայ պատիւրակ-ները՝ Պոլսում ադմուկ չհանելու համար»<sup>26</sup>:

Հարկ է նշել նաև, որ հայ-թուրքական բանակցությունների ընթաց-քում թուրքական կողմն առիթը բաց չէր թողնում հայկական պատվիրա-կությանը մշտապես պահելու դիվանագիտական և հոգեբանական ճնշումների ու խիստ վերահսկողության պայմաններում՝ դնելով նրա ա-ռաջ այս կամ այն նախապայման-պարտադրանքը: Օրինակ՝ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի՝ հուլիսի 14-ին Տրանսիայի նախարարների խորհրդի նախագահ (վարչապետ), ռազմա-կան նախարար Ժորժ Կլեմանսոյին ուղղված նամակը դարձավ թուրքա-կան կողմի շահարկումների լուրջ առիթ: Այդ նամակում Պողոս Նուբար փաշան գրում է. «Բոլշևիկյան դավաճանության շնորհիվ արևմտահայ նահանգները վերագրավելուց (1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի

<sup>24</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հուլիս, էջ 73:

<sup>25</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 44:

<sup>26</sup> Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 119:

հաշտության դաշնագրով - Գ. Պ.) հետո, նախքան անգլիացիների օգնության հասնելը, ջարդել է Կովկասի հայերին, և այժմ նրանք ստիպված են ենթարկվել Պոլսում գումարված կոնֆերանսի հարկադրական պայմաններին և սեղմվել մի փոքրիկ հանրապետության մեջ, որն իբրև թե անկախ է, սակայն, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Գերմանիայի ավատը:

Հայաստանի կոտորածներից ազատված մի բուռ հայեր՝ 25000 հոգի, այժմ մենակ են մնացել այդ ճակատամարտում, հուսահատական թափով և հարգանք հարկադրող քաջությամբ: 900 կամավորներից, որոնք պատերազմի սկզբից մտել էին օտարահպատակների լեգեոն, հազիվ հիսուն կովոդներ են մնացել: Մյուսները սպանվեցին ֆրանսիական ճակատում՝ ամենափառավոր գովեստների արժանանալով իրենց արիության և ռազմական հազվագյուտ հատկությունների համար:

Եգիպտոսից և Ամերիկայից եկած կամավորները կազմեցին Արևելքի լեգեոնի գումարտակներ և այս բուռերի ճանապարհ են կտրում դեպի Պաղեստին, ուր կովել են ֆրանսիական զորաշարքերում: Նրանք գնացին այն հույսով, որ դաշնակիցները կնպաստեն վերջապես իրենց հայրենիքի ազատագրմանը:

Բայց նրանք, նրանց Վանի ու Էրզրումի կովոդ եղբայրները, ինչպես և բոլոր հայերը հուսալքման այս օրերին կարոտ են Ձեր խրախուսող մեկ խոսքի, Ֆրանսիայի քաջալերության խոսքին: Ահա այս է իմ խնդրանքը»<sup>27</sup>:

Ժ. Կլեմանսոն, հուլիսի 23-ին արձագանքելով Պոդոս Նուբարի նամակին, գրում է. «Թվելով ձեր հայրենակիցների հերոսական ընթացքը՝ Դուք պահանջում եք ինձնից օգտվել մի առիթից՝ խրախուսելու նրանց ճիգերը և հայտարարելու, որ Պոլսի կոնֆերանսի հարկադրական պայմանները չեն ընդունվելու Հանրապետության (Ֆրանսիայի - Գ. Պ.) կառավարության կողմից: Ֆրանսիան, ճնշված անարդարությունների երեսից, իր դրոշակի վրա արձանագրել է ճնշված ազգերի ազատագրումը: Եվ լինելով ավանդական պաշտպան այդ ժողովուրդների, շատ անգամ իր համակրանքն է ցույց տվել հայերի նկատմամբ: Ու այսօր տոգորված է նրանց օգնության գալու տենչով:

Հայերի անձնագոհ ոգին, նրանց հավատարմությունը Դաշնակիցների հանդեպ օտարահպատակների լեգեոնում, Կովկասյան ճակատում և Արևելյան լեգեոնում, ամրապնդել է այն կապը, որ նրանց միացնում է Ֆրանսիային: Ես բախտավոր եմ ձեզ հավատացնելու, որ Հանրապետական կառավարությունը չի դադարել հայ ազգը դասելու այն ժողովուրդների թվում, որոնց ճակատագիրը հույս ունեն կարգավորել մարդասիրության և արդարության գերագույն օրենքների համաձայն»<sup>28</sup>:

<sup>27</sup> ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 80, թ. 306, «Մեծ տերությունները. Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)», հատոր II, էջ 336-337, Ա-Ղո, նշվ. աշխ., էջ 544:

<sup>28</sup> «Մեծ տերությունները...», էջ 337:

Հուլիսի 25-ին ֆրանսիական բոլոր թերթերը տպագրեցին Պողոս Նուբար փաշայի նամակը՝ հասցեագրված Ժ. Կլեմանսոյին, և վերջինիս պատասխանը: Թուրքական բոլոր թերթերն արտատպել էին այդ լուրը, որը «հայկական պատվիրակությունների համար բազմաթիվ անսխոր-ժությունների և հարձակումների պատճառ դարձավ թե՛ Բեռլինում, թե՛ Կոստանդնուպոլսում»<sup>29</sup>:

Օգոստոսի 21-ին օսմանյան Թուրքիայի ռազմական նախարարության քաղաքական բաժնի պատասխանատու Համի բեյն այցելեց Ալ. Խատիսյանին՝ իբրև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի և պատվիրակության անդամի<sup>30</sup>: Հաջորդ օրը օգոստոսի 22-ի երեկոյան, պատվիրակության խորհրդակցության 15-րդ նիստում Ալ. Խատիսյանը քննարկման դրեց նախընթաց օրվա գրույցի ընթացքում Համի բեյի ներկայացրած նախապայման-պարտադրանքը: Ըստ Ալ. Խատիսյանի՝ նա շատ հուզված էր խոսում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կողմնորոշման մասին ու հայտնեց, որ Թուրքիայի ռազմական նախարարության քաղաքական բաժինը և առհասարակ թուրքական ազդեցիկ շրջանները շատ դժգոհ են, որ Պողոս Նուբար փաշան ամբողջ հայ ժողովրդի անունից դիմել է Ժ. Կլեմանսոյին: Համի բեյն ասել էր նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը չորս ճակատի վրա է գործում՝ Անտանտի, Գերմանիայի, Թուրքիայի, բոլշևիկյան Ռուսաստանի՝ աշխատելով բոլորին սիրաշահել: Դրանից առաջանում է անվստահությունն դեպի հայերը, **ուստի պատվիրակությունը պիտի որոշակի հայտարարի, որ Պողոս Նուբար փաշան լիազորված չէ խոսելու Հայաստանի Հանրապետության անունից**<sup>31</sup>: Հայ դիվանագետները մտահոգված էին, որ եթե այդ նամակն անպատասխան մնա պատվիրակության կողմից, ապա թուրքական խորհրդարանը կարող է վերջնականապես կասեցնել Առաջին աշխարհամարտի տարիներին հայրենագրված փախստական հայերի և ռազմագերիների վերադարձը հայրենի օջախներ, ինչպես նաև Արցախի, Սյունիքի և բազմաթիվ այլ հարցերի շուրջ բանակցությունները<sup>32</sup>:

Քննարկումների արդյունքում պատվիրակության խորհրդակցությունը միաձայն որոշեց. «Կարևոր է մի կերպով տալ բացատրություն հետաքրքրուող շրջանների համար՝ այն մտքով, որ ֆրանսիական լրագրներում երևացած լուրը Նուբար փաշայի Կլիմենսոյին արած դիմումի մի մասին, արտատպուելով տեղական թերթերի մեջ առաջ է բերել թիւր կարծիքներ և եզրակացութիւններ, **ուստի դրանց առաջն առնելու հա-**

<sup>29</sup> Туманян М. Дипломатическая история Республики Армения (1918-1920 гг.), Национальный архив Армении, Ер., 2012, с. 50.

<sup>30</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 121:

<sup>31</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 121, ց. 2, գ. 12, թ. 45, Ա-Ղ, նշվ. աշխ., էջ 545:

<sup>32</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 45:

մար պատուիրակութիւնը յայտարարում է, որ Հայկական կառավարութեան կողմից որևէ յայտարարութիւններ անել կարող են միայն այն անձինք և պատուիրակութիւնները, որոնք յատկապէս լիազօրուած են նրա կողմից, և որ Նուպար փաշան Հայկ. կառավարութեան անունից յայտարարութիւններ անելու լիազօրուած չէ»<sup>33</sup>: Իբրև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար և պատվիրակության անդամ Ալ. Խատիսյանը օգոստոսի 30-ին Կոստանդնուպոլսի մամուլին տված հարցազրույցի միջոցով, որպէս պատասխան թուրք պաշտոնյայի հարցումի՝ հայտարարեց, որ հանրապետության պաշտոնական ներկայացուցիչներն են միայն լիազորված պատասխանատու հայտարարություններ անելու: Ըստ այդմ՝ Նուբար փաշան, քանի որ չունի Հայաստանի Հանրապետության մանդատը, նրա արած հայտարարությունը չի կարելի ընդունել Հայաստանի Հանրապետության անունից<sup>34</sup>:

Այսպիսով, հայկական պատվիրակության առաջին դիվանագիտական հանդիպումներն ու բանակցությունները օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական դեկավարության բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպէս նաև հասարակական, քաղաքական մի շարք գործիչների, մամուլի հայտնի ներկայացուցիչների և թերթերի խմբագիրների հետ Հայկական հարցի լուծման համար բարենպաստ ընթացք չունեցան: Թուրքերը հայկական կողմին հուզող հարցերին տալիս էին դիվանագիտական անորոշ կամ խուսափողական պատասխաններ կամ մերժում դրանք: Հաճախ էլ տարբեր պատրվակներով դիվանագիտական ճնշումներ էին բանեցնում հայկական պատվիրակության անդամների վրա:

**ГЕГАМ ПЕТРОСЯН – Переговоры делегации Республики Армения с турецкими политическими и государственными деятелями и представителями печати в Константинополе (июнь-июль 1918 г.).** – В статье анализируется деятельность делегации Республики Армения, находившейся в Константинополе с 22 июня по 3 июля 1918 г., оценивается эффективность переговоров с турецкими властями относительно решения армянского вопроса. В этой связи особо выделяются дипломатические шаги армянской делегации, целью которой было продолжение предыдущих дипломатических встреч и переговоров с высокопоставленными лицами военно-политического руководства Османской Турции и рядом других министров. В статье также рассматривается, что первые дипломатические встречи и переговоры армянской делегации с высокопоставленными лицами военного и политического руководства Османской Турции и известными представителями прессы не имели благоприятного течения для решения армянского вопроса. Было очевидно, что турки давали расплывчатые или уклончивые дипломатические ответы на волнующие армянскую сторону вопросы или отвергали их. Они часто под разными предлогами оказывали дипломатическое давление на членов армянской делегации.

**Ключевые слова:** делегация Республики Армения, Армянский вопрос, турецкие власти, дипломатические переговоры, западноармянские административные территории

<sup>33</sup> Նույն տեղում, թ. 46:

<sup>34</sup> Տե՛ս Ա.Ռ., նշվ. աշխ., էջ 545-546, Մ. Կումանյան, նշվ. աշխ., էջ 50:

**GEGHAM PETROSYAN – *Negotiations of the Delegation of the Republic of Armenia with Turkish Political and State Figures and Press Representatives in Constantinople (June-July 1918)***. – The article analyzes the activities of the delegation of the Republic of Armenia, which was in Constantinople from June 22 to July 3, 1918, evaluates the effectiveness of negotiations with the Turkish authorities regarding the solution of the Armenian Question. In this regard, the diplomatic steps of the Armenian delegation are highlighted, the purpose of which was to continue previous diplomatic meetings and negotiations with high-ranking officials of the military-political leadership of Ottoman Turkey and a number of other ministers. The article also considers that the first diplomatic meetings and negotiations of the Armenian delegation with high-ranking officials of the military and political leadership of Ottoman Turkey and well-known representatives of the press did not have a favorable course for resolving the Armenian Question. It was obvious that the Turks gave vague or evasive diplomatic answers to questions of concern to the Armenian side or rejected them. They often exerted diplomatic pressure on the members of the Armenian delegation under various pretexts.

**Key words:** *delegation of the Republic of Armenia, Armenian Question, Turkish authorities, diplomatic negotiations, Western Armenian administrative territories*



**ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՉՍՏԱՑՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
«ԹՈՒՐԿ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՇՏԵՑՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ» (1922-1927 թթ.)**

**ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

Հայ-թուրքական լարված հարաբերությունների ծիրում հասկապես 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին արձանագրվել են հասարակական-քաղաքական և դիվանագիտական երկխոսության մի քանի փորձեր: Մակայն հայաստանյան գիտական և քաղաքական շրջանակներում շատ քիչ է արձարծվել հայ-թուրքական հասարակական-քաղաքական երկխոսության մի փորձ, որն արձանագրվել է 1920-ականներին, երբ ծավալվում էր Թուրքիայի Հանրապետության ձևավորման և կայացման ռազմա-քաղաքական գործընթացը: Սույն հոդվածում ներկայացվելու և քննարկվելու է հայ-թուրքական հանրային երկխոսության առաջին, եթե կարելի է ասել, կանոնակարգված օրինակը: Մակայն, ի սկզբանե պետք է շեշտել, որ այդ ամենը ունեցել է իրավիճակով պարտադրված, արհեստական բնույթ, ուստի և այն կարելի է տեղավորել քաղաքական պատեհապաշտության, հարմարվողականության շրջանակներում: Երկխոսության այդ փորձը թուրքական կողմից ընկալվել է բացառապես որպես միջազգային ասպարեզում և տվյալ ժամանակաշրջանում ընթացող բանակցություններում իրենց հակահայկական թեզերն ավելի ամրապնդելու միջոց: Այդ ամենին ակտիվորեն մասնակցած հայերն իրենց հրապարակային հայտարարություններով ու քայլերով ոչ միայն վնաս են հասցրել միջազգային ասպարեզում հայկական շահերին, այլև անգամ չեն կարողացել մեղմել Թուրքիայում գոյատևած հայության փոքրաթիվ խմբերի հանդեպ թուրքական շարունակվող հալածանքի քաղաքականությունը: Կարծում ենք, որ հայ-թուրքական շփման այս փորձի ուսումնասիրումը կարող է հետաքրքրություն ներկայացնել ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական և դիվանագիտական հարաբերություններում:

*Բանալի բառեր – հայ-թուրքական երկխոսություն, Մուսթաֆա Քեմալ, Չավեն պատրիարք, Մտամբուլի հայ համայնք, քեմալականներ, Հայոց ցեղասպանություն, Թուրքիայի Հանրապետություն, Լոզանի պայմանագիր*

Եթե փորձենք նախ համառոտ ներկայացնել այդ ժամանակվա Թուրքիայում կամ դե յուրե Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող կարևորագույն ռազմաքաղաքական զարգացումները, ապա պետք է առանձնացնենք 1919 թ. մայիսին թուրք զենեքալ Մուսթաֆա Քեմալի ղեկավարությամբ սկիզբ առած շարժումը, որը, իր շուրջը համախմբելով երկրի քաղաքական և ռազմական որոշակի ուժերի, ծավալեց պայքար

ընդդեմ կայսրությանը պարտության մատնած պետությունների, սակայն հիմնական թիրախ ընտրվեցին ոչ թե եվրոպական հաղթած տերությունները, այլ հայերն ու հույները, ինչպես նաև Հայաստանն ու Հունաստանը: Շարժման ծավալումից որոշ ժամանակ անց Օսմանյան կայսրությունում ձևավորվեց դե ֆակտո երկիշխանություն. մի կողմից մայրաքաղաք Ստամբուլում պահպանվող սուլթանական ձևական և ինքնուրույնությունից զուրկ կառավարությունն էր՝ սուլթան Մեհմեթ VI-ի գլխավորությամբ, իսկ մյուս կողմում՝ Անկարայում կենտրոնացած գեներալ Մուսթաֆա Քեմալի ապստամբական շարժումը: Կարճ ժամանակ անց Քեմալի գլխավորած շարժումը սկսեց հաջողություններ արձանագրել ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքական ու դիվանագիտական հարթություններում, և արդեն պարզ էր, որ երկրում դե ֆակտո իշխանությունը անցել է քեմալականների ձեռքը, որի դե յուրե ամրագրումը տեղի էր ունենալու 1923 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիայի Հանրապետության հռչակումով և Մուսթաֆա Քեմալի նախագահ ընտրվելով: Մինչ այդ լուծարվելու էր սուլթանությունը, և վերջին սուլթան Մեհմեթ VI-ը լքելու էր երկիրը:

Այս զարգացումներին զուգահեռ՝ որոշակի գործընթացներ էին տեղի ունենում նաև Ստամբուլում բնակվող և ցեղասպանությունից խուսափած կամ այդ արհավիրքը վերապրած հայության շրջանում: Եթե մինչև քեմալականների հաջողությունները Կոստանդուպոլսի Հայոց պատրիարքությունը և աքսորից վերադարձած պատրիարք Ջավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը որոշ քայլեր էին ձեռնարկում Հայոց ցեղասպանությունից փրկված հայերին աքսորավայրերից վերադարձնելու, մուսուլմանական տներում ու հարեմներում գերության մեջ հայտնվածներին գտնելու և համայնքային կյանքին վերաինտեգրելու ուղղությամբ, ապա վիճակը էականորեն փոխվում է քեմալական շարժման ծավալման և հաղթանակի հասնելուց հետո: Քեմալականներն ի սկզբանե բացասական վերաբերմունք են դրսևորում Ջավեն պատրիարքի նկատմամբ նրա հայահավաք գործունեության պատճառով, իսկ իշխանության հասնելուց հետո նրանց մոտեցումները էլ ավելի կոշտ են դառնում: Մասնավորապես՝ 1922 թ. նոյեմբերին որպես Անկարայի կառավարության ներկայացուցիչ Ստամբուլ է այցելում Մուսթաֆա Քեմալի մտերիմ զինակից գեներալ Ռեֆեթը (Բելե) և հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը հստակ հայտարարում, որ Հայոց պատրիարք Ջավեն Տեր-Եղիայանը անցանկալի անձ է քեմալականների համար, և նա պարտավոր է հեռանալ Թուրքիայից: Թեև մինչ այդ Ջավեն պատրիարքը, թերևս հաշվի առնելով ձևավորված նոր քաղաքական իրողությունները և առաջնորդվելով իր գլխավորած համայնքը լրացուցիչ հավաժանքներից հեռու պահելու ցանկությամբ, սկսում է քեմալական իշխանությունների հետ հարաբերություններ հաս-

---

<sup>1</sup> St' u Ekmekcioglu L., *Recovering Armenia: the Limits of Belonging in Post-Genocide Turkey*, Stanford, 2016, էջ 90-91:

տատելու փորձեր անել և քաղաքավարական հանդիպումներ ունենալ նրանց հետ<sup>2</sup>, սակայն այդ ամենը դրական արդյունք չի տալիս: Ցավալիին այն է, որ Ռեֆեթ փաշայի պահանջից հետո հայ համայնքում սկսվում է հալածանքի արշավ Հայոց պատրիարքի դեմ՝ համայնքի ազդեցիկ գործիչների մասնակցությամբ և կազմակերպմամբ, որոնց գլխավորում էր հետագայում Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր դարձած տխրահոչակ Պերճ Քերեպեջյանը: Տարատեսակ հալածանքների հետևանքով Չավեն պատրիարքը 1922 թ. դեկտեմբերի 10-ին ի վերջո լքել է Թուրքիան. նրանից կարճ ժամանակ անց նմանատիպ պարտադրանքների պատճառով Ստամբուլը լքել է նաև Կոստանդնուպոլսի Հունաց պատրիարք Մելետիոս Մետաքսակիսը<sup>3</sup>:

Ծագումով Թուրքիայից ամերիկահայ պատմաբան Լ. Էքմեքչիօղլուն իր ուշագրավ հոդվածում Չավեն պատրիարքի հանդեպ քեմալականների անհանդուրժողական վերաբերմունքը բացատրում է ոչ միայն 1918-1922 թթ. հայահավաք աշխատանքներում նրա դրսևորած համարձակությամբ, այլև մեկ այլ հանգամանքով: Այսպես, Ռեֆեթ փաշան ավելի վաղ պահանջել է, որ Հայոց պատրիարք Չավեն Տեր-Եղիայանը Թուրքիայի հայերի անունից հեռագիր հղի Լոզան, որտեղ ընթանում էին բանակցություններ աշխարհի տարբեր պետությունների ու քեմալական Թուրքիայի միջև, և քննարկվում էր նաև Թուրքիայում գոյատևած հայերի ու նրանց կարգավիճակի հարցը: Քեմալականների կողմից ակնկալվող հեռագրում Հայոց պատրիարքը պետք է նշեր, որ Թուրքիայի հայերը «չեն սատարում Նորատունկյանին»<sup>4</sup>: Խոսքը դիվանագետ Գաբրիել Նորատունկյանի<sup>4</sup> մասին է, որը Լոզանում հայության անունից պահանջում էր Թուրքիայում ստեղծել, ըստ էության, հայկական ինքնավարություն՝ «Հայկական ազգային օջախ» անունով: Բնականաբար, քեմալականները կտրուկ դեմ էին այդ գաղափարին և Հայոց պատրիարքից նման բովանդակությամբ հեռագիր կորզելու պարագայում առաջ կքաշեին այն թեզը, որ Նորատունկյանի գլխավորած հայկական պատվիրակությունն իբրև թե չի ներկայացնում Թուրքիայի հայերի շահերը: Չնայած տարատեսակ ճնշումներին՝ երջանկահիշատակ Չավեն պատրիարքը հրաժարվել է անել այդ քայլը<sup>5</sup>: Քեմալական-

<sup>2</sup> Տե՛ս «Ժողովրդի ձայն-Ժամանակ», Ստամբուլ, 09.11.1922:

<sup>3</sup> Տե՛ս **Էքմեքչիօղլու Լ.**, *Kalanlar: Savaş Sonrasında ve Tek Parti Döneminde İstanbul Ermeni Cemaati // 1915: Siyaset, Tehcir, Soykırım (Hazırlayanlar: Fikret Adanır, Oktay Özel)*, İstanbul, 2015, էջ 544-545:

<sup>4</sup> Գաբրիել Նորատունկյանը սերում է Օսմանյան կայսրության հայ հայտնի գերդաստաններից և եղել է ժամանակի լավ կրթություն ստացած դիվանագետներից: Ի թիվս այլ պաշտոնների՝ 1912 թ. նա զբաղեցրել է Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի պաշտոնը, իսկ 1913-ից ընտանյոք հանդերձ հաստատվել է Եվրոպայում: Պողոս Նուբար փաշայի մահից հետո եղել է Հայ ազգային պատվիրակության ղեկավար ու 1923 թ. մասնակցել Լոզանի բանակցություններին: Գաբրիել Նորատունկյանի մասին մանրամասն տե՛ս **Ջ. Ստեփանյան**, Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Եր., 2012, էջ 263-265:

<sup>5</sup> Տե՛ս **Էքմեքչիօղլու Լ.**, *Mecbur: Mıgırdıç Agob'un "Türkiye Ermenileri" Risalesi (1922) // 1915: Siyaset, Tehcir, Soykırım (Hazırlayanlar: Fikret Adanır, Oktay Özel)*, İstanbul, 2015, էջ 555:

ների վերոնշյալ պահանջը, սակայն, շուտով իրականանալու էր, բայց այլ ուժերի օգնությամբ:

Թուրքիայում քեմալականների կողմից իշխանությանը տիրանալուց և Հայոց պատրիարքին պարտադրաբար հեռացնելուց հետո Ստամբուլի հայերի մի որոշակի շրջանում ավելի մեծ թափ են ստանում նոր քեմալական իշխանություններին հաճոյանալու փորձերը: Ահա այդ մթնոլորտում 1922 թ. դեկտեմբերի 24-ին Ստամբուլում ձևավորվում է «Թուրք-հայկական հաշտեցման միություն» (Türk-Ermeni Teâli Cemiyeti) անվանումով հասարակական կազմակերպությունը, որին անդամակցում են հայ և թուրք հասարակական գործիչներ, ճանաչված մարդիկ<sup>6</sup>: Սակայն այդ միությունն ունի նախապատմություն. դեռևս 1919 թ. սեպտեմբերի 28-ին Ստամբուլում գործող հայկական Կարապետյան վարժարանի շրջանավարտների կողմից հիմնադրվել է «Կարապետյանի շրջանավարտների միություն» անունով մի կառույց, որն էլ 1922 թ. հոկտեմբերի 24-ին տեղի ունեցած ընդհանուր ժողովում անվանափոխվել է և դարձել «Թուրք-հայկական հաշտեցման միություն»<sup>7</sup>: Շրջանավարտների այս միության և՛ ստեղծումը, և՛ անգամ ստեղծման ժամանակահատվածը որոշ մասնագետներ իրավացիորեն համարում են ոչ պատահական: Այսպես, ստամբուլահայ ուսումնասիրող և թարգմանիչ Միլվարթ Մալհասյանը հիմնավոր կարծիք է հայտնում, որ «Կարապետյանի շրջանավարտների միություն»-ը ստեղծվել է քեմալական շարժման հաջողությունների ազդեցությամբ<sup>8</sup> և որոշակի քաղաքական նպատակներով: Եթե նկատի ունենանք, որ «Կարապետյանի շրջանավարտների միություն» անվամբ կառույցն ի սկզբանե ուներ դրական մոտեցում քեմալական ազգայնամտական շարժման նկատմամբ, ապա Ս. Մալհասյանի տեսակետը ավելի հիմնավորված կարելի է համարել:

«Թուրք-հայկական հաշտեցման միության» համահիմնադիրներն էին ժամանակի Թուրքիայի հայ և թուրք հայտնի, կրթված մարդիկ՝ բժիշկներ, ուսուցիչներ, առևտրականներ, գրողներ, պետական ծառայողներ՝ Պետրոս Ջեփի Կարապետյանը, Օմեր Ազիզը, Նուբար Թոզանը, Արմենակ Չուբուքյանը, Մեսութ բեյը, Շնորհք Բերբերյանը, Գևորգ Ֆիթինը (Ֆաթին), Մեհմեթ Ջեմիլ բեյը, Բուրհան բեյը, Պերճ Քերեսթեջանը, Միհրան Բոյաջյանը, Իսթեփան Գուրդիկյանը, Իսթեփան Քարայանը, Աբդուրրահման Շերեֆ բեյը, Մուսթաֆա Ռեշիթ բեյը և ուրիշներ<sup>9</sup>: Հարկ է հատուկ շեշտել, որ «Թուրք-հայկական հաշտեցման միության»

<sup>6</sup> Տե՛ս **Hür A.**, Öteki Tarih II: Mondros'tan İzmir Suikastı Davası'na, İstanbul, 2013, էջ 301:

<sup>7</sup> Տե՛ս **Ulu C.**, Türk-Ermeni Teâli Cemiyeti ve Nizamnamesi, Ermeni Araştırmaları, Ankara, 2004, Cilt 3-4, Sayı 12-13, էջ 148:

<sup>8</sup> Տե՛ս **Malhasyan S.**, “İstanbul’da 1922 Yılında Kurulan Türk-Ermeni Teâli Cemiyeti ve Faaliyetleri”, İstanbul Üniversitesi Atatürk İlkeleri ve İnkilâp Tarihi Enstitüsü, Yayınlanmamış Yüksek Lisans Tezi, İstanbul, 2005, էջ 14:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 31, տե՛ս նաև **Ekmekçioğlu L.**, Mecbur: Mıgırdıç Agob'un "Türkiye Ermenileri" Risalesi (1922), էջ 556-557:

հայ հիմնադիրներն ու ղեկավարները բոլորն էլ, ըստ էության, իշխանամետ (թուրքամետ) դիրքորոշում ունեցող մարդիկ էին: Օրինակ՝ Կարապետյան վարժարանի հիմնադիր Պետրոս Զեքի Կարապետյանը ժամանակի ամենահայտնի մանկավարժներից էր և թուրքերենի/օսմաներենի փայլուն գիտակներից<sup>10</sup>: Մակայն կա շրջանառվող վարկած առ այն, որ Պետրոս Զեքի Կարապետյանը իր մի քանի ընկերների հետ համագործակցել է արդեն փախուստի մեջ գտնվող երիտթուրք պարագլուխների կողմից ստեղծված ուժային գաղտնի ծառայության «Քարաքոլի» հետ<sup>11</sup>, որը քեմալական ազգայնամոլական շարժմանը ապահովում էր զենքով, զինյալներով և ռազմահետախուզական տեղեկատվությամբ: Հետագայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր դարձած Պերճ Քերեսթեջյանը<sup>12</sup>, ըստ տարբեր աղբյուրների, նույնպես ընդգրկված է եղել «Քարաքոլի» շարքերում<sup>13</sup> և տարաբնույթ աջակցություն ցույց տվել թե՛ այդ կառույցին և թե՛ քեմալական ազգայնամոլական շարժմանը:

Հայ-թուրքական այս միության անվանումը որոշակի տարընթերցումների առիթ է տալիս ու տարբեր աղբյուրներում և ուսումնասիրություններում տարբեր կերպ է մեկնաբանվում ու թարգմանվում: Այսպես, թուրքերեն *teali*-ն բառացի թարգմանությամբ նշանակում է բարձրացում, սակայն հանդիպում են հիշյալ կառույցի անվանման հայերեն մի քանի տարբերակներ՝ «Թուրքեհայ *Մտավորական* ընկերացություն»<sup>14</sup>, «Թուրքեհայ *Բարձրացման* միություն»<sup>15</sup>, «Թուրք և հայ միություն»<sup>16</sup>, իսկ երբեմն էլ «Հայ-թուրքական *բարեկամության* միություն» կամ «Թուրք և հայ *մտավորականների* միություն»: Անվանման այս ոչ հստակ պատկերը դրսևորվում է անգամ միության հրապարակած պաշտոնական հայտարարություններում. սկզբնական շրջանում կիրառվում է մտավորական թուրքերեն *aydin*, իսկ ավելի ուշ՝ բարձրացում *teali*, բառը: Մեր կարծիքով՝ միության թուրքերեն անվանման բառացի թարգմանությունը չի կարող արտացոլել կառույցի բուն գործունեության նպատակը, ուստի անհրաժեշտ է անվանումը բխեցնել նպատակից: Եվ եթե առաջնորդվում ենք այդ միության հռչակած նպատակների տրամաբանությունից, ապա դրա անվանումը կարող է

<sup>10</sup> Պետրոս Զեքի Կարապետյանի մասին մանրամասն տե՛ս **Հ. Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 55:

<sup>11</sup> Տե՛ս **Սու Շ.**, նշվ. աշխ., էջ 147, տողատակի ծանոթ. 19, մեջբերված՝ **Öke M. K.**, Ermeni Sorunu 1914-1923, Ankara, 1991, էջ 194-195:

<sup>12</sup> Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավորների մասին առավել մանրամասն տե՛ս **Ռ. Մելքոնյան**, Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960 թթ.) // Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2012, հ. 7, էջ 166-186:

<sup>13</sup> Տե՛ս **Hiçyılmaz E.**, Türk Devrim'nde Bir Gizli Örgüt Karakol, İstanbul, 2012, էջ 349:

<sup>14</sup> Տե՛ս «Ժողովրդի ձայն-Ժամանակ», Ստամբուլ, 01.01.1923:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, 20.05.1923:

<sup>16</sup> Տե՛ս «Մարմարա», Ստամբուլ, 15.04.1926:

թարգմանվել բարեկամության կամ հաշտեցման միություն, քանի որ հարաբերությունների բարձրացում, ըստ էության, նշանակում է հարաբերությունները հաշտեցման և բարեկամության վերածել կամ հասցնել: Ուստի նպատակահարմար ենք համարում կիրառել «Թուրք-հայկական հաշտեցման միություն» ձևակերպումը:

Միության 1922 թ. համագումարում ընդունվում է 70 հոդվածից բաղկացած կանոնադրություն, որտեղ նշված են կառույցի հիմնական նպատակները և գործունեության ուղղությունները: «Թուրք-հայկական հաշտեցման միության» կանոնադրությունը, որի օսմաներեն բնօրինակը 15 էջ է<sup>17</sup>, բաղկացած է 14 բաժնից: Այդ բաժիններն են՝ «Միության պատմական հիմքը», «Միության հիմնադիրները», «Միության նպատակն ու ձգտումները», «Անդամակցությունը», «Անդամակցության պայմանները», «Հասարակական հիմունքներով ղեկավարներ», «Գլխավոր տեսուչներ և տեսուչներ», «Ղեկավար մարմին», «Գլխավոր կոմիտե», «Ղեկավար մարմնի կազմի պարտականությունները», «Հարկահավաք պաշտոնյա», «Միության եկամուտները», «Բաժիններ», «Միության հարաբերությունները կառավարության հետ»<sup>18</sup>:

Կանոնադրության «Միության նպատակն ու ձգտումները» բաժնում նշվում է, որ միության նպատակներից են նպաստել թուրք և հայ հասարակությունների միջև բարեկամական և անկեղծ հարաբերությունների զարգացմանը, աջակցել կարիք ունեցող աշակերտների և ուսանողների կրթությանը, նպաստել նաև Եվրոպայում կրթություն ստանալուն կամ շարունակելուն: Հատուկ շեշտվում է, որ կարևորում են երիտասարդական, կրթական այնպիսի ծրագրերին նպաստելը, որոնք միտված կլինեն «լավ հայ քաղաքացու ձևավորմանը»<sup>19</sup>: Միությունն ուներ համանախագահներ՝ մեկը՝ հայ, մյուսը՝ թուրք, որոնք աշխատում էին հասարակական հիմունքներով և պետք է լինեին որոշակի ճանաչման ու դիրքի հասած հարգարժան մարդիկ: Միության կառավարման խորհուրդը բաղկացած էր 12 անձից, որոնցից 6-ը՝ հայ, 6-ը՝ թուրք, իսկ կառույցի պատվավոր նախագահներ են ընտրվել Պերճ Քերեթեջյանը և Իսմայիլ Մուշթաքը<sup>20</sup>:

Կանոնադրության 59-րդ հոդվածով նախատեսվում էր Ստամբուլի հայերով բնակեցված տարբեր թաղամասերում բացել միության մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ՝ «Թուրքահայության շրջանում ճշմարիտ բարեկամության շարունակականությունն ապահովելու նպատակով»<sup>21</sup>: Միությունն իր աներկբա աջակցությունն էր հայտնում քեմալականներին և նույնիսկ կանոնադրության մեջ շեշտում, որ

<sup>17</sup> St' u Türk-Ermeni Teali Cemiyeti Nizamname-i Esasiyeti, İstanbul, 1922:

<sup>18</sup> St' u Ulu C., նշվ. աշխ., էջ 148:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 146:

<sup>20</sup> St' u Malhasyan S., նշվ. աշխ., էջ 20:

<sup>21</sup> Ulu C., նշվ. աշխ., էջ 156:

իր անդամ կարող են դառնալ միայն այն մարդիկ, որոնք Թուրքիայի Ազգային մեծ ժողովին (իմա՝ քեմալականներին) հավատարիմ են և ընդգրկված չեն Թուրքիային դեմ որևէ շարժման կամ հոսանքի մեջ:

Բնականաբար «Թուրք-հայկական հաշտեցման միության» համագումարում հնչած ելույթների և հայտարարությունների տեքստերը քեմալական ազգայնամուլական շարժմանը բացահայտ գովերգող բնույթ ունեին. բացի այդ, համագումարի անունից ողջույնի հեռագիր է ուղարկվում Մուսթաֆա Քեմալին: Սակայն է՛լ ավելի ուշարժան է համագումարի ընդունած որոշումը՝ հեռագիր ուղարկել Լոզանում գտնվող թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշային ու բացի շնորհավորանքներից՝ տեղեկացնել հայկական շահերի դեմ պայքարող թուրք պաշտոնյային, որ Թուրքիայի քաղաքացի հայերը, որոնց ներկայացնում են միության անդամ ճանաչված և հեղինակավոր անձինք, կարծում են, «... որ հայերի իրավունքները բացառապես Ձեր բարձր առաջնորդությամբ է հնարավոր պաշտպանել»<sup>22</sup>: Սա, թերևս, ամենակարևոր քաղաքական քայլն էր, որը կարող էր իրականացնել այդ միությունը՝ ի պաշտպանություն թուրքական շահերի և ի վնաս հայկական նպատակների, քանի որ Իսմեթն այդ հեռագիրը օգտագործում է Լոզանում և Գաբրիել Նորատունկյանի հետ հանդիպման ժամանակ շեշտում, որ վերջինս կարող է ներկայացնել միայն այն հայերի շահերը, որոնք ապրում են Թուրքիայից դուրս, ու հղում անելով հայերի այդ խմբի վերոնշյալ հայտարարությանը՝ պնդում, որ Թուրքիայում բնակվող հայերի շահերի ներկայացուցիչն ինքն է, և հենց հայերն են լիազորել իրեն<sup>23</sup>:

Գալով Մուսթաֆա Քեմալին ուղարկված հեռագրին՝ նկատենք, որ դրանում «Թուրք-հայկական հաշտեցման միության» անդամները նշում են. «Թուրքահայերը, անմասն մնալով արտաքին և ներքին բոլոր հրահրումներից, ամենաազնիվ զգացմունքներով կապված են թուրքական քաղաքացիությանը» և «չնայած ամեն տեսակ դժվարություններին, մեծագույն վճռականություն հանդես բերելով, իրենց հնազանդությունն ու հավատարմություն են հայտնում մեր ազգային կառավարությանը»<sup>24</sup>: Միության անդամները նաև խնդրել են Մուսթաֆա Քեմալին իր հետ հանդիպման հնարավորություն ընձեռել: Ստանալով հեռագիրը՝ Մուսթաֆա Քեմալը 1923 թ. մայիսի 3-ին հանձնարարել է իր մտերիմ բժիշկ Ադնանին (հետագայում՝ Ադնան Ադրվար) պարզել, թե ովքեր են այդ միության անդամները, ինչ նպատակով է ձևավորվել միությունը: Ի պատասխան հանձնարարականի՝ Ադնանը 1923 թ. մայիսի 7-ին ծածկագիր հեռագրով Մուսթաֆա Քեմալին տեղեկացնում է, որ

<sup>22</sup> Malhasyan S., նշվ. աշխ., էջ 41, նույնը տե՛ս նաև Ulu C., նշվ. աշխ., էջ 145:

<sup>23</sup> Sté u Ekmekçiöglü L., Mecbur: Mıgırdıç Agob'un "Türkiye Ermenileri" Risalesi (1922), էջ 557:

<sup>24</sup> Հեռագրի ամբողջական տեքստը տե՛ս Kürşat C., Türk-Ermeni Taali (Dostluk) Cemiyeti, Belgelerle Türk Tarihi Dergisi: Dün/Bugün/Yarın, İstanbul, 1974, Cilt XIII, Sayı: 77-78, էջ 18:

միության անդամները «տարբեր դավանանքների պատկանող դեմոկրատ հայեր են և որոշ թուրքեր»<sup>25</sup>, և որ ինքը ճանաչում է միության որոշ անդամների, օրինակ՝ Պերճ Քերեսթեջանին, որին նա անվանում է «մեր ամենադժվար պահերին թուրքերի կողքին մնացած և հրադադարի օրերին մշտապես թուրքականությունը պաշտպանած պատվարժան մարդ»<sup>26</sup>: Ուշագրավ է, որ Ադնանը առանձնացնում է այն հանգամանքը, որ այդ միության հայ անդամները «Զավեն պատրիարքին վճռողներն են»<sup>27</sup>: Իսկ խոսելով միության նպատակների մասին՝ նա նշում է, որ նրանց հիմնական նպատակն է այդ միության միջոցով գրավել կառավարության ուշադրությունը և լուծել առկա խնդիրները<sup>28</sup>: Ադնանի հեռագրից հետո Մուսթաֆա Քեմալը, պատճառաբանելով իր զբաղվածությունը, մերժում է հանդիպել միության անդամների հետ<sup>29</sup>, սակայն արձագանքում է իրեն հասցեագրված հեռագրին և «Թուրք-հայկական հաշտեցման միությանը» ուղարկում է պատասխան հեռագիր, որտեղ իր գոհունակությունն է հայտնում միության հոչակած նպատակների, սկզբունքների և իրեն ու ԹԱՄԾ կառավարությանը ցուցաբերած բարեկամական զգացմունքների և հավատարմության համար: Քեմալը հատուկ առանձնացրել է «ներքին և արտաքին հրահրումներին» չտրվող, «իրական քաղաքացիական զգացումներ» ունեցող երիտասարդների կրթության կարևորությունը և հեռագիրը ավարտում է հետևյալ կոչով. «Այդ երիտասարդ ընկերներին հաջողություն մաղթելով՝ խորհուրդ եմ տալիս Արևելյան Հարցի անվան տակ դարերով իրականացված ամեն տեսակի արտաքին միջամտության գաղափարներից հրաժարվեն և դառնան Թուրքիայի անկեղծ հայրենասերներ»<sup>30</sup>:

Համագումարից հետո միությունը փորձել է ճանաչում և կարգավիճակ ձեռք բերել Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում. միության անդամները ավելի ուշ հանդիպել են արդեն վարչապետ Իսմեթ փաշայի հետ, որի ընթացքում խոսել են նաև Լոզանի պայմանագրով Թուրքիա վերադառնալու ֆորմալ իրավունք ստացած հայերի խնդիրների մասին<sup>31</sup>: Միության անդամներին 1923 թ. հուլիսի 24-ին ընդունել է նաև Թուրքիայի հոգևոր առաջնորդը՝ խալիֆ Աբդուլ Մեջիդ II-ը. այցը եղել է արարողակարգային-շնորհավորական, սակայն իր խոսքում խալիֆը ողջունել է այդ հայերի և միության քաղաքական պահվածքն ու նպատակները<sup>32</sup>:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>30</sup> Հայերեն տեքստը տե՛ս «Քեմալ Փաշայի Պատասխանը Հայ եւ Թուրք Ընկերակցութեանը», «Ժողովրդի ձայն-Ժամանակ», Մտամբուլ, 01.01.1923, տե՛ս նաև **Malhasyan S.**, նշվ. աշխ., էջ 42:

<sup>31</sup> Տե՛ս **Malhasyan S.**, նշվ. աշխ., էջ 50:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 48:



Կարող ենք փաստել, որ հիմնադրմանը հաջորդող տարիներին՝ 1923-1926 թվականներին, «Թուրք-հայկական հաշտեցման միությունը» հաճախ հանդես է եկել Թուրքիայի Հանրապետության իշխանություններին գովերգող տարատեսակ հայտարարություններով, մամլո հաղորդագրություններով, որոնցում փորձել է ի ցույց դնել իր մոտեցումները այդ ժամանակվա Թուրքիայում և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Բնականաբար այդ ամենը կրել է ընդգծված իշխանամետ բնույթ, և միության անդամները բացահայտ սատարել են քեմալական իշխանություններին<sup>33</sup>: Օրինակ՝ 1924 թ. միության հայտարարություններից մեկում ասվում է. «Մենք հպարտ ենք, որ ապրում ենք Թուրքիայում և Թուրքիայի Հանրապետության փառապանծ դրոշի ներքո: Թուրքիայի Հանրապետությունը Օսմանյան կայսրության պես մեզ չի համարելու խորթ զավակներ»<sup>34</sup>: Այս հայտարարությունը նաև ուղղված էր եվրոպական երկրներին, և նրանց ներկայացուցիչներին կոչ էր արվում զերծ մնալ Թուրքիայի հայերի իրավունքների պաշտպանության խնդրին միջամտելուց՝ դա համարելով այդ երկրի ներքին հարց: «Թուրք-հայկական հաշտեցման միության» քայլերի մեջ բացասական առումով առանձնանում է նրանց կազմակերպած այն ստորագրահավաքը, որով իբրև թե հայերը «կամովին» հրաժարվում են Լոզանի պայմանագրով փոքրամասնությունների համար նախատեսված իրավունքներից<sup>35</sup>, ավելի կոնկրետ՝ պայմանագրի 42-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարագրաֆներից<sup>36</sup>: Սակայն, բնականաբար, հայ համայնքին պարտադրված այդ ստորագրահավաքը չէր կարող իրավական ուժ ունենալ, քանի որ համայնքային կառույցների որոշումները չէին կարող միջազգային պայմանագրերից բարձր կարգավիճակ ունենալ: Ուշագրավ է, որ ժամանակի թուրքական մամուլում թե՛ «Թուրք-հայկական հաշտեցման միության» և թե՛ հայերի իշխանահաճո այլ նախաձեռնությունների հանդեպ եղել է ընդգծված թերահավատ մոտեցում, որը երբեմն դրսևորվել է բացահայտ քննադատությամբ՝ «հայերի նախկինում արածները չենք մոռանալու»<sup>37</sup> ընդհանրական գնահատականի համապատկերում: Իսկ կոնկրետ Լոզանի պայմանագրով նախատեսվող իրավունքներից «կամովին հրաժարվելու» հայերի այս նախաձեռնությունը թուրքական մամուլում ընդունվել է ծաղրանքով. 1923 թ. սեպտեմբերին «Միլլիյեթ» թերթում հրապարակված մի հոդվածում նշվում է, որ եթե հայերը հրաժարվում են Լոզանով նախատեսվող իրավունքներից, ապա այլևս Հայոց պատրիարքության, հայկական դպրոցների կարիքը չկա, և դրանք պետք է փակվեն<sup>38</sup>:

<sup>33</sup> Տե՛ս Ulu C., նշվ. աշխ., էջ 145, 147:

<sup>34</sup> Hür A., նշվ. աշխ., էջ 305-306:

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 307:

<sup>36</sup> Տե՛ս Kocoglu Y., Azınlık gençleri anlatıyor, İstanbul, 2004, էջ 39:

<sup>37</sup> Malhasyan S., նշվ. աշխ., էջ 62:

<sup>38</sup> Տե՛ս Hür A., նշվ. աշխ., էջ 307:

Նշենք նաև, որ «Թուրք-հայկական հաշտեցման միությունը», հավատարիմ մնալով հռչակած նպատակներից մեկին՝ աջակցել հայ և թուրք երիտասարդներին կրթություն ստանալու կամ շարունակելու հարցում, արել է կոնկրետ քայլեր և երկու ազգերի 10-ական ներկայացուցչի ֆինանսական աջակցություն կամ մերօրյա տերմինաբանությամբ կրթական դրամաշնորհներ է հատկացրել<sup>39</sup>: Միությունը ծավալել է նաև հրատարակչական գործունեություն՝ կրկին իշխանամետ շեշտադրումներով, և պատրաստվել է «Թուրքիայի հայերը» վերնագրով մի գրքույկ, որտեղ տպագրվել է նաև Լոզանի բանակցությունների ժամանակ Իսմեթ փաշային հղած իրենց տխրահռչակ հեռագիրը<sup>40</sup>:

Ամփոփելով նշենք, որ քաղաքական իրավիճակի պարտադրանքով ստեղծված հայ-թուրքական երկխոսության այս հարթակը՝ «Թուրք-հայկական հաշտեցման միությունը», բացի թուրքական/քեմալական իշխանության արտաքին և ներքին որոշակի շահեր սպասարկելուց, որևէ այլ քայլ չկարողացավ և չցանկացավ անել: Ակնհայտ է, որ միությունը նախ և առաջ չկարողացավ սպասարկել իր ստեղծման բուն առաքելությանը՝ երկու ժողովուրդների միջև վստահության վերականգնում կամ իրական երկխոսություն, այլ ընդամենը դարձավ հակահայկական քաղաքականությանը սպասարկող ու նպաստող գործիք, ինչպես նաև ձևավորեց հայ-թուրքական երկխոսության իմիտացիա: Միության հիմնադիր որոշ հայեր իրենց այս իշխանամետ քայլերի շնորհիվ ստացան անհատական արտոնություններ, ապահովեցին իրենց կյանքն ու գույքը, ձեռք բերեցին կարգավիճակ, սակայն ոչ հայ ժողովրդին ընդհանուր առմամբ, ոչ էլ Թուրքիայի հայ համայնքին այս միությունը որևէ լուրջ օգուտ չտվեց: Ավելին՝ նրա գոյությունն ու խաղաղության կամ հաշտության հասնելու նմանատիպ գործելառճը էական հարված հասցրին նաև հայության ընդհանրական ընկալումներին ինչպես միջազգային բանակցությունների հարթակներում, այնպես էլ թուրքական հասարակության մեջ, քանի որ համազգային աղետից՝ Հայոց ցեղասպանությունից և հայրենագրկումից կարճ ժամանակ անց թշնամու հետ հաշտվելու փորձերը ոչ միայն քաղաքական ամնեզիայի դրսևորումներ են, այլև հակասում են քաղաքագիտական ու բարոյական տրամաբանությանը:

Ի վերջո, չնայած թուրքական իշխանություններին արված ուներանսներին և քայլերին՝ քեմալական վերնախավը, բացի որոշակի դեպքերից, այդպես էլ որևէ լուրջ ուշադրության չարժանացրեց այդ կառույցին, և «Թուրք-հայկական հաշտեցման միությունը» 1926 թ. վերջերին թուլացրեց, իսկ 1927 թ. կեսերից դադարեցրեց իր գործունեութ-

<sup>39</sup> Տե՛ս **Malhasyan S.**, նշվ. աշխ., էջ 42:

<sup>40</sup> Տե՛ս **Ekmekçiöglü L.**, Mecbur: Migirdiç Agob'un "Türkiye Ermenileri" Risalesi (1922), էջ 557:

յունը<sup>41</sup> ևս մեկ անգամ հաստատելով «Մավրն արել է իր գործը, Մավրը կարող է հեռանալ» տեսությունը:

**РУБЕН МЕЛКОНЯН – Из истории армяно-турецкого несостоявшегося диалога: «Союз турецко-армянского примирения» (1922-1927 гг.).** – В рамках натянутых армяно-турецких отношений было зафиксировано несколько попыток социально-политического и дипломатического диалога особенно в конце 20-го века и в начале 21-го. Но в научных и политических кругах Армении было уделено очень мало внимания одной попытке армяно-турецкого социально-политического диалога, осуществлённого в 1920-ых годах, когда шёл военно-политический процесс формирования и становления Турецкой Республики. В этой статье будет представлен и обсуждён первый, если можно так сказать, регулированный пример армяно-турецкого публичного общения или диалога - «Союз Турецко-Армянского Примирения», созданный 24-го декабря 1922 года и состоящий из армянских и турецких общественных лиц, известных людей того времени.

**Ключевые слова:** армяно-турецкий диалог, Мустафа Кемаль, патриарх Завен, община армян Стамбула, кемалисты, Геноцид армян, Турецкая Республика, Лозаннский договор

**RUBEN MELKONYAN – From the History of the Armenian-Turkish Failed Dialogue “Turkish-Armenian Reconciliation Union” (1922-1927).** – In the framework of strained Armenian-Turkish relations multiple attempts of social-political and diplomatic dialogue have taken place especially at the end of the 20<sup>th</sup> century and at the beginning of the 21<sup>st</sup>. Still, an Armenian-Turkish social-political dialogue attempt carried out in the 1920’s, when the military-political process of the formation of the Republic of Turkey was underway, has received very little attention by the scientific and political circles of Armenia. This article has a goal to present and discuss the first, if we can say so, regulated attempt of the Armenian-Turkish public communication or dialogue – “The Turkish-Armenian Reconciliation Union”, which was founded on the 24<sup>th</sup> of December, 1922 and consisted of Armenian and Turkish public figures, well-known people of the time.

**Key words:** Armenian-Turkish dialogue, Mustafa Kemal, patriarch Zaven, Istanbul Armenian community, kemalists, Armenian Genocide, Republic of Turkey, Treaty of Lausanne

---

<sup>41</sup> Տե՛ս **Hür A.**, նշվ. աշխ., էջ 308-309:

## **ԱՆԳՆ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՆԻ ՌԱԶՄԱԿԱԼՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ (1941Թ.)**

### **ՀԱՅԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

2009 թ. դեկտեմբերի 21-ին ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադն իր կառավարությանը հանձնարարեց ստեղծել տնտեսական, պատմական, իրավական և քաղաքական հարցերով փորձագետների խումբ՝ գնահատելու Երկրորդ աշխարհամարտի տարիներին դաշնակից երեք պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կողմից Իրանին հասցված վնասը<sup>1</sup>: Երկրորդ համաշխարհային պատերազմին առնչվող բազմաթիվ աշխատություններում հետազոտողների մեծ մասը չի հիշատակում այն իրադարձությունները, որոնք զգալի ազդեցություն թողեցին պատերազմական և հետպատերազմական իրավիճակի վրա: Դրանցից մեկն էլ անգլո-խորհրդային զորքերի կողմից Իրանի տարածքի ռազմակալման գործողությունն է, որն առավել հայտնի է «Համաձայնեցում» ծածկագրային անվանումով: Հողվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել 1941 թվականին Մեծ Բրիտանիայի և Խորհրդային Միության կողմից Իրանի տարածքի ռազմակալման իրական նպատակներն ու դրդապատճառները, ինչպես նաև վերջիններիս հետապնդած հեռահար ծրագրերը, որոնք տարիներ ի վեր արժանացել են հակասական գնահատականների:

*Բանալի բառեր - Իրան, Մեծ Բրիտանիա, ԽՍՀՄ, ռազմակալում, Երկրորդ համաշխարհային պատերազմ, Ռեզա շահ, Անգլո-իրանական նավթային ընկերություն*

### **Իրանի դիրքորոշումը և վարած քաղաքականությունը համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում**

Նշված իրադարձությանը վերաբերող պաշտոնական վարկածն այն է, որ գերմանացիներն Իրանի տարածքը լցրել էին իրենց հազարավոր զործակալներով և նպատակ էին հետապնդում գրավել բրիտանական կառավարությանը պատկանող Անգլո-իրանական նավթային ընկերությունը (ԱԻՆԸ), ինչպես նաև Իրանի տարածքն օգտագործելով՝ հարձակվել Բաքվի նավթահորերի վրա: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ անգլո-խորհրդային ուժերը, ստանալով Ռեզա շահի մերժումը՝ դիմակայելու նացիստական զործակալության քայքայիչ գործունեությանը, համատեղ ռազմական գործողություն իրականացրին պաշտպանելու ԱԻՆԸ-ն գերմանական ոտնձգությունից, ինչպես նաև ապահովելու

<sup>1</sup> St' u Ahmadijad Demands Compensation for WW2 Invasion, Fox News, January 09. 2010, <http://www.foxnews.com/story/2010/01/09/ahmadijad-demands-compensation-for-wwii-invasion.html>

Լենդ-լիզի<sup>2</sup> ծրագրով դաշնակիցների կողմից ԽՍՀՄ-ին տրվող ռազմատնտեսական օգնության բեռնափոխադրման անվտանգությունը<sup>3</sup>:

Սակայն մեր ժամանակներում հասանելի դարձած արխիվային նոր նյութերի և ժամանակակիցների աշխատությունների բազմակողմանի և անկողմնակալ վերլուծությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու էական նշանակություն ունեցող նրբություններ, որոնք նշանակալիորեն տարբերվում են տարածված կարծիքից:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելուց օրեր անց՝ սեպտեմբերի 4-ին, Իրանի կառավարությունը հայտարարեց իր չեզոքության մասին: Ռեզա շահն էլ, 12-րդ գումարման մեջլիսի նիստի բացման արարողության ժամանակ անդրադառնալով իր երկրի չեզոքությանը, նշեց, որ Իրանի կառավարությունը կպահպանի բարիդրացիական հարաբերություններ պատերազմող բոլոր կողմերի հետ<sup>4</sup>: Այնուհետև Իրանի ներքին գործերի նախարարությունը հայտարարություն տարածեց, որում խիստ պատժի սպառնալիքով կոչ էր արվում բոլոր իրանահպատակներին, ինչպես նաև Իրանում գտնվող օտարերկրացիներին զերծ մնալ երկրի չեզոքությանը հակասող ցանկացած գործողությունից, ինչպես նաև հակաքարոզությունից<sup>5</sup>:

Իրանի որդեգրած նման քաղաքականությունը պատերազմի սկզբնական շրջանում կարծես թե չէր հակասում գերտերությունների շահերին: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց 1941 թ. հունիսի 22-ին նացիստական Գերմանիայի կողմից Խորհրդային Միության վրա հարձակումից հետո: Դա նախադրյալներ ստեղծեց անգլո-խորհրդային մերձեցման համար, և ստեղծված իրավիճակում Մեծ Բրիտանիան ու ԽՍՀՄ-ը դարձան դաշնակիցներ: Նրանք անմիջապես դժգոհություն հայտնեցին Իրանի կառավարությանը այդ երկրում աշխատող գերմանացի տեխնիկական մասնագետների գործունեության վերաբերյալ:

Այդ օրերին իրանական «Էթելաաթ» թերթը գրում է. «Ընդամենը մի քանի օր առաջ ԽՍՀՄ-ը և Գերմանիան մտերմիկ հարաբերություններ ունեին, և որոշ արկածախնդիր պաշտոնատար անձինք (բրիտանացիները), ջանալով սրել մեր և ԽՍՀՄ հարաբերությունները, ամեն վայրկյան ջանում էին, որ մեր հյուսիսային հարևանի վարած քաղաքականության հանդեպ անհանգստություն ցուցաբերենք՝ ամեն օր խնդրո առարկա դարձնելով այն հարցը, թե մեր սահմանների հարևանությամբ

<sup>2</sup> Լենդ-լիզը 1941 թ. մարտի 11-ին ԱՄՆ Կոնգրեսի հաստատած պետական ծրագիր էր, որով Միացյալ Նահանգները պատերազմի ժամանակ իր դաշնակիցներին ապահովում էր ռազմական տեխնիկայով, բժշկական սարքավորումներով, դեղորայքով, սննդով և անհրաժեշտ այլ պարագաներով: Տե՛ս The Lend-Lease Act, <http://www.history.com/topics/world-war-ii/lend-lease-act>

<sup>3</sup> Տե՛ս **Трухановский В. Г.** Внешняя политика Англии в период Второй мировой войны (1939-1945), М., 1965, էջ 261:

<sup>4</sup> Տե՛ս «**نوقی ایرج، ایران و قدرتهای بزرگ در جنگ دوم جهانی، تهران، 1351، ص 28**»

<sup>5</sup> Տե՛ս **Агаев С. Л.** Иран: Внешняя политика и проблемы независимости. 1925-1941 гг., М., 1971, էջ 305:

ռազմական ուժերի տեղաշարժը կամ ԽՍՀՄ ու Գերմանիայի միջև հավանական պայմանավորվածությունը ի վնաս Իրանի է, իսկ հիմա Բրիտանիան և ԽՍՀՄ-ը նախագգուշացումներ են տալիս Իրանին այն պարագայում, երբ Իրանի նպատակը բացառապես չեզոքություն պահպանելն է՝ ջանալով բարիդրացիական հարաբերություններ ունենալով բոլոր երկրների հատկապես իր հարևանների հետ»<sup>6</sup>:

Դեռևս 1930-ական թվականներից սկսած՝ իրանա-գերմանական տնտեսական և քաղաքական հարաբերությունները ամրապնդվում էին, տեղի էին ունենում առևտրատնտեսական պատվիրակությունների փոխայցելություններ և սրընթաց աճում էր իրանա-գերմանական առևտրաշրջանառությունը<sup>7</sup>: Եթե 1939-1940 թթ. դա Իրանի ընդհանուր առևտրաշրջանառության 39 %-ն էր, ապա 1940-1941 թթ. այն արդեն կազմում էր 45,5 %<sup>8</sup>: Սակայն դա չէր խանգարում Ռեզա շահին պահպանելու բարիդրացիական հարաբերություններ Գերմանիայի հակառակորդ դաշնակիցների հետ և խստագույնս հետևելու իր կողմից հայտարարված չեզոքության քաղաքականությանը:

### **Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի կողմից Իրանին ներկայացված պահանջները ռազմական ներխուժումից առաջ**

Հունիսի 26-ին՝ Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակումից չորս օր անց, խորհրդային կառավարությունը նոտա հղեց իրանական կառավարությանը, որում նշված էր, որ գերմանական գործակալության թողտվությունն անհամատեղելի է 1921 թ. խորհրդա-իրանական համաձայնագրի դրույթներին<sup>9</sup>, և պահանջում էր անհապաղ Իրանից վտարել գերմանացի տեխնիկական բոլոր մասնագետներին՝ մեղադրելով վերջիններիս ԽՍՀՄ-ի դեմ ուղղված քայքայիչ գործունեության մեջ<sup>10</sup>: Իսկ հուլիսի 19-ին և օգոստոսի 16-ին արդեն համատեղ նոտաներ հանձնվեցին Իրանի կառավարությանը: Իրանում Մեծ Բրիտանիայի դեսպան Ռ. Բուլլարդն Իրանի կառավարությանը ներկայացրեց իր կառավարության պահանջը՝ երկրից անհապաղ վտարել գերմանացի մասնագետներին<sup>11</sup>: Նույնն արեց նաև Իրանում ԽՍՀՄ դեսպանը<sup>12</sup>: Այնուհետև Լոնդոնից, Դելիից և Բաքվից պարսկերեն ռադիոհաղորդումների միջոցով սկսեցին վարկաբեկել շահին և կառավարությանը, մեղադրել գերմանական «5-րդ շարասյանը»՝ լրտեսական ցանցին

<sup>6</sup> روزنامه اطلاعات، تیر ماه، سال 1320، 3.

<sup>7</sup> Sté u **Оришев А. Б.** Политика Германии в Иране накануне Второй мировой войны, Новая и новейшая история. М., 2002, № 6, էջ 25-36:

<sup>8</sup> Sté u **Оришев А. Б.** Политика Германии в Иране накануне Второй мировой войны <http://www.rumvi.com/products/ebook.../preview/preview.html>

<sup>9</sup> 1921 թ. խորհրդա-իրանական պայմանագրի տեքստը տե՛ս Советско-иранские отношения в договорах, конвенциях и соглашениях. М., 1946, էջ 216:

<sup>10</sup> Sté u Нота Советского Правительства Иранскому Правительству. Известия. 26.08.1941:

<sup>11</sup> Sté u **Woodward L.**, British Foreign Policy in the Second World War, London, 1962, էջ 162:

<sup>12</sup> Sté u նույն տեղը:

սատարելու համար՝ նշելով, որ գործակալների թիվը հասնում է 5-20 հազարի, ինչպես նաև տարածելով կեղծ տեղեկատվություն իրանական բանակում տիրող դժգոհությունների և երկրում ապրող տարբեր ցեղերի անհնազանդությունների մասին<sup>13</sup>: Ի պատասխան այդ մեղադրանքների՝ իրանական պաշտոնական լրատվական մարմինը հայտարարեց, որ դաշնակիցների հնչեցրած մեղադրանքները փաստերից զուրկ են, գերմանացիների թիվը ծայրահեղ չափազանցված է, ընդամենը 616-ն են, և որ իրանական կառավարությունն ունի այդ տեխնիկական մասնագետների ցուցակը, և նրանց բոլոր քայլերը վերահսկվում են ոստիկանության կողմից<sup>14</sup>: Իրանում ամերիկյան արտաքին գերատեսչության հատուկ ներկայացուցիչ Լյուիս Դրեյֆուսը, պետքարտուղարությանն ուղղված իր գաղտնի նամակում տեղեկացնելով վերոնշյալ իրադարձությունների մասին, հավելում է, որ բրիտանական կողմի զգուշացումներն Իրանին «նյարդերի պատերազմի» մաս են՝ ավելի խիստ միջոցների նախերգանք<sup>15</sup>:

Իրանցի հետազոտող Նասրուլլահ Ֆաթեմին, «Նավթային դիվանագիտություն» աշխատության մեջ ներկայացնելով Ռեզա շահի օրոք վարչապետ Ալի Մանսուրի հուշերը, նշում է. «Շահն անկեղծորեն հույս էր փայփայում, որ դաշնակիցները կասեն, թե որն է իրենց իրական նպատակը: Նա շատ ուրախ կլիներ՝ որոշ պայմանավորվածություն ձեռք բերվեր դաշնակիցների հետ երկրի երկաթուղին և ճանապարհները դաշնակիցների տրամադրության տակ դնելու պայմանով՝ դրա դիմաց ստանար որոշակի վարձատրություն»<sup>16</sup>:

Այդ ընթացքում դաշնակիցների ռազմական նախապատրաստությունները շարունակվում էին: Ուինսթոն Չերչիլի հուշերում նշված է, որ դեռևս հուլիսի 22-ին Արևելքում տեղակայված բրիտանական ռազմական ուժերի գլխավոր հրամանատար է. Քուինսանին հրաման էր ուղարկվել՝ պատրաստվելու ռազմակալել Իրանի Աբադան նահանգի նավթագտարաններն ու նավթահորերը, ինչպես նաև Խանաքինի ուղղությամբ գտնվող երկու հարյուր հիսուն մղոն հաստվածը<sup>17</sup>: Չերչիլի հիմնական նպատակը Անգո-իրանական նավթային ընկերության պաշտպանությունն էր, քանզի հենց ԱԻՆԸ-ն էր ապահովում բրիտանական նավատորմը վառելիքով Միջերկրական ծովում և Հնդկական օվկիանոսում, ինչպես նաև՝ Մերձավոր և Միջին Արևելքում գտնվող

---

<sup>13</sup> Տե՛ս **Lenczowski G.**, *Russia and the West in Iran, 1918-1948*, New York, 1949, էջ 168, **Annabelle Sreberny and Massoumeh Torfeh**, *The BBC Persian Service 1941-1979*, *Historical Journal of Film, Radio and Television*, Vol. 28, No. 4, 2008, էջ 519:

<sup>14</sup> Տե՛ս 31.07.1941 اطلاعات

<sup>15</sup> Տե՛ս *The British Commonwealth; the Near East and Africa*, The Minister in Iran (Dreyfus) to the Secretary of State, telegram No.740.001 Foreign relations of the United States diplomatic papers, (այսուհետ՝ FRUS), 1941, Volume 3, էջ 386:

<sup>16</sup> **Fatemi S. N.**, *Oil Diplomacy*, New York, 1954, p. 189.

<sup>17</sup> Տե՛ս **Churchill W. S.**, *The Second World War, The Grand Alliance*, Vol. 3, New York, 1950, էջ 406:

բրիտանական բանակի պահանջները<sup>18</sup>:

Միանշանակ պարզ է, որ օգոստոսի 16-ի համատեղ նոտան զուտ ձևական էր: Սակայն շահն այնուամենայնիվ համոզված էր, որ բրիտանացիները երբեք չեն ներխուժի Իրան, իսկ ռուսներն էլ բավականին ծանր վիճակում են գտնվում տարբեր ռազմաճակատներում<sup>19</sup>: Այդ տարիների ԱՄՆ պետքարտուղար Քորդել Հալն իր հուշերում գրում է. «Ե՛վ բրիտանացիները, և՛ իրանական կառավարությունը մեր օգնությունն էին ակնկալում: Բրիտանացիները ցանկանում էին, որ մենք պաշտպանենք անգլո-խորհրդային նոտան ընդդեմ Իրանի, որը պահանջում էր գերմանացիների արտաքսումը երկրից. այդուհանդերձ հրաժարվելով առնչակցել մեր կառավարությանը այդ միացյալ նոտայի հետ՝ ես կարգադրեցի Թեհրանում նախարար Դրեյֆուսին իրանցիներին հայտնեն մեր անկեղծ հույսը, որ Իրանի կառավարությունը կձեռնարկի բոլոր այն միջոցները, որոնք կխափանեն նացիստական ակտիվության տարածումը»<sup>20</sup>:

Այնուամենայնիվ, Ռեզա շահն օգոստոսի 22-ին կարգադրեց վարչապետ Մանսուրին շտապ իրականացնել բոլոր այն գերմանացիների արտաքսումը, որոնց ծառայություններն այնքան էլ նշանակալից չեն իրանական արդյունաբերության համար: Մանսուրը նշում էր, որ շահը չէր պատկերացնում, թե ընդամենը յոթ հարյուր գերմանացի տեխնիկները, որոնք գտնվում էին ոստիկանության խիստ ուշադրության ներքո, ինչպես կարող էին վտանգել Իրանի չեզոքությունը՝ գործելով ընդդեմ բրիտանական և ռուսական շահերի<sup>21</sup>:

Օգոստոսի 24-ին, ի զարմանս իրանական կառավարության, բրիտանական և խորհրդային կառավարությունների կողմից խիստ և սպառնալից ոճով նոտա հանձնվեց Իրանին: Բրիտանական նոտայում նշվում էր, որ ստեղծված իրավիճակից ելնելով՝ իրենց կառավարությունը ստիպված է դիմել խիստ միջոցների՝ պաշտպանելու իր կարևոր շահերը: Խորհրդային կողմը նույնպես իր նոտայում հայտնում էր խիստ միջոցների դիմելու մասին՝ կրկին վկայակոչելով 1921 թ. խորհրդա-իրանական պայմանագրի 6-րդ կետը<sup>22</sup>:

Իրանի վերջին շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին, իր հուշերում անդրադառնալով դաշնակիցների հղած վերջնագրերին, բավականին դիպուկ նշում է. «Վերջերս վերանայելով դաշնակիցների բողոքաշունչ ծանուցագրերը, որ այն օրերին ներկայացրել էին հորս՝ զգացի, որ երեխայական են և կապվում են մանրուքների: Նրանց ընդհանուր մոտեցումը սահմանափակվում է գերմանացի հպատակների ներկայությամբ Իրանում: Ոչինչ չի ասվել ավելի ծանրակշիռ նպատակների, այն

<sup>18</sup> Տե՛ս **Трухановский В. Г.**, նշվ. աշխ., էջ 261:

<sup>19</sup> Տե՛ս **Fatemi S. N.**, նշվ. աշխ., էջ 190:

<sup>20</sup> **Hull C.**, *The Memoirs of Cordell Hull*, Volume 2, New York, 1948, p. 1501.

<sup>21</sup> Տե՛ս *The Minister in Iran (Dreyfus) to the Secretary of State*, telegram 740.0011, FRUS, 1941, vol. 3, էջ 411; **Fatemi S. N.**, նշվ. աշխ., էջ 189:

<sup>22</sup> Տե՛ս Нота Советского Правительства Иранскому Правительству. Известия. 26.08.1941:



է՝ Ռուսիային ռազմամթերք հայթայթելու գծով ճանապարհի բացելու, գերմանական ուժերի մուտքը դեպի Միջին Արևելքի նավթառատ շրջանները կանխելու և նման հարցերի մասին»<sup>23</sup>:

### **Իրանի տարածք ներխուժման ռազմական գործողությունը**

Անգլո-խորհրդային ռազմական համատեղ գործողությունը, որը ստացավ «Համաձայնեցում» ծածկանունը, սկսվեց 1941 թ. օգոստոսի 25-ին: Առավոտյան ժամը 4:30 րոպե բրիտանական և խորհրդային զինված ուժերը՝ համապատասխանաբար հարավից և հյուսիսից, անցան իրանական սահմանը: Բրիտանական կողմը գեներալ Արչիբալդ Ուելվիլի ընդհանուր հրամանատարությամբ գրոհեց երկու ուղղությամբ. առաջինը՝ Բասրայից դեպի Աբադանի և Ահվազի նավթահորերը, իսկ երկրորդը՝ Բաղդադից դեպի Խանաբին<sup>24</sup>: Բրիտանական մի առանձին ստորաբաժանում էլ գեներալ Ուիլյամ Սիլմի հրամանատարությամբ, օդուժի աջակցությամբ գրոհեց Պարսից ծոցի Բանդար Շահպուր նավահանգիստը և առանց լուրջ դիմադրության հանդիպելու շարժվեց Շահաբադի ուղղությամբ<sup>25</sup>:

Խորհրդային ուժերի ռազմական գործողության ընդհանուր ղեկավարն էր Անդրկովկասյան ընդհանուր ռազմաճակատի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Դմիտրի Կոզլովը, որի ենթակայության տակ էին գտնվում 44, 45, 46 և 47-րդ համագորային բանակները: Ռազմական գործողությանը մասնակցում էր նաև Կասպից ծովի ռազմական նավատորմը՝ ծովակալ Ֆ.Ս. Միդելնիկովի հրամանատարությամբ<sup>26</sup>: Խորհրդային բանակը, Խորհրդային Ադրբեջանի կողմից անցնելով Արաքս գետը, գրոհեց Նախիջևան, Խոյ, Թավրիզ, Ջուլֆա ուղղությամբ: Իրանական սահմանապահ զորքերն անակնկալի գալով չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ, և դաշնակիցների ռազմական ուժերը, Իրանի հարավում և հյուսիսում արագորեն ճնշելով դիմադրության թույլ օջախները, սկսեցին խորանալ երկրի տարածք: «Համաձայնեցում» գործողությունը սկսվելուց շատ չանցած՝ Ալի Մանսուրի կառավարությունը հրաժարական տվեց, իսկ նորանշանակ վարչապետ Ալի Ֆորուզին հրաման տվեց դադարեցնել դիմադրությունը<sup>27</sup>: Համատեղ ռազմական գործողության արդյունքում դաշնակիցների կորուստներն աննշան

<sup>23</sup> Մ. Ռ. Փահլավի, Առաքելություն հայրենիքիս համար, Թեհրան, 1973, էջ 146:

<sup>24</sup> Sté u **Eshraghi F.**, The Immediate Aftermath of Anglo-Soviet Occupation of Iran in August 1941, Middle Eastern Studies, Vol. 20., No. 3, July 1984, էջ 325, ինչպես նաև՝ **Stewart A. Richard**, Sunrise at Abadan, The British and Soviet Invasion of Iran, 1941, New York-Westport, Connecticut-London, 1988, էջ 109-110, **Ward R. Steven**, Immortal, A Military History of Iran and Its Armed Forces, Georgetown University Press, Washington, 2009, էջ 156:

<sup>25</sup> Բրիտանական ռազմածովային ուժերի կողմից ռազմական գործողության մանրամասն նկարագրությունը և ռազմական ուժերի դասավորությունը տե՛ս The War Office, Despatch on operations in Iraq, East Syria and Iran from 10<sup>th</sup> April, 1941 to 12<sup>th</sup> January, 1941, The London Gazette, 1946, էջ 4098:

<sup>26</sup> Խորհրդային զորքերի տարբեր ստորաբաժանումների ամբողջական ցուցակը տե՛ս ԿԿԵԴ СССР, Ввод войск в Иран, 1941 год, [https://vk.com/topic-54199714\\_28621636](https://vk.com/topic-54199714_28621636)

<sup>27</sup> Sté u **Kirk G.**, The Middle East in the War. London-New York-Toronto. 1954, էջ 136:

էին: Համաձայն բրիտանական գորքերի հրամանատարներից գեներալ Ուիլյամ Սլիմի տեղեկությունների՝ բրիտանացիները տվեցին 22 սպանված, 50 վիրավոր և կորցրին մեկ տանկ: Խորհրդային կողմը տվեց 40 սպանված, կորցրեց 3 տանկ: Իրանական կողմի կորուստները կազմեցին 800 սպանված, 200 վիրավոր, 6 տանկ, 6 ինքնաթիռ<sup>28</sup>:

Դաշնակիցների ռազմական գործողության հենց առաջին օրը Ռեզա շահը նամակով դիմեց ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտին՝ հայտնելով դաշնակիցների կողմից Իրանի տարածք ապորինի ներխուժման մասին, և խնդրեց նրան միջնորդել՝ դադարեցնելու այն<sup>29</sup>: Ռուզվելտը խուսափողական պատասխան տվեց՝ ասելով, որ գործողությունն ուղղված չէ Իրանի ժողովրդի դեմ, այլ միայն ստեղծված իրավիճակում նացիստական ագրեսիային դիմակայելու միջոց է<sup>30</sup>:

Ինչպես նշում է իրանցի հեղինակ Հասան Ղոդսին, գահից հրաժարվելու մտադրության մասին շահն առաջին անգամ հայտնել էր դեռ 1941 թ. օգոստոսի 26-ին՝ նախարարների խորհրդի նիստում<sup>31</sup>: Մակայն որոշ ժամանակ անց փորձեց ամերիկյան խորհրդական Լ. Դրեյֆուսի միջոցով պայմանավորվել բրիտանացիների հետ: Սեպտեմբերի 6-ին Ռեզա շահը հրավիրեց Դրեյֆուսին և խնդրեց նրան հաղորդել Մեծ Բրիտանիայի դեսպան Ռ. Բուլլարդին, որ նա գերմանացիներին չի համակրել, և որոնց հետ հարաբերություններում տարբեր հարցերի շուրջ տարաձայնություններ է ունեցել, և որ պատրաստ է իր ջանքերը ներդնել նրանց դեմ համատեղ պայքարում<sup>32</sup>: Մակայն այդ բոլոր ձեռնարկումները ոչ մի օգուտ չտվեցին, և սեպտեմբերի 16-ին Ռեզա շահը հրաժարվեց գահից՝ հոգուտ իր 22 -ամյա որդու՝ Մոհամմադի Ռեզայի, որը պիտի գահակալեր Մոհամմադ Ռեզա Փահլավի անունով: Բրիտանիայի դեսպան Բուլլարդն իր հուշերում նշում է, որ Ռեզա շահի՝ գահից հրաժարվելու պատճառը խորհրդա-բրիտանական գորքերի շարժն էր դեպի Թեհրան<sup>33</sup>՝ նախաձեռնված բրիտանական կառավարության կողմից, որի նպատակը Գերմանիայի և իր դաշնակիցների դիվանագիտական առաքելությունների արագ արտաքսումն էր<sup>34</sup>:

Իրանցիները երբեք չէին սպասում, որ բրիտանացիների կողմից հարձակման կենթարկվեին: Շահն ու իր կառավարությունը առերևույթ

<sup>28</sup> St u The London Gazette. 14 August. 1946, էջ 4100:

<sup>29</sup> St u The Shah of Iran (Reza Shah Pahlavi) to President Roosevelt, Telegram No. 740. 0011. FRUS. 1941, Vol. 3, էջ 419:

<sup>30</sup> St u President Roosevelt to the Shah of Iran (Reza Shah Pahlavi). Washington, September 2, 1941. FRUS, 1941, Vol. 3, էջ 446:

<sup>31</sup> St u . ٢٨١ . ص. ١٣٤٢، جلد دوم، تهران، ١٣٤٢، ص. ٢٨١ .

<sup>32</sup> St u The Minister in Iran (Dreyfus) to the Secretary of State. Tehran, September 7. FRUS, 1941, Vol. 3, էջ 454:

<sup>33</sup> St u **Bullard S. R.**, Britain and the Middle East, London, 1951, էջ 134:

<sup>34</sup> St u Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941-1945 гг., т. 1, էջ 389:

միշտ էլ բարեկամական էին տրամադրված բրիտանական կառավարության հանդեպ, և դ՛Արսիի կոնցեսիայի երկարաձգումն արդեն իսկ դիտվում էր որպես բրիտանական պահանջների ընդունում և կապիտուլյացիա<sup>35</sup>: Ինչպես նշում է Ֆաթեմին, շահը, դեռ օգոստոսի 16-ին ելույթ ունենալով իր գեներալների առջև, ակնարկել էր ռուսական հնարավոր հարձակման մասին, բայց նա համոզված էր, որ բրիտանացիները կանեն ամեն ինչ՝ կանգնեցնելու այն: Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչպես բրիտանացիները կարող են թույլ տալ, որ կոմունիզմը նվաճի Իրանը և դրանով վարակի ամբողջ Միջին Արևելքն ու Հնդկաստանը<sup>36</sup>:

Առաջին հայացքից կարծես իրոք տարօրինակ էր բրիտանացիների վարքագիծը՝ կապված Միջին Արևելքում սովետական ազդեցության տարածման թողտվության հետ, սակայն բանն այն է, որ իրականում բրիտանական կողմը չէր էլ կարող ենթադրել, որ Խորհրդային Միության դիմադրությունը գերմանացիներին երկար կտևի: Ինչպես նշում են բրիտանացի հեղինակներ Ջ. Բաթլերն ու Ջ. Գուայերը, քանի որ գերմանացիների հիմնական ուժերը կենտրոնացված էին Խորհրդային Միության դեմ, ենթադրվում էր, որ նրանց ռազմական արշավը Իրան երկար չպիտի տևեր, և սեպտեմբերին Կարմիր բանակը կարող էր ամբողջովին ջախջախված լինել<sup>37</sup>: Այսինքն, Իրանի տարածքը համատեղ ռազմակալելուց հետո Խորհրդային Միությունը ստիպված էր լինելու իր գորքերը դուրս բերել Իրանից, և այդ դեպքում բրիտանական կողմը կարող էր շատ հեշտությամբ իր ձեռքում կենտրոնացնել վերահսկողությունը Իրանի ամբողջ տարածքում, սակայն այդ հարցում իրենց հաշվարկների մեջ ակնհայտորեն սխալվեցին<sup>38</sup>:

Լիարժեքորեն հասկանալու համար, թե որն էր շահի հանդեպ բրիտանացիների անվստահության և նրան գահից հեռացնելու իրական պատճառը, անհրաժեշտ է դիտարկել շատ կարևոր մի հանգամանք ևս: Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվելուց կարճ ժամանակ անց՝ 1940 թ. հուլիսին, Իրանի ֆինանսների նախարարը նոտա հղեց ԱՄՆԸ-ին, որում պահանջում էր լրացուցիչ վճարել 1938 և 1939 թվականների համար 1,2 մլն ֆունտ սթերլինգ, որպեսզի վճարումները հասցվեն 1937 թ. մակարդակին, և, անկախ նավթահանման շրջանառությունից ու ընկերության եկամուտներից, 1940 և 1941 թվականների համար երաշխավորել 4 մլն ֆունտ սթերլինգ, իսկ տվյալ առաջարկը մերժելը կարող է հանգեցնել կոնցեսիայի չեղարկմանը:

<sup>35</sup> 1933 թ. Անգլո-պարսկական նավթային ընկերության և իրանական կառավարության միջև նոր կոնցեսիոն պայմանագրի մասին տե՛ս **Վ. Բայբուրդյան**, Իրանի պատմություն, Եր., 2006, էջ 625: Ինչպես նաև **Англо-иранское соглашение 1933 года, 29 апреля, Документы XX века**, <http://doc20vek.ru/node/3545>

<sup>36</sup> Տե՛ս **Fatemi S. N.**, նշվ. աշխ., էջ 191:

<sup>37</sup> Տե՛ս **Батлер Дж., Гуйер Дж.**, Большая стратегия. М., 1967, էջ 144:

<sup>38</sup> Իրականում միայն Ռուզվելտն էր հավատում, որ եթե ռուսները դիմանան մինչև հոկտեմբեր, ապա ռուսական ձմեռը կօգնի նրանց: Տե՛ս **Sherwood R. E.**, Roosevelt and Hopkins: An Intimate History. New York, 1950, էջ 303-304:

Մի քանի շաբաթ տևած բանակցություններից հետո համաձայնություն ձեռք բերվեց, որ Իրանին հասկացվող գումարը կազմի տարեկան 4 մլն ֆունտ սթերլինգ<sup>39</sup>: Անդրադառնալով խնդրին՝ այդ տարիներին Իրանում աշխատած ԱՄՆ ԿՀՎ հատուկ գործակալ Դոնալդ Ուիլբերը նշում է. «Ներքաշված լինելով կենաց-մահու պայքարի մեջ՝ բրիտանական կառավարությունը ստիպված էր զիջել շահի պահանջներին՝ ավելացնելու Իրանին հասկացվող գումարի չափը, սակայն այդ քայլը թշնամանք առաջացրեց Ռեզա շահի հանդեպ, որը նպաստեց նրա անկմանը: Բրիտանացիները երբեք չներեցին շահին»<sup>40</sup>:

Ի հավելումն դրա՝ նույն՝ 1940 թ. սկզբին շահն անակնկալ այցելություն կատարեց Իրանի Խուզիստան նահանգ, որտեղ և գտնվում էր ԱԻՆԸ: Վերադառնալուց հետո նա իր ներքին գործերի նախարարին պատժեց նավթաշրջաններում տիրող իրավիճակի համար: Բանն այն էր, որ, ինչպես շահին գաղտնի զեկուցել էին, բրիտանացի աշխատակիցների թիվը չափից դուրս աճել էր նավթարդյունաբերության շրջաններում: Պարզվեց, որ այդ նոր աշխատողների հիմնական մասը, ընդ որում, բանակի սպաներ են՝ նշանակված կարևոր պաշտոնների Աբադանում և Մասջեդ-է Մուլեյմանում: Իրանական կառավարության պաշտոնական տվյալների համաձայն՝ Իրանում էր գտնվում Մեծ Բրիտանիայի 2590 քաղաքացի<sup>41</sup>:

Շահն արտաքին գործերի նախարարությանը հրամայեց ԱԻՆԸ-ի բրիտանացի աշխատակիցներին մուտքի վիզա չտրամադրել: Նա նույնիսկ սպառնաց անհրաժեշտության դեպքում ամբողջ շրջանում մտցնել ռազմական դրություն: Խուզիստանի դիվիզիայի հրամանատար գեներալ Շահբախթին հրաման ստացավ ավելի կոշտ քաղաքականություն վարել և ստիպել ընկերության աշխատակիցներին ենթարկվելու երկրի կարգուկանոնին<sup>42</sup>: Բրիտանացի մի քանի նավաստիներ հարբեցողության և անհարիր պահվածքի համար դատապարտվեցին վեցամսյա կալանքի, սակայն որոշ ժամանակ անց Ռեզա շահը, մտավախություն ունենալով, որ նավաստիների ձերբակալության հետևանքով ծագած դժգոհությունը բրիտանական նավթակիր տանկերների անձնակազմի շրջանում կարող է խանգարել Աբադանից Իրանական նավթը տեղափոխելուն, կարգադրեց ազատել ձերբակալվածներին<sup>43</sup>:

Հավելենք, որ բրիտանական կառավարությունն այդպես էլ չհաստատեց Իրանին հասկացվող ֆինանսական համաձայնությունը: Այդ առթիվ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էնթոնի Իդենը վարչա-

<sup>39</sup> Տե՛ս **Fatemi N. S.**, նշվ. աշխ., էջ 187: **Kirk G.**, նշվ. աշխ., էջ 131-132: **Elwell-Sutton L.P.**, *Modern Iran*. London, 1941, էջ 159:

<sup>40</sup> **Wilber D. N.**, *Contemporary Iran*. New York, 1963, p. 80.

<sup>41</sup> . 1941. 08. 08 روزنامه اطلاعات

<sup>42</sup> Տե՛ս **Fatemi N. S.**, նշվ. աշխ., էջ 187:

<sup>43</sup> Տե՛ս **Bullard R.**, *The Camels Must Go. An Autobiography*. London, 1961, էջ 220-221:

պետ Չերչիլին գրեց. «Ես հանգել եմ այն եզրակացության, որ մենք իրանական նավթահորերը պաշտպանելու համար ավելի շատ զորք պիտի կենտրոնացնենք Իրաքում. եթե նույնիսկ սկսենք կիրառել տնտեսական ճնշումներ, իրավիճակը կմնա նույնը, մինչև չունենանք ռազմական բավարար ներկայություն»<sup>44</sup>: Ակնհայտ է, որ Իրանի նկատմամբ ռազմական գործողությունն արդեն վաղօրոք ծրագրված էր, և մյուս զգուշացումներն ու սպառնալիքները պարզապես ձևական էին:

Իրանի տարածքը ռազմակալելուց և Ռեզա շահին գահընկեց անելուց հետո դաշնակիցներին մնում էր անել մի շատ կարևոր քայլ՝ ևս այդ ամենին օրինական բնույթ հաղորդել, որը հնարավոր էր միայն եռակողմ պայմանագրի միջոցով:

1942 թ. հունվարի 29-ին Թեհրանում ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև կնքվեց ինը կետից բաղկացած պայմանագիր, որը ստորագրեցին Իրանում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Սմիրնովը, Իրանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր նախարար Ռ. Բուլլարդը և Իրանի արտաքին գործերի նախարար Ա. Սոհեյլին<sup>45</sup>: Համաձայն պայմանագրի դաշնակիցները պարտավորվում էին հարգել Իրանի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունն ու քաղաքական անկախությունը: Բացի այդ՝ դաշնակիցները պարտավորվում էին նաև իրենց հասանելի բոլոր միջոցներով պաշտպանել Իրանը գերմանական կամ որևէ այլ երկրի ռոնձգությունից և այդ նպատակով իրավունք էին ձեռք բերում Իրանի տարածքում պահելու ցամաքային, ռազմածովային և ռազմաօդային ուժեր այն քանակով, որ անհրաժեշտ էին գտնում: Դաշնակիցները անսահմանափակ իրավունք էին ստանում ամբողջ Իրանով մեկ շահագործելու երթուղիները՝ ներառյալ երկաթգիծը, ճանապարհները, գետերը, օդակայանները, նավահանգիստները և այլն: Պայմանագիրը սահմանում էր նաև, որ դաշնակիցների զորքերը պետք է դուրս բերվեն Իրանից ոչ ուշ, քան Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ ռազմական գործողությունների ավարտից հետո վեց ամսվա ընթացքում<sup>46</sup>:

Մասնագետների մեծ մասի կարծիքով՝ պայմանագրի նպատակը ռազմակալմանը օրինական բնույթ հաղորդելն էր: Համաձայնելով նրանց հետ՝ կարծում ենք, որ, բրիտանական շահերից բխելով, այն նաև միտված էր զսպելու Խորհրդային Միության կողմից ռազմակալման և Իրանում մշտական ամրապնդման քայլերը, ինչի վկայությունը հետագա զարգացումներն են:

Նման մտավախություն ունենալով՝ դեռ 1941 թ. օգոստոսի 30-ին Մոսկվայում Մեծ Բրիտանիայի դեսպան Սթաֆֆորդ Քրիփսը հայտնել էր արտգործնախարարությանը, որ Իրանի հյուսիսային շրջաններում

<sup>44</sup> **Fatemi N.S.**, նշվ. աշխ., էջ 187-188:

<sup>45</sup> St u Договор о Союзе между Союзом Советских Социалистических Республик, Великобританией и Ираном. Известия, 30 января, 1942:

<sup>46</sup> St u նույն տեղը:

խորհրդային երկարատև ռազմակալումը կարող է շատ վտանգավոր լինել, նամանավանդ որ խորհրդային կողմն այդ հատվածում սկսել էր արդեն քայլեր ձեռնարկել ձկնորսական իրավունք ձեռք բերելու համար: Քրիպսը կարծում էր, որ ռազմակալումը սահմանափակելու լավագույն միջոցը իրանական կողմի հետ համաձայնագիրն է: Եվ նա այդ հարցում փոքր դեր չխաղաց<sup>47</sup>:

Մեծ ուշադրության է արժանի Ու. Չերչիլի և Ի. Ստալինի նամակագրությունը: Ստալինը պահանջում էր Չերչիլից 25-30 դիվիզիա իջեցնել Ռուսաստանի հյուսիսային հատված՝ մասնավորապես Արխանգելսկ, կամ անցկացնել Իրանի տարածքով դեպի ԽՍՀՄ հարավային սահմանները՝ ռազմական համագործակցության համար: Դրան ի պատասխան՝ Չերչիլը նշում է. «Մեր շահերն այստեղ (Իրանում) համընկնում են հետևյալում, առաջին՝ դեպի Արևելք գերմանական ներթափանցման դեմ պատնեշ ստեղծելը և երկրորդ՝ դեպի Կասպից ծովի ավազան բեռնափոխադրման միջանցք ապահովելը: Եթե ձեզ ցանկալի է հետ կանչել Իրանում գտնվող հինգ կամ վեց ռուսական դիվիզիաները, որպեսզի դրանք օգտագործվեն ռազմաճակատում, ուրեմն մեզ վրա ենք վերցնում ամբողջ պատասխանատվությունը կարգուկանոն հաստատելու և բեռնափոխադրման երթուղու անվտանգությունն ապահովելու համար: Ես խոստանում եմ Բրիտանիայի անունից, որ մենք չենք ձգտի ռուսական շահերի հաշվին որևէ օգուտ քաղել ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ դրանից հետո: Ամեն դեպքում՝ շատ շտապ եռակողմ համաձայնագիր կնքելը անհրաժեշտ է ներքին անկարգություններից խուսափելու համար, որոնք կարող են հանգեցնել մատակարարման երթուղիներով բեռների փոխադրման դադարեցմանը»<sup>48</sup>:

Չերչիլի նամակից ակնհայտ է դառնում, որ բրիտանական կողմն արդեն մտավախություն ուներ, որ խորհրդային ռազմակալումը Իրանում կարող է երկար տևել և ունենալ վատ հետևանքներ, ուստի շուտափույթ համաձայնագիր կնքելու հարցում, որում կնշվեին ռազմակալման ժամկետները, առաջին հերթին շահագրգռված էր բրիտանական կողմը. դա նրա շահերից էր բխում:

Այսպիսով, բերված փաստարկների հիման վրա կարելի է եզրակացնել.

- Բրիտանական կառավարությունն էր առաջարկել Խորհրդային Միությանը՝ ներխուժել Իրան և այն ռազմակալել:

- Առաջարկը հիմնված էր այն հաշվարկի վրա, որ Իրանի երկկողմանի ռազմակալումը շատ ավելի հեշտ ու արդյունավետ կլիներ ռազմական տեսանկյունից, քանի որ մյուս զորամիավորումները պատերազմում էին տարբեր ռազմակաճատներում, սակայն բրիտանական

<sup>47</sup> Sté u Eshraghi F., նշվ. աշխ. էջ 328:

<sup>48</sup> Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой отечественной войны 1941-1945гг., т. 1 (июль 1941-ноябрь 1945г.). М., 1986, с. 39.

կողմը սխալվեց այն հարցում, թե Խորհրդային Միությունը երկար չի դիմանա գերմանական ռազմական հզոր մեքենայի ճնշմանը, առաջիկա մի քանի ամսում պարտություն կկրի և օրհասական պահին ստիպված կլինի զորքերը դուրս բերել Իրանից: Այդ դեպքում Իրանում կհաստատվեին միայն Մեծ Բրիտանիայի ռազմական ներկայությունն ու վերահսկողությունը:

- Խորհրդային Միությունն էլ իր հերթին երբեք չէր դադարել հետաքրքրություն ցուցաբերել Իրանի հյուսիսում գտնվող նավթային պաշարների նկատմամբ, և իր անվտանգության սպառնալիքի չեզոքացման պատճառաբանությամբ Իրանի ռազմակալումը հրաշալի առիթ էր վաղեմի երազանքն իրականացնելու, ինչպես նաև Իրանի հյուսիսային հատվածը՝ Ատրպատականը, բուն Իրանից բաժանելու և ԽՍՀՄ-ին կցելու համար:

- Բրիտանացիների հիմնական նպատակն էր նավթահորերի վերջնական գրավումը:

- Տվյալ ժամանակաշրջանում գերմանացիներին բացահայտ աջակցելու և սատարելու՝ Ռեզա շահին ներկայացվող մեղադրանքը բացարձակապես անհիմն էր, և գերմանացի 700 տեխնիկական մասնագետները, որոնց թվում էին նաև նրանց կանայք և երեխաները, չէին կարող երբեք սպառնալ Բրիտանիայի կամ ԽՍՀՄ-ի անվտանգությանը:

- Ռեզա շահին գահից հեռացնելու պատճառը հիմնականում նավթի գների շուրջ ծագած տարաձայնություններն էին Մեծ Բրիտանիայի հետ, և վերջինիս պատեհ առիթ էր պետք, որը և դարձավ Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակումը:

- Ռազմակալումից հետո եռակողմ համաձայնագրի կնքման նախաձեռնողը և հիմնական շահագրգիռ կողմը բրիտանական կառավարությունն էր, քանզի մտավախություն կար, որ Խորհրդային Միությունը կարող է հիմնովին ամրապնդվել Իրանում:

**АЙК СОГОМОНЯН – Оккупация Ирана британскими и советскими войсками (1941г.).** – 25 августа 1941 года в ходе Второй мировой войны проводилась совместная англо-советская операция по вводу войск СССР и Великобритании на территорию Ирана под кодовым наименованием операция «согласие». По официальной версии целью операции являлось обеспечение гарантированной безопасности южного маршрута поставок в СССР по ленд-лизу, взятие под контроль иранских нефтяных месторождений с целью предотвращения их захвата Германией, а также исключение возможности выступления Ирана на стороне стран гитлеровской оси. В ходе операции шах Ирана, Реза Пехлеви был принужден к отречению от престола в пользу своего сына Мохаммеда Реза Пехлеви. 29 января 1942 года между СССР, Великобританией и Ираном был подписан Договор о союзе. Союзники обязались «уважать территориальную целостность, суверенитет и политическую независимость Ирана».

**Ключевые слова:** *Иран, Великобритания, СССР, оккупация, Вторая мировая война, Реза шах, Англо-иранская нефтяная компания*

**HAYK SOGHOMONYAN – *The British and Soviet Occupation of Iran (1941).* –**

On 25 August, 1941 British and Soviet troops invaded Iran. At the time, and for many years afterward, the main reason for this was that German influence in Iran at start of the World War 2 was noticeable. Reza Shah Pahlavi's reliance on German technology for his ambitious development plans worried the Allies, who feared the Germans might make Iran a base for operations against the Soviet Union. In addition, in the wake of the June 1941 German invasion of the USSR, the Allies needed Iran as a channel for supplies to the Soviet Union. Furthermore, London had the defense of India in mind, and it wanted to safeguard its oilfields and refineries in Iran. Reza Shah abdicated in favor of his twenty-two year old son Mohammad Reza. In January 1942, Iran, the Soviet Union, and Britain signed the Tripartite Treaty, guaranteeing Iran's territorial sovereignty and political independence.

**Key words:** *Iran, Great Britain, USSR, occupation, WW2, Reza Shah, Anglo-Iranian Oil Company*



## ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ. ԱՄԵՆ ԻՆՉ ՈՐՈՇՈՒՄ ԵՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

### ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Հոդվածի շրջանակներում քննարկվում են ադրբեջանա-արցախյան վերջին լայնածավալ պատերազմից հետո ձևավորված տարածաշրջանային նոր status quo-ն ու դրա ազդեցությունը Արցախյան հակամարտության կարգավորման վրա: Հետազոտության գլխավոր նպատակն է բացահայտել Արցախի արժեքային նշանակությունը հակամարտության մեջ ներգրավված ինչպես միջազգային դերակատարների, այնպես էլ հակամարտության հիմնական կողմերի համար, ցույց տալ Ադրբեջանի և Հայաստանի հասարակություններում հիմնահարցի արժեքային փոխակերպումների էվոյուցիան: Հոդվածում հիմնավորվում է այն թեզը, որ կոնֆլիկտների կարգավորման համատեքստում բանակցային հայեցակարգերի ձևավորման առումով արժեքներն ունեն վճռորոշ նշանակություն: Ընդ որում, կողմերը ինչպես բանակցությունների հիմքում են դնում որոշակի արժեքներ, այնպես էլ կոնֆլիկտի բուն առարկայի նկատմամբ առաջ են քաշում տարբեր արժեքային նախապատվություններ: Մասնավորապես, ցույց է տրվում, որ Արցախյան առաջին պատերազմի հաղթական ավարտից հետո հայ հասարակության հանրային-քաղաքական դիսկուրսում նկատվում են Արցախի արժեքայնության նվազման միտումներ: Միաժամանակ, ադրբեջանական հանրության շրջանում ընդհակառակը՝ շոշափելիորեն բարձրացվում է հակամարտության ընկալման արժեքային նշանակությունը: Հեղինակը կարևորում է այն գաղափարը, համաձայն որի՝ հայկական պետականության նախագծի լիարժեք ու արդյունավետ գործառության համար Արցախի արժեքային նշանակության բարձրացումը, դրա հաշվառմամբ՝ ՀՀ ազգային անվտանգության ու բանակցային նոր հայեցակարգի ձևավորումը կենսական և ռազմավարական նշանակության ունեն:

**Բանալի բառեր** – *Արցախյան հակամարտություն, հետպատերազմյան status quo, բանակցային հայեցակարգ, «արժեքային սահման», «սահմանային արժեքներ»*

### Ներածություն

Ադրբեջանա-արցախյան վերջին լայնածավալ պատերազմն ու 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրված Հրադադարի եռակողմ հայտարարությունը տարածաշրջանում աշխարհաքաղաքական նոր իրողություններ ստեղծեցին, որոնք ուղղակիորեն ազդեցին Արցախյան կարգավորման բանակցային գործընթացի վրա: Բանն այն է, որ նախորդ status quo-ն ձևավորվել էր Արցախյան առաջին պատերազմի արդյունքում՝ 1994 թ. մայիսի 12-ին ստորագրված Հրադադարի հաս-

տատման եռակողմ համաձայնագրի տեսքով<sup>1</sup>: Այն արտացոլում էր հայկական կողմերի էական ռազմական հաջողությունները, որոնք թույլ էին տվել ՀՀ և Արցախի շուրջ ձևավորել անվտանգության կուռ համակարգ, հայկական երկու հանրապետությունների միջև ապահովել անխափան ցամաքային կապ, գրանցել ժողովրդագրական դրական տեղաշարժ և այլն: Ի դեպ, եթե 1994 թ. Հրադադարի հաստատման փաստաթղթում առկա էին հակամարտության երեք կողմերի՝ Ադրբեջանի, Հայաստանի և Արցախի պաշտպանության նախարարների ստորագրությունները, ապա 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը ստորագրվել էր համապատասխանաբար Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների կողմից<sup>2</sup>: Ընդ որում, վերահիշյալ երկու փաստաթղթերն ինչ-որ առումով խորհրդանշում են նաև հակամարտության կարգավորման բացասական փոխակերպման էվոյուցիան: Անցած տարիների ընթացքում և՛ միջազգային դերակատարների, և՛ հակամարտության անմիջական հատկապես հայկական կողմերի բանակցային դիրքորոշումները աստիճանաբար նահանջ ապրեցին, իսկ Ադրբեջանի՝ հակամարտության էության համառ և հետևողական նենգավոխման ռազմավարությունը նրան ընձեռեց շոշափելի առավելություններ հակամարտության հիմքում ընկած արժեքների, սկզբունքների և դիրքորոշումների խեղաթյուրման հարցում:

### **Արժեքները հակամարտությունների կարգավորման հարացույցի համատեքստում**

Հակամարտությունների կարգավորման հարացույցի շրջանակներում արժեքները կարևոր տեղ են զբաղեցնում: Բանն այն է, որ արժեքներն այն հիմքերն են, որոնց հաշվառմամբ սահմանվում են մեր կյանքի հիմնական սկզբունքներն ու կանոնները: Փաստորեն, արժեքների հիման վրա են ձևավորվում մեր աշխարհայացքն ու վերաբերմունքը շրջապատող իրականության նկատմամբ<sup>3</sup>: Ինչպես նշում է Ու. Լինքոլնը, արժեքները հավատալիքների ու վարքագծի որոշակի համակարգ են, որն արտացոլում է մարդկանց նախապատվությունները, ձգտումները, նպատակներն ու իդեալները<sup>4</sup>: Այլ կերպ ասած՝ արժեքները յուրաքանչյուր անհատի, խմբի, ազգի, կազմակերպության կամ պետության համար հատուկ կարևորություն և բացարձակ նշանակություն ունեցող գործոններ են, որոնցից ոչ մի պարագայում չի կարելի հրաժարվել: Բացի այդ՝ արժեքները, ըստ էության, այն չափանիշներն են, որոնց հիման վրա կոնկրետ որևէ կողմ, իր պահանջումներից էլնելով,

<sup>1</sup> Տե՛ս *Соглашение о прекращении огня*, <http://vn.kazimirov.ru/doc10.htm> (մուտք՝ 15.10.2022):

<sup>2</sup> Տե՛ս «Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации», <http://www.kremlin.ru/events/president/news/64384> (մուտք՝ 22.10.2022)

<sup>3</sup> Տե՛ս *Доналдсон М.* Умение вести переговоры. М., 2000, էջ 32:

<sup>4</sup> Տե՛ս *Линкольн У. и др.* Переговоры. СПб., 1998, էջ 23:

ձևավորում է սեփական շահերը<sup>5</sup>: Հակամարտությունների կարգավորման արժեքային հիմքերին անդրադարձն ունի գիտագործնական այլ նշանակություն ևս. այն թույլ է տալիս պարզել կողմերի «կարմիր գծերը» կամ այլ կերպ ասած՝ «արժեքային սահմանները»<sup>6</sup>, որոնք երբեք և ոչ մի պայմանով կողմերը չեն պատրաստվում հասել: Բանակցություններին ներգրավված սուբյեկտների՝ ինչպես երրորդ կողմերի (միջնորդներ, դիտորդներ, հաշտարարներ և այլն), այնպես էլ բանակցային հիմնական կողմերի «արժեքային սահմաններին» ճշգրտումը շատ կարևոր ռազմավարական նշանակություն ունի: Օրինակ՝ երրորդ կողմերի ներգրավվածության և կոնֆլիկտի կարգավորման հարցում շահագրգռվածության առումով կարևոր է հակամարտության էության արժեքային ընկալումների պարզաբանումը: Իսկ երբ բանակցությունների անմիջական մասնակից որևէ կողմի համար որոշված է իր «արժեքային սահմանը», դրանով իսկ ավելի ազատ, խոհեմ ու շրջահայաց գործելու հնարավորություն է ստեղծվում: Բացի այդ, արժեքային սահմանների հստակեցումը օգնում է նաև պարզելու այն հնարավոր փոխզիջումները, որոնք կողմերից որևէ մեկը կարող է կատարել՝ իր նպատակին հասնելու համար: Միաժամանակ, ուրվագծվում են այն եզրերը, որից այն կողմ արդեն, բանակցային մեթոդներով համաձայնության գալու հնարավորությունները սպառված համարելով, բանակցության սուբյեկտները կարող են դիմել այլընտրանքային տարբերակներին:

Հակամարտությունների կարգավորման համատեքստում արժեքային հիմքերի ուսումնասիրությունը կարևորվում է նաև բանակցությունների ընդհանուր հայեցակարգի ձևավորման առումով: Բանն այն է, որ հակամարտող կողմերի բանակցային հայեցակարգերում, ըստ էության, արտացոլվում են բանակցությունների սուբյեկտների հիմնական արժեքները, նպատակները, կողմնորոշումները, հիմնարար սկզբունքները, խաղի միասնական կանոնները, որոնց պետք է հետևեն բանակցող կողմերը: Այդ տեսանկյունից բանակցությունների հայեցակարգը չափազանց բարդ միավոր է: Միաժամանակ այն բանակցային գործընթացի համեմատաբար կայուն և հաստատուն տարրերից է: Իհարկե, գործնականում չի բացառվում, որ ընթացքում փոփոխություններ մտցվեն նաև բանակցությունների ընդհանուր հայեցակարգում: Դա հնարավոր է հիմնականում քաղաքական երկարատև բանակցությունների ժամանակ, երբ կարող են տեղի ունենալ ինչպես գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխություններ, ուժերի հարաբերակցության տեղաշարժ հակամարտող կողմերի միջև, այնպես էլ հակամարտող հասարակություններում հիմնական արժեքների համակարգային փոփոխություններ, որոնք էլ ուղղակիորեն կարող են ազդել կողմերի ար-

<sup>5</sup> Տե՛ս **Лебедева М.** Политическое урегулирование конфликтов: подходы, решения, технологии. М., 1999, էջ 29:

<sup>6</sup> Տե՛ս **Խ. Գալստյան**, Բանակցային տեխնոլոգիաներ, Եր., 2016, էջ 48:

ժեքային գերակայությունների ու դրանցից բխող բանակցությունների հայեցակարգի վրա: Այս ընդհանուր օրինաչափություններից զերծ չէ նաև Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացը, որի ռեզուլցիայի վրա ազդում են ինչպես արտաձին, այնպես էլ ներաձին գործոնները: Առաջինները վերաբերում են հակամարտության կարգավորման գործընթացին ներգրավված միջազգային հիմնական դերակատարների արժեքային մոտեցումների փոփոխությանը, իսկ երկրորդը՝ հակամարտող հասարակությունների և քաղաքական ընտրանիների արժեքային փոխակերպումներին:

### **Հակամարտության արժեքային նշանակությունը. ի՞նչ է Արցախն «աշխարհի» համար**

Ինչպես արդեն նշվեց, էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման արագության վրա անմիջական ազդեցություն ունեն արտաձին գործոնները: Այժմ դիտարկենք Արցախյան հակամարտության հարցի վերաբերյալ միջազգային դերակատարների պատկերացումներն ու արժեքային նախապատվությունների էվոլյուցիոն զարգացումները: Բանն այն է, որ Արցախյան հիմնահարցը վաղուց է միջազգայնացվել և դուրս եկել լոկ Արցախ-Ադրբեջան կամ Հայաստան-Ադրբեջան ձևաչափից ու դարձել է համաշխարհային ուժային կենտրոնների փոխհարաբերությունների, ինչու չէ՝ նաև հակամարտության թատերաբեմ:

Դեռ խորհրդային «քրոնտոպում» Արցախյան հիմնահարցը, Ա. Սախարովի բնորոշմամբ, դարձավ Խորհրդային Միության հռչակած վերակառուցման քաղաքականության «փորձաքարը»<sup>7</sup>: Ոգևորված լինելով հրապարակայնության ու ժողովրդավարացման նոր քաղաքական կուրսի որդեգրման գաղափարներով, աջակցելով արցախահայության օրինական պահանջներին՝ խորհրդային մի խումբ մտավորականներ՝ Սախարովի գլխավորությամբ, փորձեցին հանդես գալ Արցախյան հիմնահարցի արդարացի հանգուցալուծման նախաձեռնություններով: Նույնիսկ 1988 թ. դեկտեմբերին մոսկովյան մտավորականները այցելեցին հակամարտության գոտի, հանդիպեցին ադրբեջանական խորհրդային ղեկավարության հետ՝ խնդրելով նրանց ականջալուր լինել արցախահայության հավաքական խնդրագրին՝ միանալու մայր հայրենիքին: Ինչպես հետո գրում է Սախարովը, Բաքվում նրա խնդրանքը Վեգիբովը շատ կտրուկ ընդհատեց ասելով. «Հողը չէն նվիրում, հողը գրավում են: Արյամբ»<sup>8</sup>: Մակայն, ի տարբերություն խորհրդային մտավորական ընտրանու, որ առաջնորդվում էր մարդու իրավունքների և հումանիստական վեհ գաղափարներով, խորհրդային կոմունիստական կուսակցական վերնախավը ավելի անդեմ ու հակա-

<sup>7</sup> Տե՛ս «Андрей Сахаров о Нагорном Карабахе». Ер., 1996, էջ 4:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 18:

մարտության էությանը չհամապատասխանող դիրքորոշումներ որդեգրեց՝ Արցախյան շարժումը որակելով որպես «ծայրահեղական» ու «ազգայնական» ուժերի նախաձեռնած սադրանք<sup>9</sup>: Հետագայում արդեն հենց կոնֆլիկտի բնույթի արժեքային սխալ ընկալումը, խնդրի ձևախեղումը, քաղաքականության հումանիզացումը, մարդու իրավունքներն և ազգերի ինքնորոշման սկզբունքները հարգելու փոխարեն Արցախյան հիմնահարցը սոցիալ-տնտեսական պատճառականությամբ<sup>10</sup> փաթեթավորելու անհաջող փորձերը հանգեցրին իրավիճակի հետագա թեժացմանն ու հակամարտության սաստկացմանը:

Արցախյան հակամարտության պատճառահետևանքային իրական հիմքերից խուսանավելու փորձերը նկատելի են նաև մեր օրերում: Մասնավորապես, եթե 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության տեքստում առնվազն 5 անգամ կիրառվում է «Լեռնային Ղարաբաղ» ձևակերպումը, ապա 2022 թ. հոկտեմբերի 31-ին Սոչիում տեղի ունեցած ՌԴ, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների բանակցություններում և դրան հետևած համատեղ հայտարարությունում չկա գեթ մեկ հիշատակում Լեռնային Ղարաբաղի մասին<sup>11</sup>: Խնդրի էության նման ձևախեղումը, Լեռնային Ղարաբաղի գոյության, հասկապես նրա ինքնուրույն քաղաքական ինքնության անտեսումը բացասական ազդեցություն կարող է ունենալ հակամարտության երկարաժամկետ կարգավորման ջանքերի վրա:

Արցախյան հիմնահարցի վերաբերյալ «Հավաքական Արևմուտքի» արժեքային ընկալումները, կախված աշխարհաքաղաքական համատեքստից, նույնպես որոշակի էվոյուցիայի են ենթարկվել: Բանն այն է, որ մինչև Խորհրդային Միության կազմալուծումը արցախահայերի իրենց իրավունքների համար պայքարը «առաջադեմ» մարդկության ու «միջազգային հանրության» անվերապահ աջակցությանն ու հավանությանն էին արժանանում: Եվրոպական խորհրդարանը դեռ 1988 թ. բանաձևով դատապարտում էր Խորհրդային Ադրբեջանում հայերի նկատմամբ զանգվածային բռնության ղեկավարները, պաշտպանում էր հայրենիքին վերամիավորվելուն Լեռնային Ղարաբաղի հայության ձգտումները, կոչ էր անում խորհրդային ղեկավարությանը ապահովել Ադրբեջանի տարածքում բնակվող շուրջ 500 հզ. հայերի անվտանգությունը<sup>12</sup>: Նմանապես, 1989 թ. ԱՄՆ Կոնգրեսի բանաձևով անվերապահ աջակ-

<sup>9</sup> Տե՛ս Դե Վաալ Դ. «Черный сад». Армения и Азербайджан между миром и войной, М., 2014, [http://news.bbc.co.uk/hi/russian/in\\_depth/newsid\\_4640000/4640183.stm](http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_4640000/4640183.stm) (մուտք՝ 07.11.2022):

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>11</sup> Տե՛ս «Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации», 31 октября 2022г., <http://www.kremlin.ru/supplement/5860> (մուտք՝ 08.11.2022):

<sup>12</sup> Տե՛ս RESOLUTION on the situation in Soviet Armenia, Docs. B2-538 and 587/88 // Official Journal of the European Communities, N o C 235/86, [https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:JOC\\_1988\\_235\\_R\\_0080\\_01&from=EN](https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:JOC_1988_235_R_0080_01&from=EN) (մուտք՝ 07.11.2022թ.):

ցություն էր հայտնվում «Լեռնային Ղարաբաղի ժողովրդին՝ հակամարտության խաղաղ և արդարացի լուծման իր ջանքերում», հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ «80%-անոց հայկական մեծամասնությունը բազմիցս արտահայտել է իր ցանկությունը ինքնուրույն որոշելու սեփական ճակատագիրը», ինչպես նաև կոչ էր արվում խորհրդային ղեկավարությանը անաչառ քննություն իրականացնել և խստագույնս պատժել հայերի նկատմամբ զանգվածային բռնությունների կազմակերպիչներին և իրականացնողներին<sup>13</sup>։ Արդեն 1992 թ. հայկական լոբբիստական կազմակերպությունների ակտիվ ջանքերով ԱՄՆ խորհրդարանի երկու պալատները ընդունեցին 907 բանաձևը, որը հետխորհրդային տարածքի երկրներին ցուցաբերվող օգնության համար նախատեսված «Ազատության աջակցության ակտի» լրացումն էր։ Այդ բանաձևով ամերիկյան վարչակազմերը սահմանափակված էին Ադրբեջանին օգնություն տրամադրելու հարցում, քանի դեռ «ԱՄՆ նախագահը չէր պարզել և զեկուցել Կոնգրեսին, որ Ադրբեջանի կառավարությունը ակնհայտ քայլեր է ձեռնարկում դադարեցնելու բոլոր շրջափակումները և ուժի կիրառման այլ ագրեսիվ ձևերը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ»<sup>14</sup>։ Մակայն 2001 թ. հետո միջազգային ահաբեկչության դեմ պայքարի պատրվակով ամերիկյան նախագահները սկսեցին շրջանցել 907 բանաձևը և ռազմական, ֆինանսական ուղիղ օգնություն տրամադրեցին Ադրբեջանին։ Ինչպես նշում է Բ. Շաֆերը, Արցախյան հակամարտության վերաբերյալ ամերիկյան վարչակազմերի դիրքորոշումները խիստ հակասական ձևակերպումներ էին պարունակում։ Օրինակ մի կողմից ճանաչվում էր «Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը», մյուս կողմից նշվում էր, որ «Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը Մինսկի խմբի մասնակից կողմերի միջև բանակցությունների առարկա է», մեկ այլ փաստաթղթում պարզ չէր «Հայաստանի՝ թե՛ Լեռնային Ղարաբաղի զինված կազմավորումներն են օկուպացրել Ադրբեջանի տարածքները», կամ պետքարտուղարության որոշ փաստաթղթերում խոսվում էր այն մասին, որ «Ադրբեջանը եմբարգո է կիրառում Հայաստանի հետ հաղորդակցության վրա», մեկ այլ տեղ ամրագրվում էր «Հայաստանի բլոկադայի մասին» դրույթը<sup>15</sup>։ Մինչդեռ նմանօրինակ ձևակերպումների մեջ հսկայական տարբերություններ կան։ Արդյունքում, եզրակացնում է հեղինակը, Ղարաբաղյան հակամարտության էության վերաբերյալ ԱՄՆ դիրքորոշման նման «տերմինաբանական կազուսները» հակամարտող կողմերին թույլ էին տալիս հանգել երբեմն իրարամերժ ու խիստ հակասա-

<sup>13</sup> Sե՛ u A joint resolution to express United States support for the aspirations of the people of Nagorno-Karabagh for a peaceful and fair settlement to the dispute, S.J.Res.178, <https://www.congress.gov/bill/101st-congress/senate-joint-resolution/178/text> (մուսը՝ 07.10.2022թ.)։

<sup>14</sup> Restriction on assistance to Azerbaijan, SEC. 907 // Public Law, 1992, October 24, p. 102.

<sup>15</sup> Sե՛ u **Шафер Б.** США и Карабахский конфликт, [http://news.bbc.co.uk/hi/russian/in\\_depth/newsid\\_3548000/3548360.stm](http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_3548000/3548360.stm) (մուսը՝ 14.11.2022)։

կան գնահատականների<sup>16</sup>:

Ընդհանրապես կարելի է փաստել, որ Արցախյան կարգավորման հարցում ամերիկյան արտաքին քաղաքականությանը բնորոշ է դուալիզմը: Այն մի կողմից պայմանավորված է ներքաղաքական իրողություններով, հատկապես նախընտրական դիրքավորումներով, մյուս կողմից՝ երկակի ստանդարտներով, որոնք հատկապես նկատելի են ժողովրդավարություն vs տնտեսական շահեր երկընտրանքների համատեքստում: Ամերիկյան քաղաքական ուժերը և նրանց առաջնորդները հայկական «օրակարգին» և նրա բովանդակային մաս կազմող Ցեղասպանության, Արցախյան հակամարտության կարգավորման հարցերին ավելի շատ անդրադառնում են ազգությամբ հայ ամերիկյան քաղաքացիների համակրանքն ու քվեն շահելու նպատակով: Մեկ միլիոնից ավելի էթնիկ հայ փոքրամասնության ձայների համար պայքարը պահանջում է «հայկական օրակարգերի» նկատմամբ հստակ դիրքորոշումների և նախընտրական խոստումների ձևակերպում, ինչն էլ շատ հաճախ ընկած է լինում ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների տարածաշրջանային այցերի ու պաշտոնական հայտարարությունների հիմքում: Պատահական չէ, որ որոշ փորձագետներ ԱՄՆ Կոնգրեսի խոսնակ Ն. Փելոսիի Հայաստան այցը (18. 09. 2022) դիտարկում էին հենց այդ լույսի ներքո՝ որպես ազգությամբ հայ ամերիկյան ընտրողների ձայների համար քարոզարշավի բաղադրիչ<sup>17</sup>: Հատկանշական է, որ Արցախի դեմ 2020 թ. սեպտեմբերին Ադրբեյջանի սանձազերծած ռազմական ագրեսիան նույնպես համընկնում էր ԱՄՆ նախագահական ընտրությունների քարոզչության ժամանակահատվածին, որի համատեքստում և՛ գործող նախագահ Դ. Թրամփը, և՛ նրա հիմնական մրցակից Զ. Բայդենը խնդրին մոտենում էին բացառապես նախընտրական պայքարի տրամաբանությունից ելնելով: Ընդ որում, Արցախյան հակամարտության հարցում ավելի ակտիվ հրապարակային դիրքորոշումներ էր հայտնում Զ. Բայդենը: Եթե Թրամփը բավարարվում էր իրադարձություններին «ուշի-ուշով հետևելու» մասին հայտարարություններով<sup>18</sup>, ապա նրա հիմնական մրցակիցը՝ Բայդենը, միաժամանակ երկու լարերի վրա էր խաղում՝ մի կողմից քննադատելով ԱՄՆ գործող վարչակազմին անգործության, իսկ մյուս կողմից՝ թիրախավորելով Ռուսաստանին, որը շարունակում էր հակամարտող կողմերին «ցինիկաբար զենք տրամադրելու» քաղաքականությունը<sup>19</sup>:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>17</sup> Տե՛ս **Ս. Մարգարյան**, Փելոսիի այցի մանրամասները..., <https://www.aysor.am/am/news/2022/09/16/> (մուտք՝ 20. 11. 2022), **Ս. Դանիելյան**, Նենսի Փելոսիի այցի հիմնական նպատակը հայերի ձայներն են, <https://168.am/2022/09/17/1766241.html> (մուտք՝ 21.11.2022):

<sup>18</sup> Տե՛ս «Վաշինգտոնում ուշադրությամբ հետևում են Լեռնային Ղարաբաղում ծավալվող իրադարձություններին», <https://www.azatutyun.am/a/30862533.html> (մուտք՝ 28.11.2022):

<sup>19</sup> **Biden J.** Hostilities in Nagorno-Karabakh – Statement by Vice President Joe Biden, <https://joebiden.com/2020/09/27/hostilities-in-nagorno-karabakh-statement-by-vice-president-joe-biden/#> (մուտք՝ 28.11.2022):

Իսկ ինչ վերաբերում է տնտեսական շահերի (հատկապես դրա էներգետիկ բաղադրիչի) ու դրանցից բխող արտաքին քաղաքականության առաջնահերթությունների ձևակերպմանը, ապա այդ գործոնն ավելի քան իշխող է ԱՄՆ արտաքին քաղաքական գերակայություններում: Մասնավորապես, Արցախյան առաջին պատերազմի ավարտից և 1994 թ. հրադադարի համաձայնագրից հետո նավթագազամուղների կառուցումն ու ադրբեջանական նավթի ու գազի պաշարների դեպի եվրոպական էներգետիկ շուկաներ տեղափոխումը դարձան տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության հիմնական առաջնահերթությունը<sup>20</sup>: Կասպյան տարածաշրջանում էներգետիկ դիվանագիտության նպատակով ԱՄՆ պետքարտուղարության կազմում ստեղծվեց նոր դեսպանական պաշտոն, որի քաղաքական նշանակությունն էլ ավելի ընդգծելու համար այդ պաշտոնին նշանակվողները օժտվում էին ընդհուպ նախագահի խորհրդականի կարգավիճակով<sup>21</sup>: Իր հերթին, ինչպես նշում է հնդիկ փորձագետ Փ. Վայշնավը, Ադրբեջանը, լավ գիտակցելով սեփական էներգետիկ ռեսուրսների «դիվանագիտական արժեքը», սկսեց դրանցով «հրապուրել» ամերիկյան էներգետիկ կազմակերպություններին ու կառավարությանը, որոնց գերակայություններում նույնպես Բաքվի հետ հարաբերությունների կառուցման հիմնարար առաջնահերթություն հռչակվեց «էներգետիկ գայթակղման» քաղաքականությունը<sup>22</sup>: Այն բանից հետո, երբ ադրբեջանական նավթագազային հատվածի շահագործման մեծ մասն անցավ արևմտյան ընկերություններին, իսկ Ադրբեջանը սկսեց դիրքավորվել որպես ռուսական էներգակիրների այլընտրանքային արտահանման և տարանցման հանգուցակետ, գնալով մեծացավ Բաքվի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նշանակությունը: Իսկ արևմտյան քաղաքակրթության հենասյուներ համարվող այնպիսի արժեքներ, ինչպիսիք են մարդու իրավունքների հարգման և պաշտպանության, ժողովրդավարության նորմերին համապատասխան հասարակական-քաղաքական հարաբերությունների կազմակերպման սկզբունքները, իրենց տեղը զիջեցին ժառանգական ու ինքնակալական կառավարման միտումներին, էթնիկական հողի վրա ծայր առած ատելության ու հայատյացության պաշտոնական քարոզին, որի գաղափարական հիմնասյուների վրա մեծացավ ադրբեջանական մի ողջ սերունդ: Ընդհանրապես, ինչպես կարծում է ամերիկյան վերլուծաբան Թ. Ֆրիդմենը, որքան բարձր է նավթի գինը էներգակիրների համաշխարհային շուկայում, այնքան

---

<sup>20</sup> Sté u **Rumer E., Sokolsky R., Stronski P.** U.S. Policy Toward The South Caucasus, [https://carnegieendowment.org/files/CP\\_310\\_Rumer\\_Sokolsky\\_Stronski\\_Caucusus\\_Final\\_Web.pdf](https://carnegieendowment.org/files/CP_310_Rumer_Sokolsky_Stronski_Caucusus_Final_Web.pdf) (մուտք՝ 25.11.2022):

<sup>21</sup> Sté u նույն տեղը:

<sup>22</sup> Sté u **Вайншав П.** Энергетическая карта как основа азербайджано-американских отношений, <https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/energeticheskaya-karta-kak-osnova-azerbaydzhan-amerikanskikh/> (մուտք՝ 28.11.2022):



թույլ է ժողովրդավարությունը նավթարդյունահանող երկրներում: Իսկ որքան թույլ է ժողովրդավարությունը, այնքան շատ են մարդու իրավունքների, ազատությունների սահմանափակման և բռնապետական կառավարման հակումները<sup>23</sup>:

Ադրբեջանն այս օրինաչափության լավագույն օրինակներից է, ինչպես նաև ցուցիչ է այն բանի, որ «նավթ, թե՛ ժողովրդավարություն» դիլեմայի հարցում նույնիսկ զարգացած ժողովրդավարություններն ընտրում են նավթն ու չեն խորշում ակնհայտ ավտորիտար երկրների ու առաջնորդների հետ համագործակցությունից: Հատկապես 2022 թ. ամռանը ԵՄ և Ադրբեջանի միջև ստորագրված նոր գազային համաձայնագիրը բուռն քննադատությունների տեղիք տվեց: Ինչպես հայտնի է, դրան հաջորդեց Ադրբեջանի հերթական ագրեսիան արդեն բուն ՀՀ ինքնիշխան տարածքների նկատմամբ: Եվրոպական խորհրդարանի որոշ պատգամավորներ իրենց արդարացի ձայնը բարձրացրին և հանդես եկան ԵՄ քաղաքականության քննադատությամբ, որը, փաստորեն, հանուն ադրբեջանական գազի պատրաստ է թափելու հայերի «արյունը»<sup>24</sup>: Քննադատելով ԵՄ դեկլարությանն ու մասնավորապես Ֆրանսիայի ԱԳՆ-ին՝ ֆրանսիացի սենատոր Վ. Բուայեն հայտարարեց. «Հայաստանը մեր արժեքների, մեր քաղաքակրթության ու մշակույթի, մեր հավատալիքների մի մասնիկն է... Հայերը միայն մի բան են խնդրում. ժողովրդի սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունք: Ադրբեջանի դեմ սանկցիաներից հրաժարումը հավասարազոր է հայերի էթնիկ գտման ինդուլգենցիայի»<sup>25</sup>: Սակայն ընդհանուր առմամբ ԵՄ պաշտոնական դիրքորոշումը շարունակում է մնալ Ադրբեջանի հետ վստահելի հարաբերությունների կառուցումն ու համագործակցության խորացումը<sup>26</sup>: Իսկ միզուցե ժողովրդավարությունը վերջանում է այնտեղ, որտեղով սկսում է հոսել նավթը:

### **Հակամարտության արժեքային նշանակությունը. ի՞նչ է Արցախը կողմերի համար**

Եթե հակամարտությունների արժեքային ընկալման արտածին գործոններին անդրադարձը նպատակաուղղված էր խնդրո առարկայի վերաբերյալ արտաքին դերակատարների մոտեցումների բացահայտմանը, ապա ներածին գործոններն ուղղակիորեն առնչվում են հակամարտության անմիջական կողմերի մոտ ձևավորված և գերիշխող արժեքային նախապատվությունների և դրանց հիմքով քաղաքական ու

<sup>23</sup> Տե՛ս **Friedman Th.** The First Law of Petropolitics, <https://foreignpolicy.com/2009/10/16/the-first-law-of-petropolitics/> (մուտք՝ 01.12.2022):

<sup>24</sup> Տե՛ս Վ. Բուայեի էլույթը Ֆրանսիայի սենատում, <https://twitter.com/valerieboyer13/status/1582748286636564481>, (մուտք՝ 01.12.2022):

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Տե՛ս Statement by President von der Leyen with Azerbaijani President Aliiev, [https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/statement\\_22\\_4583](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/statement_22_4583)

բանակցային դիրքորոշումների կառուցմանը: Բանն այն է, որ Արցախյան կարգավորման համատեքստում կողմերի արժեքային հիմքերի ու «արժեքային սահմանների» վերհանումը թույլ է տալիս պարզել, թե ինչ նշանակություն ունի Արցախը կողմերի համար, և հանուն Արցախի ինչ քայլերի են պատրաստ դիմելու հակամարտության մեջ ներգրավված հիմնական դերակատարները: Թվում է, թե գոնե հայկական հասարակական-քաղաքական դիսկուրսում այս հարցադրման կարիքը չպետք է զգացվեր, քանի որ հայերն այս տարածաշրջանում բնիկ ժողովուրդ են: Մենք՝ հայերս, այստեղ բնակվել ենք հազարամյակներ շարունակ՝ ստեղծելով հին մշակույթ և պատմություն<sup>27</sup>, որը մեր պատմական հիշողության մեջ ամրագրված է հայրենիքի գաղափարով<sup>28</sup>: Հատկապես տպավորիչ է Արցախի քրիստոնեական ժառանգությունն ու հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում նրա ունեցած դերը: Քրիստոնեության տարածումը Հայոց աշխարհի արևելյան գավառներում, այդ թվում և Արցախում, սկիզբ է առնում դեռևս I դարից և ուղղակիորեն առնչվում է Թադևոս և Բարդուղիմեոս առաքյալների ու նրանց աշակերտների գործունեությանը: Ինչպես նշում է Վ. Բալայանը, «Ս.Թադևոսի նահատակությունից հետո կիսատ գործը շարունակեցին նրա աշակերտները, որոնցից մեկը՝ Եղիշեն, Երուսաղեմի առաջին հայրապետ Սուրբ Հակոբից ձեռնադրություն ստանալով, քրիստոնեություն է տարածել Արցախում և Ուտիքում»<sup>29</sup>: Թադևոս առաքյալի աշակերտներից մեկ ուրիշը՝ Դադին, Արցախում քրիստոնեություն է քարոզել և այստեղ էլ նահատակվել, որի մասունքներն ամփոփված են Արցախի քրիստոնեական ժառանգության գլուխգործոցներից մեկում՝ Դադիվանքում<sup>30</sup>: Հայոց մեծ դարձից հետո Արցախում քրիստոնեության տարածումը նոր շունչ է ստանում: Գրիգոր Լուսավորիչը IV դարում Արցախում հիմնում է եկեղեցիներ, իսկ Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերի գյուտից հետո հենց Արցախի Ամարաս վանքում է բացում առաջին դպրանոցներից մեկը<sup>31</sup>: Տպավորիչ է նաև միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքում քրիստոնեական դավանաբանության ամրապնդման ու ազգային-ազատագրական պայքարի առաջնորդման գործում Արցախի դերը՝ հատկապես Գանձասարի կաթողիկոսության հիմնումն ու ընդհուպ XIX դարի 20-ական թվականները ծավալած ակտիվ գործունեությունը:

Իսկ արդեն մեր օրերում, սխալված չենք լինի, էթե պնդենք, որ հայ

<sup>27</sup> Տե՛ս **Гамкрелидзе Т., Иванов В.** Индоевропейские языки и индоевропейцы. Тбилиси, 1987:

<sup>28</sup> Տե՛ս **Խ. Գալստյան**, Քաղաքական բանակցություններ. տեսություն և պրակտիկա, Եր., 2007, էջ 140:

<sup>29</sup> **Վ. Բալայան**, Արցախի պատմություն: Հնադարից մինչև մեր օրերը, Եր., 2002, էջ 58:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 59:

<sup>31</sup> Տե՛ս Արցախի թեմի համառոտ պատմությունը, <https://artsakhdiocese.am/temi-patmutyun> (մուտք՝ 24.10. 2022)

ժողովրդի նորագույն պատմության ամենալուսավոր, քաջության ու անձնուրացության, հայի հավաքական անպարտելի կերպարի հիշատակության արժանի էջերից է Արցախյան շարժումը, որը, վերաճելով ազգային-ազատագրական պայքարի, վերստին ապացուցեց այս արևի տակ հայ ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ ու անկախ ապրելու անխախտ իրավունքը: 1988-ի ազգային-ազատագրական զարթոնքը, խորհրդային ու ադրբեջանական իշխանությունների դեմ մղվող անհավասար գոյակռիվը, ազգային համերաշխությունն ու համախմբվածությունը հանգեցրին Արցախի ազատագրմանն ու հայրենիքի այդ հատվածում անկախ պետականության հռչակմանը: Այդ առումով անժխտելի է շարժման նշանակությունը հայկական երկու հանրապետությունների հռչակման ու կայացման գործում<sup>32</sup>:

Միաժամանակ, տեսանելի էր նաև հետանկախության շրջանում Արցախի կարևորության ու արժեքայնության աստիճանական անկումը ինչպես ՀՀ քաղաքական ընտրանու, այնպես էլ հայաստանյան հասարակական գիտակցության շրջանակներում: Բանն այն է, որ հայ ժողովրդին ոգեշնչող Արցախյան շարժման ստեղծարար էներգիան մի կողմից բախվեց խորհրդային և ադրբեջանական ղեկավարության բիրտ ուժին, մյուս կողմից վերածվեց ավերման մոլուցքի ու ինքնառնչացման տենդի: Բիրտ ուժին փառքով դիմակայեցինք, հազարավոր հայորդիների պասիոնար էներգիան պարպվեց մարտի դաշտում՝ վերածվելով հայրենիքի ազատագրման բաղձալի նպատակի: Ներքին մարտահրավերները լիարժեք հաղթահարել չհաջողվեց: Հայաստանի անկախության հռչակումից շատ չանցած՝ շարժումը պառակտվեց: Երբեմնի հավատարիմ զինակիցները հայտնվեցին բարիկադների տարբեր կողմերում, իսկ ՀՀ քաղաքական կյանքում Արցախյան հիմնահարցը բազմիցս դարձավ ներքաղաքական շահարկումների ու լուրջ տարաձայնությունների առարկա: Արդյունքում՝ հանուն իշխանության մղվող ներտեսակային կոշտ պայքար, քաղաքական տասնյակ սպանություններ, սոցիալական ապատիա, զանգվածային անումիայի երեվոլյուցիոն ու անկախ հայրենիքից հեռանալու, օտար ավերում բախտ որոնելու անդառնալի ու չդադարող հոսք: Որպես ծանրագույն հետեվանք՝ հայ հասարակության գիտակցության մեջ ներարկվող թեզերը, թե «Մերզո ջան, լավ չես ապրելու, քանի դեռ Ղարաբաղի հարցը չի լուծվել» (Լ. Տեր-Պետրոսյան, 1997 թ.), «Ադդամը մեր հայրենիքը չէ» (Ս. Սարգսյան 2001 թ.), «ազատագրենք մեր քաղաքը դարաբաղցի տակաճախներից» (Ն. Փաշինյան, 2008 թ.), սոցիալական որոշ խմբերի մոտ աստիճանաբար ձևավորեցին «Ղարաբաղը բեռ է» մտայնությունը, մինչդեռ 2020 թ. 44-օրյա պատերազմն ու դրան հաջորդած իրադարձությունները ցույց տվեցին, որ Արցախը ոչ թե «բեռ» էր, այլ Հայաստանի Հանրապետության անվ-

<sup>32</sup> Տե՛ս **Խ. Գալստյան**, Փոքր ժողովրդի մեծ երազանքը. Արցախյան շարժումը հայոց ինքնության գոյաբանության համատեքստում // Գիտական Արցախ, 2019, № 1(2), էջ 83:

տանգության առաջնային պատվարը, որի թուլացումը ադրբեջանահայկական դիմակայությունը տեղափոխեց բուն ՀՀ ինքնիշխան տարածքներ և ի ցույց դրեց Ադրբեջանի ու Թուրքիայի աշխարհաքաղաքական նոր նկրտումների իրական ծավալները: Հետևաբար, Արցախի արժեքային նշաձողի բարձրացումն ու դրա հաշվառմամբ՝ ՀՀ ազգային անվտանգության ու բանակցային նոր հայեցակարգի ձևավորումը կենսական և ռազմավարական խորքային նշանակություն ունեն հայկական պետությունների արդյունավետ գործառության համար:

Եթե դիտարկենք Արցախյան հիմնահարցի վերաբերյալ Ադրբեջանի հասարակական-քաղաքական դիսկուրսի տեղաշարժերը, ապա կնկատենք հայկականի ճիշտ հակառակ միտումները: Մասնավորապես, Արցախյան առաջին պատերազմից հետո ադրբեջանական հասարակության շրջանում ձևավորվեց արժեքային նշանակություն ունեցող գաղափարական մի քանի հավատամք, որոնց նպատակն էր հասարակական գիտակցության մակարդակում բարձրացնել Արցախի արժեքային նշանակությունն ու այն դարձնել ազգային ինքնագիտակցության ու ազգային գաղափարին համարժեք մեծություն: Ղարաբաղի տարածքի սրբագործման ու բացարձակ ազգային արժեքի ընկալման փորձերը նկատվում են 2000-ականներից հետո: Օրինակ՝ Ադրբեջանում շատերը դասագրքային են համարում Հ. Ալիևի թևավոր դարձած խոսքերը, որ «առանց Շուշի չկա Ղարաբաղ, իսկ առանց Ղարաբաղ չկա Ադրբեջան»<sup>33</sup>: Ուշքի գալով Արցախյան առաջին պատերազմի պարտության վերքերից՝ ադրբեջանցիներն աստիճանաբար սկսեցին ձևավորել նոր ազգային գաղափար, որը կառուցված էր Լեռնային Ղարաբաղի և հարակից տարածքների ամեն գնով վերադարձի թեզի վրա: Իսկ դրա համար հարկավոր էր ադրբեջանցիների հասարակական գիտակցության մեջ ներարկել այդ տարածքների «սակրալ» նշանակության ու արժեքային կարևորության մասին պնդումները: Մասնավորապես, Ադրբեջանի նախկին արտգործնախարար Վ. Գուլիևի կարծիքով՝ «Ղարաբաղը սրբազան հող է, որտեղ ձևավորվել է ադրբեջանական ժողովրդի ազգային ոգին»<sup>34</sup>: Իսկ Շուշին նրանց համար նույնն է, ինչ Մցխեթը վրացիների կամ Կիոտոն ճապոնացիների համար<sup>35</sup>: Անկասկած, հակամարտության խնդրո առարկայի ադրբեջանական ընկալումների բարձրակետը կարելի է համարել 2021 թ. հունիսի 15-ին Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրված Շուշիի հռչակագիրը, ո-

<sup>33</sup> Ильхам Алиев вспоминает слова Гейдара Алиева: "Без Шуши нет Карабах...", <https://az.sputniknews.ru/20210509/Ikham-Aliev-vspominaet-slova-Geydara-Alieva-Bez-Shushi-net-Karabakha-426918367.html> (մուտք 02.12.2022):

<sup>34</sup> Гулиев В. Карабах - священная земля, где сформировался национальный дух азербайджанского народа, [https://azertag.az/ru/xeber/Karabahsvyashchennaya\\_zemlya\\_gde\\_sformirovalsya\\_nacionalnyi\\_duh\\_azerbaidzhanskogo\\_naroda-1656455](https://azertag.az/ru/xeber/Karabahsvyashchennaya_zemlya_gde_sformirovalsya_nacionalnyi_duh_azerbaidzhanskogo_naroda-1656455) (մուտք 09.11.2022):

<sup>35</sup> St'u Pзaев III. Шуша - это как Мидхета для Грузии или Киото для Японии, <https://jam-news.net/ru/почему-шуши-шуша-важен-для-азербайджана> (մուտք 10.11.2022):

րում Շուշին հռչակվում է որպես ողջ թուրքական աշխարհի և մասնավորապես Ադրբեջանի մշակույթի հնագույն բնօրրան<sup>36</sup>:

Հետևաբար, եթե ադրբեջանական հասարակությունը երկար տարիներ դաստիարակվել է Հ. Ալիևի՝ Արցախին վերաբերող և իրենց արժեքային նախապատվություններն արտացոլող թևավոր խոսքերով, ապա մեզ համար էլ որպես արժեքային բարձր նշանակության պատգամ-ուղերձ պետք է լինի Մոնթեի հայտնի խոսքերը. «Եթե կորցնենք Արցախը, ապա կշրջենք հայ ժողովրդի պատմության վերջին էջը»: Արցախյան կարգավորման բանակցային նոր հայեցակարգի հիմքում պետք է դնել Արցախի՝ որպես հայ ժողովրդի համար բացարձակ արժեքի ու սրբազործված հայրենիքի գաղափարը, որը համարժեք է հետևյալ բանաձևումին. Արցախ-Հայաստան՝ հայության բնօրրան: Արցախին պետք է մոտենալ, Արցախը պետք է ընկալել որպես «հայկական նոր Երուսաղեմ»: Միայն արժեքային նման բարձր նշաձողի դեպքում է հնարավոր համախմբել հայության կենսական ներուժն ու այն նորից ուղղորդել Արցախյան հիմնահարցի վերջնական ու արդարացի կարգավորմանը հասնելուն:

**ХАЧИК ГАЛСТЯН – Новая переговорная концепция урегулирования арцахского вопроса: ценности решают все.** – В рамках статьи обсуждается региональный статус-кво, сформированный после последней крупномасштабной военной агрессии Азербайджана против Арцаха и Армении, а также его влияние на урегулирование арцахского конфликта. Основная цель исследования - выявить ценностное значение Арцаха, показать эволюцию ценностных трансформаций понимания сути конфликта в общественно-политических дискурсах Азербайджана и Армении. В статье обосновывается тезис о том, что ценности имеют решающее значение в формировании переговорных концепций в контексте урегулирования конфликтов. При этом в основу переговоров стороны, как правило, выдвигают определенные ценности, и у них формируются разные ценностные предпочтения по отношению к самому предмету конфликта. В частности, показано, что после победоносного окончания первой Арцахской войны в общественно-политическом дискурсе армянского общества наметились тенденции снижения значения Арцаха. В то же время, наоборот, среди азербайджанской общественности ценностная планка восприятия конфликта ощутимо выросла. Автор выдвигает идею, согласно которой для полноценного и эффективного функционирования проекта армянской государственности необходимо вновь поднять ценностное значение Арцаха. Данный вопрос имеет глубокое жизненно важное значение как с точки зрения реализации новой стратегии национальной безопасности РА, так и формирования соответствующей переговорной концепции в деле урегулирования Арцахского конфликта.

**Ключевые слова:** *Арцахский конфликт, послевоенный статус-кво, переговорная концепция, «ценностные границы», «пограничные ценности»*

**ԽՈՒՄԻՔ ԳԱԼՏՅԱՆ – New Negotiation Concept of the Artsakh Settlement: Values Matter Everything.** – The article discusses the regional status quo,

---

<sup>36</sup> Տե՛ս Սև Մարտի Մոնթեի լիակատար դեկլարացիան, ստորագրված Ադրբայջանի և Թուրքիայի միջև, [<https://www.trend.az/azerbaijan/politics/3440708.html>]

formed after the last large-scale military aggression of Azerbaijan against Artsakh and Armenia, as well as its impact on the settlement of the Artsakh conflict. The main goal of the study is to reveal the value significance of Artsakh for the main actors of the conflict and to demonstrate the evolution of value transformations in understanding the essence of the conflict in the socio-political discourses of Azerbaijan and Armenia. The author substantiates the hypothesis that values have a decisive importance in forming negotiation positions in the context of conflict resolution. Furthermore, negotiating parties not only base negotiations on certain values but also form different value preferences concerning the subject of the conflict. In particular, it is shown that after the victory in the first Artsakh war there were tendencies to reduce the importance of Artsakh in the socio-political discourse of Armenian society. On the contrary, the value level of perception of the conflict has significantly increased among the Azerbaijani public. The author puts forward the notion that for the full and effective functioning of the project of Armenian statehood, it is necessary to once again raise the value of Artsakh. This issue is vital for implementing the new national security strategy and establishing an appropriate negotiating concept in the resolution of the Artsakh conflict.

**Key words:** *Artsakh conflict, post-war status-quo, negotiation concept, "value red lines", "border values"*

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ**

**ՎԻԿՏՈՐՅԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

Ժամանակակից աշխարհում էլեկտրոնային կառավարման համակարգերը տեղեկատվության հասանելիություն և դյուրին կիրառություն ապահովող գործիքներ են, որոնց ներդրման նպատակը պետություն-քաղաքացի արդյունավետ ու թիրախային երկխոսության տեսլականն է: Դրանք ուղղված են ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը՝ ապահովելով մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների կենսագործումը:

Այդուհանդերձ, ժամանակակից միտումները ուղեկցվում են նոր մարտահրավերներով: Թվայնացմանը զուգահեռ՝ հանդիպում ենք տեղեկատվական անվտանգությանն առնչվող բազմաթիվ խնդիրների, որոնց շարքին են դասվում կիբեռանվտանգությունը կամ ոչ հավաստի տեղեկատվությունը և այլն:

Մյուս կողմից, թվայնացման գործընթացը առաջ է քաշում հակաժողովրդավարական դիսկուրս՝ առանցքում պահելով քաղաքացիների հավասար մասնակցային իրավունքի իրացման, հասարակության բոլոր շերտերի՝ տեղեկատվություն և ծառայություններ ապահովող հարթակներ կիրառելու ու հասանելիության, բուն հանրային շահն արտահայտող հարթակների գործառության, ինչպես նաև պատշաճ հետադարձ կապի ապահովման բարդություններ:

Սույն աշխատանքում քննարկվում են Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի կարևորությունը հասարակություն-պետություն կառուցողական հաղորդակցության հաստատման գործում, ներդրման գործընթացում ձեռքբերումները և ուղեկցող մարտահրավերները:

***Բանալի բառեր** – տեղեկատվական հասարակություն, տեղեկատվություն, էլեկտրոնային կառավարում, թվայնացում, հասարակություն-պետություն հաղորդակցություն, կորոնավիրուս*

**Նախաբան**

Ժողովրդավարության հիմքում ընկած տեղեկատվության ազատության սկզբունքն արտացոլում է յուրաքանչյուրի կողմից անարգել կերպով տեղեկատվություն հավաքելու, փոխանցելու և տարածելու իրավունքը: Պետական մարմինների գործողություններին, առաջարկած ծառայություններին, հասարակական-պետական շահին առնչվող տեղեկատվությունը պետք է լինի հավաստի, հասանելի և բազմազան, ո-

րոնց երաշխավորմանն էլ պետք է ուղղված լինեն պետական կառավարման մարմինների ռազմավարական քայլերը: Ջարգացած տեխնոլոգիաների ներդրումը հասարակություն-պետություն հարաբերությունները բարձրացրել է նոր մակարդակի՝ զգալի տեղ տալով թվայնացմանը և տեխնոլոգիական գործիքակազմի կիրառությանը:

Թվային կամ էլեկտրոնային կառավարումը պետության կողմից քաղաքացիներին, աշխատակիցներին, ձեռներեցներին և գործակալություններին մատուցվող ծառայությունների որակի և արդյունվետության բարձրացմանն ուղղված քաղաքականությունն է<sup>1</sup>: Էլեկտրոնային կառավարման հիմքում ընկած է ծառայությունների թվայնացումը, որը ենթադրում է՝

- ծառայություններ ապահովող և մատակարարող սուբյեկտներ, այլ խոսքերով՝ պետական կառույցներ,

- ծառայությունների օգտատերեր կամ սպառողներ՝ քաղաքացիներ:

Պետության կողմից մատուցվող ծառայությունների էլեկտրոնային համակարգերի ներդրումը մի կողմից բարձրացնում է պետական մարմինների հաշվետվողականությունը և աշխատանքի հրապարակայնությունը, մյուս կողմից նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը և չարաշահումները՝ անձնական շփումների էական կրճատման շնորհիվ<sup>2</sup>: Ինչպես նկատելի է սահմանումից, էլեկտրոնային կառավարումը հաճախակի ասոցացվում է էլեկտրոնային ծառայությունների հետ, բայց այն ավելին է, քան միայն ծառայություն: Առաջնային ու որակյալ հանրային ծառայությունների մատուցմամբ սկզբնավորվում է պետություն-հասարակություն հաղորդակցությունը: Հ. Սուքիասյանի խոսքերով՝ այս կերպ տեղեկատվական հասարակությունում իշխանությունն ընկալվում է իբրև հասարակական ծառայություն՝ կորցնելով իր գերիշխանությունը<sup>3</sup>:

Հենց հանրային ոլորտի թվայնացման գործընթացն է առավելապես բացահայտում էլեկտրոնային կառավարման բովանդակությունը, և դա է պատճառը, որ «էլեկտրոնային կառավարումը», «թվայնացումը», «հանրային ոլորտի թվայնացումը» քննարկվում են որպես մեկ ամբողջություն:

Թվայնացումը փոխում է հաղորդակցության ընդունված և հաճախակի կիրառելի ձևերը: Թվայնացման հետևանքները դժվար է կանխատեսել և հասկանալ, քանի որ արդյունքները տարբեր կերպ են դրսևորվում և ի հայտ են գալիս անսպասելի: Թվայնացման գործընթացում ակտիվորեն օգտագործվում են արհեստական բանականության և

---

<sup>1</sup> St' u Carter L., Bélanger F., The utilization of e-government services: citizen trust, innovation and acceptance factors// Information Systems Journal 15 (1), January 2005, էջ 5-25, <https://doi.org/10.1111/j.1365-2575.2005.00183.x>

<sup>2</sup> St' u Է. Քալանթարյան, ՀՀ էլեկտրոնային կառավարման արդի վիճակը և զարգացման հեռանկարները: «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 141.6, Եր., 2013, էջ 69:

<sup>3</sup> St' u Հ. Սուքիասյան, Տեղեկատվական հասարակություն. «Էլեկտրոնային կառավարություն» և «Էլեկտրոնային կառավարում» // 21-րդ ԴԱԸ, թիվ 1 (23), 2009, էջ 74:



ավտոմատացման ծրագրային տարրեր, սենսորային տվյալներ, որոշումների կայացման ռոբոտային համակարգեր: Այս ամենը հիմք է, որ հանրային կապերը առերես շփումից կամ ավանդական ձևաչափից անցում կատարեն ավտոմատացված կամ էլեկտրոնային ձևաչափի:

Էլեկտրոնային կառավարման համակարգերը նպաստում են մարդկանց կյանքի որակի բարելավմանը՝ ծառայությունների որակի բարձրացման շնորհիվ: Դրանք ժամանակատար չեն, արագ են աշխատում, ինչպես նաև բոլոր մարդկանց վերաբերվում են նույն կերպ, ինչը խոսում է ձևաչափի օբյեկտիվության մասին: Սակայն, մինևույն ժամանակ, էլեկտրոնային նորարարության ցանկացած ծրագրային ձախողում հարցականի տակ է դնում դրանց հետագա շահագործման նպատակահարմարությունը, պահանջում է նշանակալի ծախսեր, հասարակության շրջանում նվազում են ծրագրերի հանդեպ հետաքրքրությունն ու վստահությունը և այլն: Ծառայության արդյունավետության չափումը փոխադարձ արժեքներ և օգուտ ստեղծելն է՝ ծառայությունների մատուցման և ծառայությունների օգտագործման ողջ գործընթացի ընթացքում: Այս գործընթացի հիմքում ընկած են տեղեկատվական տեխնոլոգիաները՝ համացանցի նորարարական և ներառական լայն հնարավորություններով: Հետևապես, էլեկտրոնային կառավարման համակարգերով աշխատելիս մարդիկ ստիպված են ընդլայնել իրենց թվային գիտելիքները և հմտությունները:

Զուգահեռաբար, էլեկտրոնային համակարգերի հանրային շահարկումն ինքնին ենթադրում է թվային մեկնարկային գիտելիքների ու հմտությունների առկայություն: Սա է հիմնական պատճառը, որ էլեկտրոնային կառավարման համակարգերը ստեղծում են հասարակական-թվային նոր բաժանում (digital divide), քանի որ պատշաճ թվային գրագիտության բացակայությունը, պետական-հանրային ոլորտի աշխատանքների մասին անիրազեկվածությունն ստեղծում են նոր տեսակի բևեռացում, որը չի ենթադրում հասարակության ժողովրդավարական մասնակցության հիմքեր և չի ապահովում հավասարություն և թափանցիկություն:

Եվրոպայում, էլեկտրոնային կառավարման ոլորտում առաջատար երկրներից Շվեդիայում մինչ օրս ամենաշատ քննարկվող հարցադրումը հենց այն է, թե արդյոք թվայնացումը խրախուսում է բացարձակ թափանցիկ ու բաց մասնակցային ժողովրդավարությունն այն դեպքում, երբ շատ քաղաքացիներ և շրջաններ պարզապես դուրս են մնում թվային գործընթացներից: Փաստորեն, անկախ այն հանգամանքից, որ զարգացած ու առաջադեմ ժողովրդավարություններում թվայնացումը և էլեկտրոնային կառավարչաձևի ներդրումը վաղուց արդեն պատմություն ունեցող իրականություն են, դեռ գրանցվում են ձախողումներ, և կան էական բացեր:

## **Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկման հարցերի շուրջ**

2000-ականներից ի վեր Հայաստանում իրականացվում են էլեկտրոնային կառավարման անցմանը միտված նախաձեռնություններ: Դրանք ենթադրում են կառավարման արդիականացման և տեխնիկական վերազինման ձեռնարկների շարքեր, որոնք մեծամասամբ կատարվում են Եվրոպական միության (ԵՄ), Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ՝ ՀՀ կառավարության ղեկավարությամբ:

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) տվյալներով՝ ՀՀ պետական համակարգում էլեկտրոնային արդիականացման գործընթացը և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը ընթանում է արագ և նպատակային: Նույն աղբյուրը, սակայն, հաստատում է, որ պետության կողմից առաջարկվող էլեկտրոնային ծառայությունների ներդրմանն ու զարգացմանը համընթաց չեն հասարակության վերաբերմունքը և օգտագործման մակարդակը<sup>4</sup>:

Հարց է առաջանում. արդյո՞ք էլեկտրոնային կառավարման ներդրումն ուղիղ համեմատական չէ նորարարական-տեղեկատվական հասարակության ձևավորմանը, և արդյո՞ք էլեկտրոնային կառավարման ներդրման հաջողված լինելու հիմնական չափումը պետություն-քաղաքացի արդյունավետ ու անխափան հաղորդակցման ապահովումը չէ:

Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերը կենտրոնացված են ՀՀ էլեկտրոնային կառավարման միասնական հարթակում՝ e-gov.am կայքում: Այն ստեղծվել է 2010 թ.՝ ՀՀ պետական գերատեսչություններին առընթեր էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքների և տվյալների մեկտեղման նպատակով: Կայքը ծառայում է որպես միասնական հարթակ և համապարփակ ուղեցույց էլեկտրոնային ծառայություններից դյուրությամբ օգտվելու համար<sup>5</sup>: Համակարգի միջոցով հնարավոր է հետևել կառավարության, վարչապետի, փոխվարչապետի որոշումներին, ինչպես նաև կառավարության նիստերի օրակարգերին: Հարթակում կարելի է գտնել ընթացիկ և նախորդ տարիների բյուջետային բաշխումը՝ «ինտերակտիվ բյուջե» գործիքի միջոցով:

Ի թիվս մի շարք էլեկտրոնային գործիքների՝ ակտիվորեն գործարկվում են.

- Լիցենզիաներ ստանալու հայտերի ընդունման համակարգը: Իրավաբանական, ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը տարբեր բնագավառներում (առևտուր, առողջապահություն, անվտանգություն, վիճակախաղեր, տրանսպորտ և այլն) գործունեություն իրա-

<sup>4</sup> Տե՛ս էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ, [https://www.ekeng.am/hy/sub/e\\_manage](https://www.ekeng.am/hy/sub/e_manage) (15.03.2022):

<sup>5</sup> Տե՛ս էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ, <https://www.e-gov.am/#block26> (15.03.2022):

կանացնելու համար կարող են էլեկտրոնային տարբերակով դիմել պետական արտոնագիր ստանալու: Հարթակը նախատեսված է նաև արտոնագրումը վերաձևակերպելու, ուժը կորցրած ճանաչելու, կասեցնելու, ինչպես նաև արդեն իսկ ներկայացրած դիմումները նոր փաստաթղթերով համալրելու համար<sup>6</sup>:

- Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգ: Այն թույլ է տալիս գյուտերը, օգտակար մոդելները, ապրանքային նշանները և արդյունաբերական նմուշները էլեկտրոնային տարբերակով ներկայացնել Մտավոր սեփականության գործակալություն<sup>7</sup>:

- Էլեկտրոնային վիզա գործիք: Թույլ է տալիս պարզեցված ձևով և կարճ ժամանակահատվածում ստանալ մուտքի արտոնագիր<sup>8</sup>:

- Էլեկտրոնային ստորագրության գործիք: Այն էլեկտրոնային փաստաթղթերին կցված ստորագրող անձի նույնականացման համար կիրառվող թվային պայմանանշանների եզակի հաջորդականություն է<sup>9</sup>:

- Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգ: Հարթակը թույլ է տալիս ծանոթանալ ՀՀ օրենսդրությանը՝ սկսած միջազգային պայմանագրերից մինչև համայնքների ավագանու ընդունած որոշումներ<sup>10</sup>:

- Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք: ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի շտեմարան, որը թույլ է տալիս ոչ միայն ծանոթանալ նախագծերին, այլև մասնակցել դրանց քննարկմանը, ընդունմանը և հանդես գալ առաջարկություններով՝ հիմնավորելով դրանց կողմ կամ դեմ լինելը<sup>11</sup>:

- Դատական տեղեկատվական համակարգ: Հարթակը ծառայում է որպես դատական գործերի արխիվ, տեղեկատվություն ընթացիկ և սպասվելիք դատական գործերի մասին՝ ժամանակացույցի և անցկացման վայրի մանրամասներով<sup>12</sup>:

- Կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման գործիք: Ընձեռում է հնարավորություն կարճ ընթացակարգով (մեկ պատուհան)

---

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության որոշումը՝ հանրապետական գործադիր մարմինների կողմից բարդ ընթացակարգով և ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերն էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու կարգը, <https://www.e-gov.am/docs/licenses.pdf> (15.03.2022):

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ Մտավոր սեփականության գրասենյակ, էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգի պատուհան, <https://my.aipa.am/> (15.03.2022):

<sup>8</sup> Տե՛ս E-VISA Issuance System, <https://evisa.mfa.am/> (15.03.2022):

<sup>9</sup> Տե՛ս Թվային ստորագրություն, [https://www.ekeng.am/hy/sub/digital\\_signature](https://www.ekeng.am/hy/sub/digital_signature) (15.03.2022):

<sup>10</sup> Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/> (15.03.2022):

<sup>11</sup> Տե՛ս Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/> (15.03.2022):

<sup>12</sup> Տե՛ս Դատական տեղեկատվական համակարգ, <http://www.datalex.am/> (15.03.2022):

գրանցելու կազմակերպություն և ստանալու տեղեկատվություն արդեն գրանցվածների մասին<sup>13</sup>:

• Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ: Քաղաքացիները կարող են առցանց եղանակով տեղեկատվություն տնօրինող պետական մարմիններին ուղղել իրենց հարցումները, դիմումները կամ բողոքները և սահմանված ժամկետում ստանալ դրանց պատասխանները<sup>14</sup>:

Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի գործառույթյան համատեքստում քննարկվում է նաև հանրագրերի ինստիտուտի զարգացման հրատապությունը: Համաձայն ոլորտի մասնագետների՝ դրա էլեկտրոնային գործարկումն ինքնին լրացուցիչ խթան կդառնա հանրագրերի ինստիտուտի արդյունավետ գործունեության և հանրային նշանակության հարցերում հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրման համար<sup>15</sup>: Կարևոր հիմնախնդիր է շարունակում մնալ էլեկտրոնային հանրագրերի ներկայացման և պատասխանների ստացումը հրապարակայնացնելու անհրաժեշտությունը՝ այդ թվում և՛ անհատական, և՛ կոլեկտիվ հանրագրերի, ինչպես նաև մի շարք այլ տեխնիկական հարցեր՝ կապված հարթակի նկարագրի, վարման կարգի և դրանցում ներգրավված սուբյեկտների պարտականությունների հետ<sup>16</sup>: Հանրագրերի հրապարակայնացման հնարավորությունը թույլ կտա առաջարկել այս կամ այն հարցի շուրջ հանրային իրազեկվածության և գաղափարների ու լուծումների այլընտրանքներ: Այս կերպ հանրագրերի շուրջը կհամախմբվեն աջակիցներ, և կխթանվի հասարակական հաղորդակցությունը:

Վերադառնալով Հայաստանում էլեկտրոնային կառավարման ներդրման և նորարարական-տեղեկատվական հասարակության ձևավորման փոխկապվածության հարցին՝ մենք բախվում ենք մի շարք խնդիրների:

Նախնառաջ թվայնացման արդյունավետությունը ուղղակիորեն կախված է դրա պետական և հասարակական պահանջից: Այլ խոսքերով՝ էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկումը պետք է հանդիպի հասարակական պահանջին՝ սպառման տեսքով: Այնուամենայնիվ, հասարակությունը ոչ մի դեպքում մարդիկ կամ կազմակերպություններ չեն, որոնք իրազեկ են այս կամ այն էլեկտրոնային ծառայության գոյության կամ դրանից օգտվելու ձևերի մասին: Հետևապես, էլեկտրոնային կառավարման համակարգերը պետք է առավելապես լայն տարածում ստանան ողջ Հայաստանում՝ ներառյալ մարզային և համայնքային շրջանները: Գործընթացը կենթադրի Երևանից դուրս

<sup>13</sup> Տե՛ս էլեկտրոնային ռեգիստր, [www.e-register.am](http://www.e-register.am) (15.03.2022):

<sup>14</sup> Տե՛ս էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ, <https://e-request.am/hy/> (15.03.2022):

<sup>15</sup> Տե՛ս **Ս. Քրնոյան, Շ. Ղուկասյան**, Էլեկտրոնային գործիքների ներդրումը՝ հանրագրի ինստիտուտի խթանման համատեքստում // Օրինականություն, № 115, 2020, ISSN 1829-4219, էջ 38:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 40:

գործող պետական և մասնավոր կառույցների, տեղական հասարակական միավորումների, ինչպես նաև մարդկանց անքակտելի իրավունքի իրացումը՝ դուրս չմնալ թվայնացման միտումներից և ստանալ հնարավորություն՝ օգտվելու կարևոր նշանակության ծառայություններից՝ երկխոսելով պետական մարմինների հետ:

Երկրորդ՝ վերոնշյալ համակարգերից օգտվելու հնարավորությունը ենթադրում է ոչ միայն թվային և մեդիա իմացություն ու թվային տեխնոլոգիաներից օգտվելու հմտություններ, այլև առհասարակ լիարժեք հասանելիություն տեխնիկային և համացանցին: Սա ևս խնդրահարույց է շարունակում մնալ մարզային և համայնքային բնակիչների շրջանում:

**Ճգնաժամը՝ որպես էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման բարենպաստ շրջան. քննարկում կորոնավիրուսի համավարակի օրինակով**

Այն, որ կորոնավիրուսի համավարակը՝ որպես առողջապահական լրջագույն ճգնաժամ, արագացրեց էլեկտրոնային կառավարման ներդրման տեմպերը և հասարակությանն առավելապես ներգրավեց դրանց շահագործման գործում, ակնհայտ էր ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի շատ այլ երկրներում ևս: Առանձնահատուկ հաջողություններ են գրանցվել հեռահար աշխատանքային ու կրթական գործիքակազմի պարագայում, ինչպես նաև հանրային և պետական նշանակության այս կամ այն ծառայության գործարկման համատեքստում:

Փաստորեն, ճգնաժամի բռնկումն ու անկանխատեսելի բնույթը մարտահրավեր էր այն առումով, որ նախկինում լայնորեն և խորությամբ չկիրառված թվային գործիքակազմն այլևս ենթակա էր պարտադիր կիրառման, և դրա պարտադիր լինելը հանգեցրեց պետական-հասարակական ռեսուրսերի ու ներուժի մոբիլիզացիայի: Սա իրականում բնորոշ է գրեթե բոլոր տեսակի ճգնաժամերին՝ չհաշված տարերային բնական աղետները, օրինակ՝ երկրաշարժը և այլն: Մարդկային շփման սահմանափակումը կամ անհնարինությունն ինքնըստինքյան ենթադրում է այլընտրանքների մշակում և կիրառություն:

Շվեդիայի Լինչոպինգ քաղաքի քաղաքապետարանի թվայնացման ու էլեկտրոնային կառավարման վարչության բիզնես ծրագրերի պատասխանատու Թոմաս Լարսոնի խոսքերով՝ Շվեդիան թվայնացման գործընթացի կեսին է, և առջևում դեռ շատ անելիքներ կան<sup>17</sup>: Մասնագետի ներկայացմամբ՝ համավարակի ընթացքում Լինչոպինգի էլեկտրոնային հաջողված նախաձեռնություններից մեկը «սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրի էլեկտրոնային ձևաթուղթն» է, որը լրացնելով՝ հնարավոր է շրջանցել «մի քանի պատուհանի» դիմելու նախկին ձևաչափը, որն ու-

<sup>17</sup> Տե՛ս Հարցազրույց Շվեդիայի Լինչոպինգ քաղաքի քաղաքապետարանի թվայնացման ու էլեկտրոնային կառավարման վարչության բիզնես ծրագրերի պատասխանատու Թոմաս Լարսոնի հետ, հուլիս, 2020:

ղեկցվում էր մեծաքանակ թղթային շրջանառությամբ: Մյուս նորամուծությունը «Խոսքը տեքստին» (Speech to text) հավելվածն է, որի նապատակը վարչական ոլորտի աշխատանքային բեռի թեթևացումն է: Հաստուկ մշակված ծրագիրը խոսքը տեքստի է վերածում՝ պատրաստելով տեքստեր և լրացնելով ձևաթղթեր: Այս կերպ տեքստը հավաքելու համար անհրաժեշտ ժամանակը զգալիորեն կրճատվում է: Առանձնահատուկ ուշադրության է արժանի համավարակի ընթացքում կրթական ոլորտում աշխատանքների արդյունավետության ու կրթության որակի և անխափան ընթացքի ապահովմանն ուղղված պետական քաղաքականությունը: Հաշվի առնելով այն, որ Շվեդիայում ավագ դպրոցների աշակերտների համար կեսօրյա նախաճաշն անվճար է, գործարկվել է նաև հավելված, որն աշակերտներին թույլ է տալիս բաժանորդագրվել և նախնական պատվերներ կատարելով՝ մոտակա ռեստորանների ցանցից ստանալ իրենց հասանելիք ամենօրյա ճաշ-փաթեթները: Այս և մի շարք այլ օրինակներ, ըստ ոլորտի պատասխանատուի, վկայում են այն մասին, թե որքան հմտորեն կարելի է օգտագործել համացանցի լայն հնարավորությունները ճգնաժամերը հաղթահարելու և ճգնաժամերի ընթացքում պետական պատասխանատուներին հանրությանը մոտ պահելու համար:

Լեհաստանի թվային կառավարման հարթակը ներկայացնելիս՝ Լեհաստանի ստարտափ հաբի (Startup Hub Poland) գործադիր տնօրեն Մաչեյ Սադովսկին առանձնացրեց միջազգային և տեղական ներդրումների կարևորությունը ցանկացած երկրում էլեկտրոնային կառավարման զարգացման գործում: Փորձագետի ներկայացմամբ՝ Լեհաստանի թվային կառավարման ենթակառուցվածքը կամ Gov.pl հարթակը ներառում է շուրջ 300 էլեկտրոնային կայք, 113 000 հոդված և 192 000 թղթապանակ: Միայն 2020 թ. մարտ ամսին 46 միլիոն մարդ և կառույց այցելել է այդ հարթակը: Այն առաջարկում է բազմաթիվ ծառայություններ ինչպես կազմակերպությունների, այնպես էլ քաղաքացիների համար: Ըստ փորձագետի՝ ամենահաջողված ծառայություններից են կացության գրանցումը, ծնունդների գրանցումը, ընտրողների գրանցումը, էլեկտրոնային արտոնագրումը (E-Patenting), էլեկտրոնային դեղատոմսի դուրսգրումը (ePrescription), ուսանողական տոմսի բջջային հավելվածը և այլն<sup>18</sup>:

Համավարակի շրջանում Լեհաստանում էլեկտրոնային արդյունավետ գործիք դարձավ էլեկտրոնային այցն առաջնային բուժօգնություն տրամադրող բժիշկներին: Հետաքրքրական է այն փաստը, որ բժշկական ծառայության գրանցումից հետո բժիշկն անձամբ է կապ հաստատում հիվանդի հետ՝ բժշկական խորհրդատվություն և ծառայություններ մատուցելու համար: Բժիշկները նաև կարող են լինել Լեհաստանի տարբեր քաղաքներից և տարբեր բուժական հաստատություններից, ինչն էսպես խթանում

---

<sup>18</sup> Տե՛ս «SS ոլորտի, էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական հասարակության զարգացում» վեբինար, 22 փետրվարի 2021թ. [https://www.youtube.com/watch?v=dNSjWEiVUO0\\_20.03.2022](https://www.youtube.com/watch?v=dNSjWEiVUO0_20.03.2022)):

է բժիշկների հավասար ու ակտիվ աշխատանքային գործունեությունը: Այս ծառայությունը զգալիորեն արդյունավետ է նաև հիվանդների համար, քանի որ նրանք ստիպված չեն երկար սպասել և շատ վաղ հերթագրվել շնորհիվ բժիշկների աշխատանքի հավասար բաժանման սկզբունքի:

Ջուզահեռաբար Լեհաստանում գործարկվեցին «Տնային կարանտին» և «Stop Covid-ProteGo Safe» հավելված-գործիքները: Առաջին ծրագրային գործիքը գործարկվել է 2020 թ. ապրիլի 1-ից: Նպատակը աջակցել կարանտինում գտնվող մարդկանց՝ հոգ տանելու սեփական առողջության մասին և մշտադիտարկելու ինքնազգացողության փոփոխությունները: Երկրորդ հավելվածը գործարկվել է 2020թ. հունիսի 9-ից՝ նպատակ ունենալով բարձրացնել հանրության իրազեկվածությունը կորոնավիրուսին առնչվող հարցերի վերաբերյալ: Այս նպատակով հավելվածում գրանցվողներին պարբերաբար ուղարկվում էր պաշտոնական տեղեկատվություն համավարակի ու դրան վերաբերող պետական ու մասնավոր կարգավորումների մասին:

Նույն ընթացքում ստեղծվեց «Տեղեկատվական կենտրոն» հարթակը՝ շուրջօրյա աշխատառեժիմով: Հարթակը բաղկացած էր թե՛ զծից, կայքից և արագ արձագանքման առցանց երկխոսության բաժնից, որը հնարավոր է օգտագործել վիրուսին առնչվող ցանկացած հարցի դեպքում:

Հայաստանում, համավարակի տարածմանը զուգահեռ, գործարկվեց երեք հեռախոսային հավելված՝ «Քովիդ-19 Հայաստան», «Ինքնամեկուսացածների ինտերակտիվ քարտեզ» և «Ճամփորդում եմ առանց Քովիդ-19-ի»: Առաջինն իր գործարկման սկզբնական փուլում նկատելի հետաքրքրություն առաջացրեց հասարակության այն շրջանակներում, որոնք ակտիվորեն օգտվում էին սմարթֆոններից և իրազեկ էին ծառայության մասին: Հարթակը ստեղծվել էր ՀՀ պարետի պաշտոնական գործառնությունների շրջանակում: Այն պարբերաբար թարմացվող տվյալների հարթակ էր, որը ներկայացնում էր կորոնավիրուսով վարակվածության, բուժվածների և մահացության ամենօրյա թիվը: Հավելվածը ներառում էր թեստավորման հնարավորություն՝ սեփական ինքնազգացողությունը ճիշտ գնահատելու և դրա հիման վրա բժշկի դիմելու կամ չդիմելու որոշում կայացնելու համար: Այն նաև պարունակում էր հիգիենիայի և անվտանգության կանոնների մասին հրահանգ-խորհուրդների պատուհան<sup>19</sup>:

Մյուս հավելվածը, որը գործարկվեց 2020 թ. հունիսի 19-ից, ինտերակտիվ քարտեզ էր, որը 100 մետր ճշգրտությամբ ներկայացնում էր ինքնամեկուսացած հիվանդների տեղակայությունը: Ավելի ուշ հավելվածն արդեն տալիս էր տեղեկատվություն կորոնավիրուսով վարակվածների տարիքային կազմի և սեռի մասին<sup>20</sup>:

<sup>19</sup> Տե՛ս «Քովիդ-19 Հայաստան» հավելված, <https://apps.apple.com/am/app/covid-19-armenia/id1505830061>, (20.03.2022):

<sup>20</sup> Տե՛ս Քովիդով վարակվածության ինտերակտիվ քարտեզ, <https://www.covid19-healthsystem.org/countries/armenia/livinghit.aspx?Section=1.4%20Monitoring%20and%20surveillance&Type=Section> // [https://covid19-map.armen.am/?fbclid=IwAR1xJqwlDj440RJGltEIZgYLkKC\\_c6rLXPV5DgZM-QWxaLn3XL3wEyOqek](https://covid19-map.armen.am/?fbclid=IwAR1xJqwlDj440RJGltEIZgYLkKC_c6rLXPV5DgZM-QWxaLn3XL3wEyOqek) (ներկայումս հավելվածը անհասանելի է և ենթակա չէ շահագործման):

«Ճամփորդել առանց կորոնավիրուսի» հավելվածը գործարկվեց արդեն 2021 թ. փետրվարի 1-ից որպես պիլոտային ծրագիր՝ պարտադիր կիրառության համար Հայաստանից Ռուսաստան և հակառակ ուղղությամբ ճամփորդելիս: Քաղաքացին ճամփորդելուց 72 ժամ առաջ պետք է հանձնել կորոնավիրուսի թեստ, որի պատասխանն անձնագրի սկանավորմամբ հայտնվում էր հավելվածում և ներկայացվում համապատասխան մարմնին սահմանահատման ժամանակ<sup>21</sup>:

Հայաստանում համավարակի արագ արձագանքման ծրագրերի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (emis.am) գործարկեց էլեկտրոնային օրագիր և էլեկտրոնային մատյան համակարգերը, որոնք նպատակ ունենին հեռահար ուսուցման ընթացքում դպրոցների և ուսուցիչների քայլերն ավելի արդյունավետ և տեսանելի, իսկ աշակերտների կրթությունը՝ առավել մատչելի դարձնելու: Գործիքների ներդրման հիմնական մարտահրավերն այն էր, որ նախկինում չունենալով կիրառության փորձառություն՝ պետք էր սուղ ժամանակահատվածում համատեղել գործիքներից օգտվելու կրթական դասընթացները գործիքների բուն կիրառության հետ, ինչը, բնականաբար, խնդրահարույց էր և ուսուցիչների, և աշակերտների ու իրենց ծնողների համար:

Այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ ճգնաժամերի ընթացքում էլեկտրոնային համակարգերին անցումը ոչ մի կերպ չի ենթադրում ոլորտային խնդիրների արմատական լուծում: Այլ կերպ ասած՝ հասարակություններն ու պետությունները չպետք է հաջողություններ գրանցեն թվայնացման ճանապարհին՝ ապավինելով նոր ճգնաժամերին: Ժամանակակից պայմաններում թվայնացման գործընթացը պետք է կայուն զարգացման դիրքերից ապահովի ոչ միայն կրթության և աշխատանքի թվայնացումը, այլև հասարակական տարբեր շերտերի և պետական տարբեր գերատեսչությունների միջև առողջ և հաջող հարաբերակցությունը:

### **Եզրակացություն և առաջարկներ**

Դիտարկելով Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման հաջողությունները և առկա բացերը՝ կարող ենք արձանագրել. Հայաստանում թվայնացման գործընթացը զարգացման հեռանկարներ ունի, իսկ հասարակությունը՝ տեղեկատվական կամ թվայնապես գրագետ դառնալու մեծ ներուժ և երկար ճանապարհ:

Մի կողմից շեշտադրելով էլեկտրոնային կառավարման համակարգերի հասարակությանը պետության հետ կամրջելու ռազմավարական նշանակությունը, մյուս կողմից՝ այդ ճանապարհին հանդիպող

---

<sup>21</sup> Տե՛ս «Ճամփորդում եմ առանց Covid-19» հավելվածի մասին պաշտոնական տեղեկատվություն, <https://www.ekeng.am/hy/covid-19>, (20.03.2022):



ընթացիկ մարտահրավերներն ու բացթողումները՝ հանգում ենք ստորև երկու հիմնական եզրակացությունների:

Առաջնային շարունակում են մնալ էլեկտրոնային կառավարումը պետական ապարատի գործունեության առաջնահերթություն դարձնելու նպատակային և հասցեական ջանքերը: Դա ենթադրում է պետական բազմավեկտոր հովանավորություն թվայնացմանը և էլեկտրոնային կառավարման զարգացմանը:

Կարևորում ենք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետության համապատասխան մարմինների միջև սերտ համագործակցությունը՝ համատեղ տեղեկատվական արշավների կազմակերպման և կրթական մոդուլների մշակման ու ներդրման շրջանակում: Վերջինս ենթադրում է էլեկտրոնային կառավարման ոչ ֆորմալ կրթական բաղկացուցիչի մշակում և շրջանառում:

Հնարավոր լուծումներն են.

- Ոլորտային մասնագետների պատրաստման ծրագրերի իրականացում: Թե՛ պետական ապարատում, թե՛ դրանից դուրս կարևորագույն հիմնախնդիր է մնում ոլորտի մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացը, որին ուղղակիորեն առնչվում է Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկման համատեքստում հետադարձ կապի պատշաճ կազմակերպումը: Վերջինիս որակը կարևորագույն նշանակություն ունի, քանի որ պատասխանատու է ոչ միայն տեղեկատվության փոխանցման, այլև հաղորդակցության ապահովման համար: Դրա ոչ գրագետ ու անբավարար իրականացումը կարող է էականորեն նվազեցնել էլեկտրոնային համակարգերի օգտագործման տեմպերը և խոչընդոտել քաղաքացիական պատշաճ մասնակցությունը:

- Թեմատիկ ներառումներ բարձր դասարանների, ավագ դպրոցների և համալսարանների առարկայացանկում: Կրթական գործընթացներից դուրս մնացած հասարակական լայն շերտերին էլեկտրոնային կառավարման համակարգերին առավել մոտեցնելու նպատակով՝ մարզային տարբեր թիրախային խմբերի շրջանակում կարելի է անցկացնել կարճաժամկետ դասընթացներ, փորձագիտական հանդիպումներ և տեղեկատվական արշավներ: Այս համատեքստում կարևոր դեր ունի տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) միջամտությունը և ակտիվ համագործակցությունը տարածքային հասարակական կազմակերպությունների հետ: Հաջող և կառուցողական համագործակցությունը կխթանի նաև ՏԻՄ-ի հանդեպ վստահության բարձրացումը և քաղաքացիական հասարակության կարևոր դերակատար տարածքային հասարակական կազմակերպությունների և նախաձեռնությունների հզորացումը: Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգի համապատասխանեցումը տեղեկատվական հասարակության պահանջներին ժամանակի հրամայականն է:

- Գիտության ներգրավումը թվայնացման գործընթացում: Ոլորտի համապարփակ ուսումնասիրությունը, միջազգային հաջողված և ձախողված փորձի քննարկումը, պետական մշակույթի առանձնահատկություններից բխող գործիքակազմը և վերջինիս արդյունավետ գործարկումը պետք է իրականացվեն կիրառական գիտության մակարդակում: Դրա համար անհրաժեշտ է միջպետական և միջգիտական ակտիվ համագործակցություն, փորձի և գիտելիքի շարունակական փոխանակման, միջազգային միտումների ներդրման կամք և պատրաստակամություն: Գիտության թվային գծի զարգացումը կենթադրի նաև տեղեկատվական հասարակության և էլեկտրոնային կառավարման մասին հայերեն գրականության ձևավորում, թվային և ֆիզիկական գրադարանների հիմնում, ոլորտային հետազոտողներին և փորձագետներին պետական օժանդակության ցուցաբերում:

- Մարզերի բնակչության, ուսանողների և կառույցների ներգրավումը թվայնացման գործընթացում: Էլեկտրոնային կառավարման գործիքակազմի օգտագործումը չպետք է սահմանափակվի քաղաքացիական հասարակության դերակատարների, ոլորտին քաջածանոթ մարդկանց և խմբերի շահագրգռվածությամբ: Էլեկտրոնային համակարգերի ապակենտրոնացումը և դրանց կիրառության մասին հանրամատչելի տեղեկատվության տարածումը ՀՀ մարզերում և համայնքներում կծառայեն ի նպաստ տեղական ժողովրդավարության զարգացման՝ հասարակական լայն շերտերին ներգրավելով գործընթացում: Ուստի ոլորտային պատասխանատու կառույցների արհեստավարժ մասնագետների տեղեկատվական այցերը մարզեր պետք է լինեն պարբերական:

- Ներդրված էլեկտրոնային համակարգերի հետևողական և շարունակական գնահատում: Մշտադիտարկումները կպարզեն թվային այս կամ այն համակարգի հետագա գործարկման նպատակահարմարությունը՝ դրանք բարելավելով հասարակության պահանջներին և թվային գրագիտությանը համապատասխան: Պարբերական գնահատումը թույլ կտա վեր հանել առկա բացթողումները և համալրել համակարգը նոր տեղեկատվությամբ ու գործիքներով:

- Միջազգային լավագույն փորձի և ձախողումների ուսումնասիրություն: Թվայնացման գործընթացը ի ցույց է դնում ոլորտային միջազգային փորձի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Առավել զարգացած տեղեկատվական հասարակությունները և թվայնացման երկար ճանապարհ անցած պետությունները փորձի փոխանակման և այլ աջակցող ծրագրերի գործարկման շնորհիվ կարող են զգալիորեն հեշտացնել էլեկտրոնային համակարգերի ներդրումը և հասարակությանը նախապատրաստել դրանց սահուն գործարկմանը: Աշխատանքում տեղ գտած՝ Շվեդիայի և Լեհաստանի օրինակները վկայում են թվայնացման գործընթացի համաշխարհային բնույթը և հարմարման մեծ հնարավորությունները:

**ВИКТОРИЯ МЕЛКОНЯН – Внедрение систем электронного управления как инструмент налаживания эффективной коммуникации общество-государство.** – В современном мире электронные системы управления являются инструментами обеспечения доступа к информации и удобства ее использования, в основе которых лежит видение эффективного и целенаправленного диалога государство-гражданин. Они направлены на укрепление демократических институтов, становление гражданского общества, обеспечение функционирования основных прав и свобод человека.

Однако, современные тенденции сопровождаются новыми вызовами. Наряду с цифровизацией мы сталкиваемся со многими проблемами, связанными с информационной безопасностью, среди которых проблемы кибербезопасности или недостоверной информации и т.д.

С другой стороны, процесс цифровизации способствует антидемократическому дискурсу, акцентируя внимание на реализации прав граждан на равное участие, использование и доступ к платформам, предоставляющим информацию и услуги всем слоям общества, работе платформ, отражающих общественные интересы, а также сложности обеспечения надлежащей обратной связи.

В этой работе обсуждается важность систем электронного правительства в Армении, в установлении конструктивной связи между обществом и государством, достижения в процессе его внедрения, а также сопутствующие проблемы.

**Ключевые слова:** *информационное общество, информация, электронное управление, цифровизация, государство-гражданин диалог, коронавирус*

**VIKTORIYA MELKONYAN – Implementation of Electronic Governance Systems as a Tool for Establishing Effective Society-State Communication.** – In the modern world, electronic governance systems are tools for the easy access to information and its practical usage. The basis for their adoption is the vision of productive communication between state and citizen. The systems are aimed to strengthen democratic institutions and develop civil society by ensuring human rights and freedoms.

Nevertheless, modern tendencies are accompanied with new challenges. In parallel with the process of digitalization, we encounter a set of problems related to information security such as issues of cybersecurity, non-reliable information, etc.

From the other side, digitalization brings an antidemocratic discourse on the implementation of the right of citizens' equal participation, the access and usage of all the necessary information and service portals, the functioning of sources which present public good and difficulties on proper feedback provision.

This work discusses the importance of electronic governance systems in Armenia in establishing society-state constructive communication and the main achievements and challenges on the way of their adaptation.

**Key words:** *information society, information, electronic governance, digitalization, society-state communication, Coronavirus*

## **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԼԻԴԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ**

### **ՄԱՆԵ ԱԹԻԿՑԱՆ**

Հոդվածում ուսումնասիրվում է համագործակցության մշակույթի արժեքային բազմաչափությունը: Հեղինակը հիմնավորում է այն մոտեցումը, համաձայն որի՝ համագործակցության մշակույթը հարաբերությունների այնպիսի համակարգ է, որը ներառում է քաղաքացիական համերաշխության ու համաձայնության, պետականաշինության մշակույթի զարգացման և ազգային անվտանգության ապահովման գործընթացները: Այս համատեքստում կարևորվում են հարմարվողականությունը և տեղեկատվահաղորդակցական արդի զարգացման պայմաններում փոխշահավետ համագործակցությունը՝ որպես կուսակցական լիդերի կայացման շարժիչ ուժ: Համագործակցությունը փոխշահավետ համատեղ հաղորդակցություն է գործունակ և կարողունակ քաղաքական դերակատարների միջև, որպեսզի փոխադարձ անվտանգության փոխզիջումային քաղաքականության միջոցով ապահովվեն արդյունքի կառավարումը և նորարարությունը: ՀՀ-ում քաղաքական համակարգի կերպափոխումը տեղի է ունենում լիդերության ինստիտուտի կայացման բարդ փուլում: Այդ հիմնախնդրի բացահայտումը ՀՀ-ում եղել և մնում է համագործակցության մշակույթի զարգացման բաղադրիչ: Այս դիտանկյունից առաջարկվում է կուսակցությունների գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով բարձրացնել բնակչության քաղաքական գիտակցության մակարդակը՝ նվազեցնելով մարգինալիզմը և իրականացնելով շարունակական սոցիալականացում: Ակնհայտ է, որ ՀՀ-ում հանրային քաղաքականություն իրականացնելու համար կուսակցական լիդերին անհրաժեշտ է դիտել որպես համագործակցային մշակույթի նորարարացնող դերակատար, քանի որ ընտրությունների միջոցով խորհրդարան եկած և գործադիր իշխանությունում ղեկավարի կարգավիճակ ստացած կուսակցական ակտիվիստները պատասխանատու են համակեցության պահպանման և արդյունքի ապահովման համար: Միաժամանակ, ՀՀ ժողովրդավարացման գործընթացում համագործակցային մշակույթի առկայությունը հնարավորություն կտա բարձրացնելու կուսակցական լիդերի իրավաքաղաքական գիտակցության մակարդակը, նորարարության հակվածությունը, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացում հանրային շահի գերակայության ապահովման պատասխանատվությունը:

**Բանալի բառեր** - *կերպափոխվող հասարակություն, համագործակցության մշակույթ, կուսակցական լիդեր, քաղաքացիական համերաշխություն, պետականաշինության մշակույթ, ազգային անվտանգություն, արդյունքի կառավարում, պատասխանատվություն*

Կերպավորվող հասարակություններում կուսակցական լիդերի կայացման հիմնախնդիրների գործընթացում որոշիչ է համագործակցության (collaboration) մշակույթի դերը: Ձևավորվելով պատմության հոլովույթում՝ որպես եռաչափ ժամանակի մեջ կերպավորվող բազմաչափ և բազմամակարդակ հարաբերությունների ձև՝ համագործակցությունը բանակցությունների օգնությամբ հաստատում է փոխհարաբերություններ և փոխգործունեություն: Օքսֆորդի բացատրական բառարանը այն սահմանում է որպես «համատեղ աշխատանք, համագործակցություն ինչ-որ բան ստեղծելու համար»<sup>1</sup>: Միևնույն ժամանակ կա կարծիք, որ համագործակցության մշակույթի զարգացումը կհանգեցնի խաղաղության հաստատման: Այդ իմաստով ուշագրավ է Կոպենհագենյան դպրոցի ներկայացուցիչ Յ. Գալթունզի հետևյալ բնորոշումը. «Խաղաղությունը սահմանվում է որպես հավասարություն և ներդաշնակություն մարդկային փոխհարաբերություններում»<sup>2</sup>: Ելակետային համարելով ասվածը՝ աշխատանքային տարբերակ ենք ընդունել հետևյալ մոտեցումը. «Համագործակցության մշակույթը հարաբերությունների այնպիսի համակարգ է, որը ներառում է քաղաքացիական համերաշխության ու համաձայնության, պետականաշինության մշակույթի զարգացման և ազգային անվտանգության ապահովման գործընթացներ»<sup>3</sup>: Ավելացնենք նաև, որ համագործակցությունը բազմաչափ, բարդ, իմացական և ճանաչողական գործընթաց է, որում տարբեր արժեշահային համակարգեր ունեցող մարդիկ համակեցություն են պահպանում, որպեսզի կարողանան գործունեություն ծավալել՝ ապահովելով ժամանակի մեջ իրենց անվտանգությունն ու ինքնահաստատումը: Ըստ Միխայել Շրեյզի «համագործակցությունը բնութագրում է կորպորատիվ արժեք ստեղծելու գործընթացը, որին հնարավոր չէ հասնել մեր ավանդական հաղորդակցության կառուցվածքների և թիմային աշխատանքի միջոցով»<sup>4</sup>:

Ուշագրավ է, որ դեռևս Չարլզ Դարվինն իր բնական ընտրության տեսության շրջանակներում հիմնավորել է այն մոտեցումը, որ գոյության համար պայքարում հաղթում են առավել ուժեղ և կենսունակ սերունդները, որոնք մյուսներից ավելի լավ են հարմարվել և հարմարվում միջավայրի պայմաններին ու հաջողությամբ են մրցակցում իրենց նմանների հետ՝ կենսականորեն անհրաժեշտ պաշարների համար<sup>5</sup>: Չ. Դարվինի մոտեցումը այսօր էլ արդիական է: Սակայն տեղեկատվահաղորդակցական արդի զարգացման պայմաններում քննարկվում և կարևորվում

<sup>1</sup> <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/collaboration?q=collaboration>

<sup>2</sup> **Յ. Գալթունզ**, Խաղաղություն խաղաղ միջոցներով. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, Եր., 2005, էջ 32:

<sup>3</sup> **Մամիկոն Մարգարյան**, Համագործակցության մշակույթը՝ որպես ազգային անվտանգության ապահովման գործընթաց, «Գիտական Արցախ», № 1, ԱԵԳՄՄ, 2018, էջ 193:

<sup>4</sup> **Schrage, Michael**. No More Teams! Mastering the Dynamics of Creative Col Sc laboration. New York: Currency, 1995, p. 33.

<sup>5</sup> Տե՛ս **Չարլզ Դարվին**, Естественный отбор. О себе и происхождении видов, Алгоритм, 2018, էջ 146:

է էվոյուցիայի մեկ այլ՝ նույնքան հզոր շարժիչ ուժ. դա փոխշահավետ համագործակցությունն է: Դեռ նախքան մասնավոր սեփականության առաջացումը որսորդությամբ զբաղվող մարդիկ համախմբվում էին՝ միմյանց օգնելու և զիջատիչներից պաշտպանվելու նպատակով: Աշխատանքի առաջին և երկրորդ բաժանումը նպաստեց, որ համախմբումը մասնավոր սեփականության, ընտանիքի և պետության ինստիտուտների բնականոն գործառության համար հենվի արտադրության և հաղորդակցության ընդհանուր շահերի վրա<sup>6</sup>: Հետևաբար, համագործակցությունը փոխշահավետ հաղորդակցություն է գործունակ և կարողունակ քաղաքական դերակատարների միջև, որպեսզի փոխադարձ անվտանգության փոխզիջումային քաղաքականության միջոցով ապահովվեն արդյունքի կառավարումը և նորարարությունը: Որպես այդպիսին այն ենթադրում է քաղաքական դերակատարների մեծ ներկայակցություն, ազդեցության և շահերի խմբեր, ինչպես նաև կուսակցություններ: Վերջիններս, փոխշահավետ համագործակցելով, ապահովում են սեփական **տեսակի** զարգացումը, համակեցությունը, անվտանգությունը, ինքնադրսևորման և ինքնաիրացման բոլոր հնարավորությունները: «Համագործակցություն» եզրույթը շրջանառության մեջ է դրվել 19-րդ դարում, երբ զարգացավ արդյունաբերությունը, ի հայտ եկան անդրազգային կորպորատիվ կազմակերպություններ, առաջացավ ոչ միայն աշխատանքի մասնագիտական բաժանման և առկա խնդիրների սահմանման ինստիտուցիոնալ, այլև այդ կազմակերպությունների շահերը հանրային քաղաքականության մեջ կուսակցությունների միջոցով ներկայացնելու պահանջ: Այստեղից էլ համագործակցությունը դարձավ ուտիլիտարիզմի, սոցիալական ազատականության, կոլեկտիվիզմի, փոխօգնության և հետագայում գիտական առավարման և մարդկային կապերի կազմակերպական տեսության հիմնարար նորմ՝ ուղղված մասնակցային ջանքերին և վստահելի հարբերությունների զարգացմանը<sup>7</sup>:

Այս մոտեցումը անգլիական բուրժուական հեղափոխությունից հետո դրվեց քաղաքական համակարգի հետագա ժողովրդավարացման հիմքում՝ ներառելով համագործակցություն, որը հնարավորություն կտար խուսափելու հասարակության մարգինալացումից և արժեքային բևեռվածությունից: Հետագա քաղաքական զարգացումներում նմանօրինակ ընկալումը որդեգրվեց նաև ժողովրդավարական անցման պայմաններում՝ անորոշությունների կանխման և կուսակցական լիդերների գործունեության պատասխանատվության բարձրացման ակնկալիքով ներառվելով կուսակցական լիդերի կայացման ուսումնա-

<sup>6</sup> Տե՛ս **Энгельс Фридрих**, Происхождение семьи, частной собственности и государства, М., Госполитиздат, 1952, էջ 4:

<sup>7</sup> Տե՛ս **O'Flynn, J., & Wanna, J.**, Collaborative Governance: A New Era of Public Policy in Australia? Canberra, Australia: ANU E Press, 2008, էջ 3:

սիրման տիրույթ: Քաղաքական գիտության կառուցվածքում կուսակցագիտությունը, ակադեմիական ուսումնասիրման և կուտակված փորձի համեմատական վերլուծության ակնկալիքով ստանձնեց կուսակցության՝ որպես քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտի և պետության, ինչպես նաև այլ քաղաքական դերակատարների հետ համագործակցության համակողմանի ուսումնասիրումը: Այս նկատառումներով էլ այսօր ակադեմիական մոտեցումներում առկա են կուսակցության բազմաթիվ սահմանումներ:

Այսպես, ըստ Մ. Դյուվերժեի՝ «քաղաքական կուսակցությունները ձևավորվում են համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ակնկալելով առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործում իշխանության իրականացման համար»<sup>8</sup>: Բտալացի կուսակցագետ Ջ. Սարտորին սահմանում է հետևյալ կերպ. «Կուսակցությունը ընտրություններին մասնակցող և ընտրությունների ճանապարհով պետական պաշտոնների համար թեկնածուներ առաջադրող քաղաքական խումբ է»<sup>9</sup>: Ինչպես տեսնում ենք, և՛ Մ. Դյուվերժեն, և՛ Ջ. Սարտորին կուսակցությունների համար առաջնային են համարում ընտրություններին օրինական և լեգիտիմ մասնակցելու ու ընտրովի քաղաքական պաշտոններում մարդկանց նշանակելու կամ թեկնածություն առաջադրելու ինստիտուցիոնալ հնարավորությունը: Ուշագրավ է քաղաքագետ Գ. Քեռյանի մոտեցումը. «Քաղաքական կուսակցությունը քաղաքական գործունեությամբ զբաղվող, քաղաքական կյանքին և քաղաքական գործընթացին մասնակցող մարդկանց կազմակերպությունն է (խումբը), որը ձևավորվում է քաղաքական շահի ու նպատակների ընդհանրության հիմքի վրա: Այն հանդիսանում է քաղաքական ինստիտուտ, քաղաքական-իրավական համակարգի բաղկացուցիչ մաս»<sup>10</sup>:

Հանրագումարելով վերոնշյալ սահմանումները՝ փաստենք, որ կուսակցությունը՝ որպես հանրային քաղաքականության առանցքային ինստիտուտ, արտահայտում է որևէ սոցիալական խմբի կամ որոշակի պետության ընդհանուր, մասնավոր, խմբային կամ հիմնական շահերը, ունի մարտավարական և ռազմավարական ծրագիր, որպես կանոն որոշակի գաղափարական հիմք ունի, մրցակցում է նույնատիպ այլ կազմավորումների հետ՝ պետական իշխանության և հասարակության մեջ ազդեցության հասնելու համար: Կերպափոխվող հասարակություններում անվտանգության ապահովման բաղադրիչ է բնակչության քաղաքական գիտակցության ձևավորումն ու քաղաքական գործընթացներին նրանց մասնակից դարձնելու գործառույթը: Այս համատեքստում էլ

<sup>8</sup> Дюверже М. Политические партии / Пер. с франц., М.: Академический Проект, 2000, с. 20-21.

<sup>9</sup> Sartori G., Parties and Party Systems: A Framework for Analysis, Vol. 1, New York, 1976, p. 614.

<sup>10</sup> Գ. Քեռյան, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, «Վան Արյան», Եր., 2002, էջ 55-56:

փաստենք, որ ՀՀ-ում քաղաքական համակարգի կերպափոխումը տեղի է ունենում լիդերության ինստիտուտի կայացման բարդ գործընթացում: Լինելով կուսակցական լիդերի գործունեության կարևորագույն ուղղություն՝ այդ հիմնախնդրի բացահայտումը ՀՀ-ում եղել և մնում է համագործակցության մշակույթի զարգացման բաղադրիչ:

Համագործակցության մշակույթը ծագում և զարգանում է մարդկանց համատեղ գործողությունների անհրաժեշտության, նրանց ֆիզիկական գոյության ապահովման, աշխատանքային պայմանների մշտական բարելավման, առօրյա կյանքի և հանգստի ազդեցության պայմաններում: Այն առաջանում է մարդու գիտակցված գործողությունների զարգացմանը զուգընթաց: Ռացիոնալ մտածողությունը թույլ է տալիս հասկանալ համակարգված գործողությունների առավելությունները, որոնք ուղղված են ինչպես խմբային, այնպես էլ անհատական շահերին: Այդ մտածողության շնորհիվ մարդը գիտակցում է, որ համատեղ ջանքերով հնարավոր է զգալիորեն մեծացնել խմբի յուրաքանչյուր անդամի ցանկալի արդյունքի հասնելու հավանականությունը, հետևաբար առաջանում է վերաբերմունք կոլեկտիվ գործողությունների նկատմամբ: Դրանց մասնակցելով՝ անհատն ավելի արագ և լիարժեք կբավարարի իր անձնական շահերը, քանի որ բոլոր մարդիկ ունեն օգնության կարիք և կախվածություն միմյանցից: Մարդկային համերաշխությունը ցանկացած անհատականության բացահայտման անհրաժեշտ պայմանն է<sup>11</sup>:

**Կարևորելով անձի սոցիալականացման հարատևությունը՝ շեշտենք անհատական և կոլեկտիվ մշակույթի նշանակությունը և համագործակցությունը որպես արդյունքի կառավարում դիտարկելու խնդիրը:**

Այս համատեքստում համաձայն ենք հետևյալ մոտեցմանը. «Կոլեկտիվ մշակույթներում գլխավորը ներդաշնակությունն է, փոխադարձ կախվածությունը, համաձայնությունը. վարքագիծը ձևավորվում է խմբի կարիքներով, մինչդեռ անհատական մշակույթներում գերակշռում է վերաբերմունքը ինքնավարության, անձնական նվաճումների, եզակիության, անձի իրավունքների և կարիքների պաշտպանության նկատմամբ»<sup>12</sup>: Փաստորեն, համատեղ աշխատանքը պահանջում է բարձր համակարգվածություն դրանում ներգրավված աշխատողների գործողություններում, անձնական շահերի ստորադասում խմբային շահերին<sup>13</sup>: Ապացուցված է, որ այս երկու մշակույթների կրողները տարբեր կերպ են ընկալում ու գնահատում մարդկանց և նրանց հետ հարաբերությունները:

<sup>11</sup> St' u **Фромм Э.** Человек для себя. Исследование психологических проблем этики. Перевод с английского Л. А. Чернышевой. Минск: Коллегиум, 1992, էջ 73:

<sup>12</sup> **Sapolsky R.**, Behave: The Biology of Humans at Our Best and Worst, Penguin Press; Illustrated edition, 2017, p. 247.

<sup>13</sup> St' u **Меренков А. В.** Культура эгоизма или культура сотрудничества: какая побеждает?: монография / А. В. Меренков. – Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2021, էջ 31:



րում տարբերվում են բարոյական նորմերի կիրառման ձևերով<sup>14</sup>: Անհատական մշակույթ կրողների ուղեղը ավելի լավ է հիշում այն իրադարձությունները, որոնք ազդել են ուրիշների վրա, իսկ կուլեկտիվ մշակույթի ներկայացուցիչները՝ երբ ենթարկվել են այլ մարդկանց ազդեցությանը<sup>15</sup>: Հետևաբար, համագործակցության մշակույթը ծագում և ձևավորվում է, երբ անհատների, ինչպես նաև փոքր և մեծ խմբերի ընդհանուր նպատակը յուրաքանչյուրի համար անհրաժեշտ արդյունքների հասնելն է: Համատեղ գործունեությունն արդյունավետ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ մյուսների հետ հավասարաչափ կատարում է որոշակի աշխատանք: Այնուամենայնիվ, «համագործակցություն» հասկացությունը ցույց է տալիս սոցիալական դերակատարների միջև հարաբերությունների ստեղծումը, որոնք կարգավորվում են որոշակի նորմերով, կանոններով, որոնք թույլ են տալիս առավելագույն օգուտ քաղել աշխատանքում անհատական ջանքերի զուգամիտումից<sup>16</sup>:

Հիմնականում համագործակցությունը պատկերվում է որպես սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի կազմակերպման համար անհրաժեշտ գործոն և միտված է որոշակի արդյունքի ձեռքբերմանն ու կառավարմանը: Կուսակցությունները կարող են համագործակցել «լավ» և «վատ» նպատակներով: Հետևաբար, անհրաժեշտ է կարևորել համագործակցության համատեքստը, նպատակները, ինչպես նաև առաջացման դրդապատճառները, ներգրավված միջոցները և ակնկալվող արդյունքները: Այդ առումով հարկ է առանձնացնել քաղաքագետ Ա. Վիլդավսկու հիմնավորումները, որը համագործակցությունը դիտարկում է որպես բազմաչափ երևույթ: Նախ՝ համագործակցությունը կարող է կիրառվել դերակատարների միջև գործողությունները հստակեցնելու համար: Երկրորդ՝ համագործակցությունը կարող է լինել բանակցային գործընթաց, որը ներառում է փոխզիջումներ կատարելու պատրաստակամություն: Երրորդ՝ համագործակցությունը կարող է ներառել վերահսկողական դերեր՝ ստուգում, ձևավորում և համակարգում: Չորրորդ՝ համագործակցությունը կարող է ներառել ուժ և հարկադրանք՝ անձնական նախասիրությունները որոշակիորեն պարտադրելու կարողություն: Հինգերորդ՝ համագործակցությունը կարող է ներառել մտադրություններ, հեռանկարային վարք և գործողությունների պլանավորում: Վերջապես՝ համագործակցությունը կարող է ներառել ներգրավվածություն, ներքին դրդապատճառների զարգացում և անձնական նվիրվածություն նախագծերին, որոշումներին, կազմակերպչական կամ ռազմավարական նպատակներին: Ակնհայտ է, որ այս վեց կետերը պարտադիր

<sup>14</sup> Sté u Stereotype Content Model across Cultures: Towards Universal Similarities and Some Differences / A. Cuddy et al. // Brit. J. Soc. Psych. 2009. № 48, էջ 1:

<sup>15</sup> Sté u **Sapolsky R.**, Behave: The Biology of Humans at Our Best and Worst, Penguin Press; Illustrated edition, 2017, էջ 248:

<sup>16</sup> Sté u **Меренков, А. В.**, նշվ. աշխ., էջ 34:

չէ, որ լրացնեն միմյանց. նաև կարող են բացառել իրար<sup>17</sup>: Հետևաբար, համագործակցությունը բարդ և բազմաչափ երևույթ է: Հայեցակարգային առումով ունենք համագործակցության երկու հստակ չափումներ, որոնք շարունակաբար հատվում և տարբերվում են. **առաջին՝ համագործակցության մասշտաբը կամ աստիճանը, և երկրորդ՝ համագործակցային գործունեության հիմքը, նպատակը կամ դրդապատճառը**: Համագործակցության մասշտաբը կամ աստիճանը դասակարգում է գործունեության այն օրինաչափությունները, որոնք կա՛մ առկա են, կա՛մ ծրագրված: Ակնհայտ է, որ և՛ ընդհանուր, և՛ քաղաքական մշակույթի արդիականացման միջոցով համագործակցության մշակույթը հնարավորություն կտա կերպավորվող հասարակություններին ռացիոնալ պատասխանելու արտաձին և ներաձին մարտահրավերներին<sup>18</sup>:

Կուսակցություններն իրենց գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով շահագրգռված են նվազեցնելու մարզինալիզմը և բարձրացնելու բնակչության քաղաքական գիտակցության մակարդակը: Դիտարկելով կուսակցական լիդերի ազդեցությունը ՀՀ հանրային քաղաքականության արդիականացման գործընթացում կարծում ենք, որ նրա գործառույթների ռացիոնալացման միջոցով կարելի է որոշել լիդերի գործնական, փաստացի դերը հասարակության քաղաքական համակարգում, բացահայտել քաղաքական գործընթացին նրա մասնակցության աստիճանը և արդյունավետությունը՝ սկսած որոշումների ընդունումից, վերջացրած դրանց գործնական իրականացմամբ: Այս դիտանկյունից կուսակցական լիդերները, որդեգրելով իմբային լիդերության գործառույթները, իրենց առջև հանրային կառավարման շահերի տեսակետից առավել իրատեսական նպատակներ պետք է դնեն, քանի որ ներգրավելով երիտասարդությանը քաղաքականության մեջ՝ մարզինալիզմը կանխելու համար պարտավոր են ապահովել **փոխադարձ անվտանգության փոխզիջումային (ՓԱՓ)** համակարգի բնականոն նորարարությունը (innovation):

Կուսակցական լիդերի որպիսության փորձաքարը նորարարության նրա ընդունակությունն է, իշխանության իրականացման մշակույթի վերաբերյալ նրա պատկերացումները, իշխելու նկատմամբ ունեցած արժեքանության հիմնավորումը, պետության և քաղաքացիների հետ ներդաշնակ հարաբերությունների պահպանումը: Կարևորելով համագործակցության մշակույթի զարգացման գաղափարը՝ առաջարկում ենք, որ այսուհետ ՀՀ-ում կուսակցական լիդերներն իրենց կայացման գործընթացում ելակետ ընդունեն Էվան Ռոուզենի արդյունավետ համագործակցության 10 կետերը<sup>19</sup>:

<sup>17</sup> St' u **Wildavsky, A.**, If planning is everything, maybe it's nothing, *Policy Sciences*, 1973, Volume 4, No 2, էջ 127-153:

<sup>18</sup> St' u **Մամիկոն Մարգարյան**, նշվ. աշխ., էջ 194:

<sup>19</sup> St' u **Розен Э.** Культура сотрудничества / Пер. с англ., М.: ЭКОМ Паблицерз, 2009, էջ 25-32:

**1. Վստահություն:** Գաղափարներ փոխանակելու և այլ մարդկանց հետ արժեք ստեղծելու համար պետք է սովորել վստահել: Պոտենցիալ գործընկերները ընդհանուր մտավախություն ունեն, որ գործընկերը իրենցից գողանալու է գաղափարը և վերագրելու է իրեն: Նման մտավախություններն արդարացված են հատկապես մրցունակ կազմակերպչական մշակույթում: Այնուամենայնիվ, պետք է հաղթահարենք մեր վախերը և սովորենք վստահել, եթե ցանկանում ենք արդյունավետ համագործակցել:

Լավագույն որոշումները հաճախ ընդունվում են, երբ նոր գաղափարները տարբեր կողմերից են դիտարկվում: Հետևաբար, անգնահատելի թվացող գաղափարը դեռ սկիզբն է. այն պահանջում է հավաքական ներդրում ավարտուն տեսքի հասցնելու գործում, որպեսզի ճիշտ ժամանակին այն օգտագործվի որպես պատրաստի լուծում: Այսպիսով, «գողացված» գաղափարը գուցե ոչ մի բան չարժե, քանի դեռ այլ աշխատակիցներ չեն աշխատել դրա վրա: Ռիսկը, որ ինչ-որ մեկը ներգրավված է մեր հայեցակարգերի մշակման մեջ, կարող է փոխհատուցվել այն փաստով, որ մենք առանձին կամ կոլեկտիվ կարող ենք հանդես գալ նույնիսկ ավելի լավ մոտեցմամբ և արժեք ավելացնել ընկերությանը:

**2. Տեղեկատվության փոխանակում:** Թեպետ համագործակցությունը տեղեկատվության փոխանակման ձև է, սակայն ոչ բոլորն են սիրում կիսել տեղեկատվությունը: Շատերը պահպանում են իրենց «ունեցվածքը»: Այս «կովարարները» սիրում են, երբ իրենց են դիմում խորհուրդ ստանալու համար՝ ստիպելով գործընկերներին փնտրել իրենց: Նրանք կարծում են, որ այս մոտեցումը նրանց անփոխարինելի է դարձնում կազմակերպության համար: Խնդիրն այն է, որ տեղեկատվությունը պահելը խոչընդոտում է գաղափարների ազատ հոսքը և դրանով իսկ մերժում համագործակցության հաստատման համատեղ ջանքերը: Կիսելով մեր գիտելիքները՝ մեծացնում ենք կոլեկտիվ ստեղծագործական գործունեության արդյունավետությունը՝ բարձրացնելով կազմակերպության յուրաքանչյուր աշխատակցի կարևորությունը:

**3. Նպատակադրում:** Համագործակցությունը ներառում է մեկ (կամ ավելի) ընդհանուր նպատակ կամ խնդիր: Համագործակցության ծրագրի սկզբում զգույշ, անշտապ նպատակին ձգտելը կտա իր պտուղը խթանելով համատեղ ստեղծագործական գործունեությունը: Եվ հակառակը՝ տարբեր նպատակներ դնելը հանգեցնում է հակամարտության, ստեղծում է խառնաշփոթ և խոչընդոտում է համագործակցությունը: Համատեղ նպատակները ստեղծում են հստակություն, նպաստում են գաղափարների առաջացմանը և խթանում նորարարությունն ու համագործակցությունը:

**4. Նորարարություն:** Նորարարության մղումը խթանում է համագործակցությունը: Համագործակցությունն իր հերթին բարելավում է նորարարական գործելակերպը: Ի վերջո, ինչո՞ւ համագործակցել պար-

զապես ստատուս քվոն պահպանելու համար: Արդյունավետ համագործակցության շնորհիվ ծնվում են խնդիրների լուծման նոր մոտեցումներ: Ահա թե ինչու արժեք ստեղծելու համագործակցությունը կազմակերպության համար ծնում է պարտավորություն՝ ուղղված նոր գաղափարների գեներացմանը, արտադրության մեթոդների, ապրանքների և ծառայությունների կատարելագործմանը:

**5. Միջավայր:** Ֆիզիկական և վիրտուալ դիզայնը կարող է հեշտացնել կամ խոչընդոտել համագործակցությունը և նորարարությունը: Կազմակերպության միջավայրը խթանում է ազատ ստեղծագործական ունակությունները, թիմային աշխատանքը և հաղորդակցությունը:

**6. Համագործակցային քառու:** Թեև բոլոր մարդիկ և կազմակերպությունները կարգուկանոնի կարիք ունեն, այնուամենայնիվ արդյունավետ համագործակցությունը ենթադրում է որոշակի աստիճանի քառու: Քառու բառը նշանակում է անարխիա (անիշխանություն), անկարգություն, բայց այստեղ այն այլ իմաստ ունի: Մենք կարող ենք համատեղ քառուը սահմանել որպես գաղափարների չկառուցված փոխանակում՝ արժեք ստեղծելու համար: Կարգը տալիս է կանխատեսելի արդյունքներ, իսկ համագործակցային քառուը՝ անսպասելի և օգտակար արդյունքներ:

Համագործակցային քառուի տարր ունեցող կորպորատիվ մշակույթն օգնում է մեզ հնարավորություն տեսնելու նոր մարտահրավերների մեջ և դասեր քաղելու սխալներից: Իրականում որոշ անսպասելի հայտնագործություններ ոչ թե գաղափար ձևավորելու և զարգացնելու միջոցով են առաջանում, այլ պատահաբար:

**7. Կառուցողական հակասություն:** Արդյունավետ համագործակցությունը ենթադրում է կարծիքների փոխանակում, ինչը երբեմն հանգեցնում է կառուցողական հակասությունների առաջացման: Քանի որ մեզանից շատերը հաճախ հակված են համաձայնվելու հակառակ կարծիքին հանգստություն և կարգուկանոն պահպանելու համար, սակայն աշխատողների լռությունը բացասաբար է անդրադառնում նրանց աշխատանքի արդյունքի վրա: Կառուցողական հակասությունը կարող ենք անվանել գաղափարներ ներկայացնելիս անաչառության դրսևորում:

**8. Հաղորդակցություն:** Համագործակցությունն անքակտելիորեն կապված է հաղորդակցության հետ, որը միջանձնային և կազմակերպչական է: Միջանձնային ոլորտում մենք պետք է հարմարավետ զգանք միմյանց հետ շփվելիս: Կազմակերպչական տեսանկյունից հաղորդակցության ուղիները պետք է բաց մնան համագործակցության համար: Պետք է հնարավոր լինի գտնել և կապ հաստատել մարդկանց հետ՝ անկախ նրանց գտնվելու վայրից և պատկանելությունից: Բացի այդ, կազմակերպչական մշակույթը պետք է հնարավորություն ընձեռի կապ պահպանելու ընկերության ցանկացած աշխատակցի հետ՝ նրան ներգրավելով համագործակցության մեջ:

**9. Հետաքրքրությունների ընդհանրություն:** Շատ դեպքերում լուրջ փորձություն է անհրաժեշտ համագործակցության միջոցների, միջավայրի և մեթոդների համար. արդյոք դրանք ստեղծում են ընդհանուր հետաքրքրությունների զգացում: Ընդհանրությունը խմբին պատկանելու զգացումն է, որը որոշվում է ընդհանուր շահերով և արժեքներով: Առանց ընդհանրության զգացողության մեզ պակասում են հարմարավետությունն ու վստահությունը: Հետևաբար, արդյունավետ համագործակցության համար պետք է լինի ընդհանրություն:

**10. Արժեք:** Համագործակցության մշակույթի տասը տարրերի ցանկը եզրափակում է արժեքը: Առանց արժեք ստեղծելու համագործակցելը, նման է առանց վերջնական նպատակակետը իմանալու մեքենա վարելուն: Մենք կարող ենք չափել արժեքը շատ տարբեր եղանակներով: Այսօրվա արժեքը թույլ է տալիս կրճատել արտադրանքի զարգացման ժամանակը, ավելի արագ լուծել խնդիրները, կատարելագործել բարձր պահանջարկ ունեցող ապրանքը կամ ծառայությունը, ուստի և ավելացնել վաճառքը: Մենք համագործակցում ենք արժեք ստեղծելու համար:

Ելակետ ընդունելով նշված կետերը՝ փաստենք, որ համագործակցային մշակույթի իրականացման գլխավոր դերակատար կուսակցական լիդերը մի կողմից պատասխանատու է «ներքնից» ակնկալվող բազմաչափ բարեփոխումների իրականացման, մյուս կողմից՝ քաղաքական տարածության և ժամանակի մեջ անորոշությունների կանխման համար: Մեր կարծիքով՝ նմանօրինակ մոտեցումը ոչ միայն որակական նոր մակարդակի կբարձրացնի կուսակցական լիդերի կայացման գործընթացը՝ մեծացնելով համագործակցության մշակույթի բաղադրիչի պահանջարկը, այլև կկանխի ժողովրդավարության անցման գործընթացում գտնվող հետխորհրդային երկրներում ստեղծված քաղաքական վարչակարգերի, իշխանության բաշխման և վերարտադրման կառույցների չափազանց լայն տարապատկերի հետևանքով ստեղծված «աճականակերտ ժողովրդավարության» անորոշությունները: Ավելին, նմանօրինակ մոտեցմամբ վստահորեն կարող ենք փաստել, որ հետխորհրդային տարածքում ժողովրդավարության անցման գործընթացում ստացված արդյունքներն ակնհայտորեն վկայում են, որ քաղաքական արդիականացման և զարգացման գլխավոր միտումների մասին գծային պատկերացումը տեսական առումով վերանայման կարիք ունի<sup>20</sup>: Այս մոտեցմամբ էլ կարևորում ենք համագործակցության մշակույթը որպես կուսակցական լիդերի կայացման պայման դիտելու խնդիրը:

Ակնհայտ է, որ ՀՀ-ում հանրային քաղաքականություն իրականացնելիս անհրաժեշտ է կուսակցական լիդերին դիտել որպես համագործակցային մշակույթի նորարարացնող դերակատար, քանի որ ընտրությունների միջոցով խորհրդարան եկած և գործադիր իշխանությունում

<sup>20</sup> Տե՛ս Մ. Մ. Մարգարյան, Մ. Գ. Մարգարյան, Լ. Գ. Նիկողոսյան, «Գունավոր հեղափոխություն». տեսություն և տեխնոլոգիաներ. Եր., «Պետական ծառայություն», 2021, էջ 13:

ղեկավարի կարգավիճակ ձեռք բերած կուսակցական ակտիվիստները պատասխանատու են համակեցության պահպանման և արդյունքի ապահովման համար: Միաժամանակ, ՀՀ ժողովրդավարացման փոխակերպման գործընթացում համագործակցային մշակույթի առկայությունը հնարավորություն կտա բարձրացնելու կուսակցական լիդերի իրավաքաղաքական գիտակցության մակարդակը, նորարարության հակվածությունը, ինչպես նաև որոշումներ ընդունելու գործընթացում հանրային շահի գերակայության ապահովման անհրաժեշտությունը:

Անցումային հասարակություններում առավել քան կարևորվում է համագործակցության մշակույթի զարգացումը, որը, հենվելով հանրային համերաշխության և համակեցության վրա, հնարավորություն է տալիս ապահովելու սոցիալական երկխոսություն, զարգացնելու մարդկային կապիտալը, պայքարելու աղքատության և կոռուպցիայի դեմ, ինչպես նաև վարելու նորարարական քաղաքականություն: Համագործակցության մշակույթի, քաղաքական որոշումների թափանցիկության, կյանքի որակի բարձրացման, նորարարական մտածողության, քաղաքացիական դիրքորոշման և պատասխանատվության բարձրացումը կուսակցական առաջնորդի կայացման հրամայականն է:

Համագործակցության մշակույթի միջոցով անցումային հասարակությունների կուսակցական լիդերները ձեռնամուխ են լինում տնտեսական և քաղաքական շուկայի արդիականացման գործընթացին: Դրա բոլոր դերակատարները յուրովի պայքարում են կայուն զարգացման և կյանքի որակի համար՝ զուգամիտելով համագործակցության սահմանադրաիրավական, բարոյահոգեբանական և մշակութաքաղաքակրթական հիմքերը:

Աշխարհում կատարվող խորքային փոփոխությունները լուրջ տեղաշարժեր են առաջացրել միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, որի հիմնաքարը համագործակցության մշակույթն է: Այն պատմության հոլովույթում շարունակվող գործընթաց է, որը ձեռք է բերել նոր որակներ և ծավալներ: Կարելի է ընդունել, որ գլոբալացման ժամանակակից պայմաններում հատկանշական են համագործակցության մշակույթի նոր որակական սկզբունքները, որոնք հիմք են տալիս այն դիտարկելու որպես գլոբալ քաղաքակրթության զարգացման օրինաչափ, սակայն առանձնահատուկ օղակ: Լայն իմաստով՝ համագործակցության մշակույթը նշանակում է կենսագործունեության տարբեր ոլորտների միջև անմիջական փոխհարաբերության միասնական դաշտի ստեղծում՝ պետությունների սոցիալական քաղաքականության մշակման միջազգային համակարգ: Համաշխարհային մասշտաբով համագործակցության մշակույթի և ժողովրդավարության որակի բարձրացման վրա ազդում են տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների ցանցային կիրառումը, տեղական (ազգային), լոկալ և գլոբալ միջազգային հաղորդակցության որակապես նոր պայ-

մանների ստեղծումը: Համագործակցության մշակույթը նաև սոցիալական պատասխանատվության հաստատման կարևոր միջոց է, որը բարձրացնում է կուսակցությունների և կուսակցական լիդերների հեղինակությունը, քանի որ ենթադրվում է, որ պետք է հենվի հանրային շահի բնականոն արդիականացման և արդյունքի կառավարման վրա՝ խուսափելով հանրային գիտակցության մանիպուլյացիայից:

Այսպիսով, համագործակցության մշակույթի զարգացումը երկրի և ժողովրդի շահերի համակեցությանն ուղղված արժեշահային համակարգի ամբողջությունն է, որը ենթադրում է հասարակության մեջ սոցիալական կառուցվածքի և հարաբերությունների, մարդկանց կենսապահովման համակարգի և սոցիալականացման զարգացում, որոնք իրենց ամբողջության մեջ օգնում են քաղաքացիական հասարակության բնականոն գործունեությանը: Միաժամանակ, նկատի ունենալով նոր ծագող սպառնալիքների զարգացման անորոշ ելքերը, անհրաժեշտություն է առաջացել արդի պայմաններում կարևորելու կուսակցական լիդերի դերը համագործակցության մշակույթի համատեքստում:

**МАНЕ АТИКЯН – *Культура сотрудничества как условие становления партийного лидера.*** – В статье изучена ценностная многоаспектность культуры сотрудничества. Автором обоснован подход, согласно которому культура сотрудничества представляет собой систему отношений, включающую процессы гражданской солидарности и согласия, развития культуры государственного строительства, обеспечения национальной безопасности. В этом контексте обозревателем подчеркнута адаптивность взаимовыгодного сотрудничества в сфере современного информационно-коммуникационного развития как движущая сила партийного руководства. По мнению автора, сотрудничество представляет собой взаимовыгодное совместное общение между функциональными и дееспособными политическими акторами с целью обеспечения эффективного управления и инноваций посредством политики взаимного компромисса безопасности. В то же время документально подтверждено, что трансформация политической системы в РА происходит в сложном процессе становления института лидерства. Являясь важнейшим направлением деятельности партийных лидеров, выявление этой проблемы было и остается составной частью развития культуры сотрудничества в РА. С этой точки зрения рекомендуется повышать уровень политического сознания населения для обеспечения оптимальности деятельности партии, снижения маргинализма и осуществления прочной социализации. Очевидно, что в условиях реализации публичной политики РА лидера партии необходимо рассматривать как инновационного актора кооперативной культуры, поскольку партийный актив, прошедший в парламент через выборы и получивший статус определенного лидера в исполнительной власти несут ответственность за поддержание сосуществования и обеспечение результата. В то же время наличие кооперативной культуры в процессе демократизации РА позволит повысить уровень правовой и политической грамотности партийных лидеров, склонность к инновациям, а также ответственность за обеспечение верховенства общественных интересов в процессе принятия решений.

**Ключевые слова:** *трансформационное общество, культура сотрудничества, партийный лидер, гражданская солидарность, культура государственного строительства, национальная безопасность, управление результатом, ответственность*

**MANE ATIKYAN – *The Culture of Cooperation as a Condition of Shaping a Party Leader.*** - The article makes a focus on the value multidimensionality of the culture of cooperation. The author justifies an approach according to which the culture of cooperation is such a system of relations that includes the processes of civil solidarity and agreement, the development of the culture of state-building, and the provision of national security. In this context, the author emphasizes adaptability and discusses mutually beneficial cooperation as a driving force for the establishment of party leadership in the context of modern information and communication development. According to the author, cooperation is a mutually beneficial cooperative communication between agile and competent political actors to ensure effective governance and innovation through the compromise policies of mutual security. At the same time, the author argues that the transformation of the political system in Armenia takes place in the complex process of establishment of the leadership institute. Being the most important direction of the activity of the party leaders, the identification of this problem was and remains a component of the development of the culture of cooperation in Armenia. From this point of view, it is recommended to increase the level of political consciousness of the population to ensure the optimality of the party's activity, reducing marginalism and implementing lasting socialization. Obviously, in the conditions of implementing the RA public policy, it is necessary to consider the party leader as an innovative actor of the cooperative culture because the party activists who come to the parliament through the elections and receive the status of a certain leader in the executive power are responsible for maintaining coexistence and ensuring the result. At the same time, the existence of a cooperative culture in the process of transformation of the democratization of Armenia will enable to increase the level of legal and political awareness of party leaders, the propensity for innovation, as well as the responsibility of ensuring the supremacy of public interest in the decision-making process.

**Key words:** *transforming society, culture of cooperation, party leader, civil solidarity, state-building culture, national security, result management, responsibility*



**ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԷՂԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ**

Վերջին տարիներին ավելի մեծ չափերի է հասել միգրացիայի հիմնախնդիրն աշխարհում, որը պայմանավորված է սոցիալական, քաղաքական, ռասայական, ռազմական, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամերով: Միգրանտների հիմնական ուղղությունը Արևմուտքի զարգացած երկրներն են, որոնցից Իտալիան առավել ռիսկային պետություններից է:

Իտալիան, մինչև նախորդ դարի 70-ական թթ. եղել է արտագաղթի երկիր: Հակառակ հոսքը արդյունքն էր նաև երկրում իրականացվող «բաց դռների քաղաքականության»:

1993 թվականին Իտալիայի բնակչությունն աճում էր շնորհիվ ներգաղթյալների: Այս ամենը կառավարելու համար պետությունը ընդունեց համապատասխան օրենքներ, որոնք կարգավորում էին երկրում միգրացիայի հիմնախնդիրը: Դիտարկելով օրինական ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացիների ծագման երկրների ցանկը՝ կարելի է տեսնել, որ վերջին տարիներին Արևելյան Եվրոպայից նկատվում է հոսքերի զգալի աճ, որը գերազանցել է Հյուսիսային Աֆրիկայի երկրներին, որտեղից մինչև 1990-ական թվականները մեծ էր ներհոսքը: Օտարերկրյա քաղաքացիների բաշխվածությունը Իտալիայի տարածքում խիստ անհավասար է. նրանց 34.1%-ը բնակվում է հյուսիս-արևմուտքում, 24.5%-ը՝ հյուսիս-արևելքում, 25.4%-ը՝ կենտրոնում, 15%-ը հարավում և կղզիներում: Նկատվում է նաև մեծ անհավասարություն քաղաքների և գյուղական շրջանների միջև:

Այսօր այդ ամբողջ գործընթացի կառավարումը լրջագույն մարտահրավեր է պետության համար, և դրանից խուսափելու ճանապարհը կլինեն այդ ոլորտի քաղաքականությունը վերանայելը, և կոնկրետ օրենսդրական կարգավորումներով համապարփակ լուծումներ առաջարկելը:

**Բանալի բառեր** – *միգրացիոն քաղաքականություն, արտագաղթ, ներգաղթ, կառավարման ընթացակարգեր, օրենսդրական կարգավորումներ, պետական կառավարման արդյունավետություն, օրինականություն, անօրինական ներգաղթ*

Հանրային կառավարման արդյունավետությունը չափվում է տվյալ երկրի ներքին և արտաքին մարտահրավերներին ճիշտ արձագանքմամբ ու կառավարմամբ: Այս համատեքստում պետության առաջնահերթությունը ազգային անվտանգային երաշխիքներ սահմանելը և պահպանելն է: Պակաս կարևոր չեն նաև պետական կառավարման ներքին կանոնակարգերի մշակումն ու զարգացումը: Ներքին կառավարչական գործունեության առանձնահատկություններն իրենց յուրօրինակությամբ ժամանակակից կառավարման համակարգում նոր խնդիր են դնում, որը ենթադրում է վերաբժնորել եղած կառուցակարգերը: Պետական կառավարչական գործունեության կազմակերպման արդյունավետ

ընթացակարգերի մշակումը զարգացման կարևոր նախապայման կարող է դառնալ: Կառավարումը միշտ պետք է պարունակի կազմակերպչական տարր, ուղղորդի փոխհարաբերությունները մարդկանց միջև: Հետևաբար դա մարդկանց նպատակադրող, կազմակերպող և կարգավորող ազդեցությունն է հասարակական, խմբային և կոլեկտիվ կենսագործունեության վրա, որն իրականացվում է ինչպես ուղղակի, այնպես էլ հատուկ կառույցների միջոցով: Ըստ այդմ անհրաժեշտություն է առաջանում առավել մեծ ուշադրություն դարձնել հանրային կառավարման հիմնախնդիրների ուսումնասիրությանը և զարգացման հեռանկարներին: Համաշխարհայինացման պայմաններում հույժ կարևորվում են հանրային քաղաքականության մշակումն ու իրականացումը, որոնք կնպաստեն համազգային նպատակների իրագործումը, հասարակության կամքի արտահայտմանը և շահերի պաշտպանությանը, տնտեսության, հասարակության բնականոն և կայուն զարգացմանը<sup>1</sup>:

Պետական կառավարումը ենթադրում է ճիշտ համակարգված գործունեության ամբողջություն. այն պետական մարմինների, հասարակական կառույցների, ծառայողների, հանրային լայն շրջանակների գործունեությունը կանոնակարգող մի օրգանիզմ է, որը պետք է երաշխավորի արդյունավետ կառավարում: Վերջինս ներառում է կառավարչական բազմաթիվ որոշումներն ու գործողությունները: Եվ միայն համակարգման շնորհիվ դրանք կարող են լինել համաձայնեցված, նպատակաուղղված, ռացիոնալ, արդյունավետ<sup>2</sup>: Այն որպես համակարգ ունի մի քանի գործառույթ

- ինստիտուցիոնալ (իրականացնում են սոցիալ-տնտեսական, իրավական և քաղաքացիական ինստիտուտները՝ իշխանական պարտականությունները բաշխելու համար),
- կարգավորող (նորմերի և օրենքների միջոցով ընդհանուր կանոնների հաստատում և սուբյեկտների վարքի կարգավորում),
- նպատակադրող (սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հեռանկարային ուղղությունների ընտրություն և մշակում),
- գործառական (պետության ողջ տնտեսությունը պահպանելուն ուղղված գործողությունների մշակում և կատարում),
- գաղափարական (ազգային գաղափարախոսություն ձևավորելով՝ համախմբել հասարակությանը)<sup>3</sup>:

Վերը նշված գործառույթների համատեքստում է կանոնակարգվում նաև միգրացիայի կառավարման հիմնախնդիրը: Արտագաղթը սոցիալական երևույթ է, որը ենթադրում է մեկ կամ մի խումբ մարդ-

<sup>1</sup> Տե՛ս **Է. Քալանթարյան**, «Հանրային կառավարում» հասկացության սահմանման հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 3, Եր., 2019, էջ 73-74:

<sup>2</sup> Տե՛ս **Козбаненко В. А.** Государственное управление, том 1, 2, М., Статус, 2002, էջ 366:

<sup>3</sup> Տե՛ս **Голощанов Р. В., Пятков А. Г.** Государственное управление: учебное пособие. Хабаровск: ДВАГС, 2005, էջ 183:

կանց տեղաշարժը իրենց բնակության վայրից՝ պայմանավորված շրջակա միջավայրի, կրոնական, բնապահպանական, տնտեսական և սոցիալական (հաճախ բոլորը միասին) խնդիրներով: Գրականության մեջ հանդիպում են արտագաղթ (եմիգրացիա) և ներգաղթ (իմիգրացիա) տերմինները. մի դեպքում՝ մարդկանց տեղաշարժն է՝ կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ, իսկ մյուս դեպքում՝ որևէ երկրից տվյալ երկիր գաղթելը (ներգաղթելը)<sup>4</sup>: Այն երբեմն անվանում են Սփյուռք: Վերջին 25 տարիներին միգրացիայի հիմնախնդիրն աշխարհում ավելի մեծ չափերի է հասել, ինչը պայմանավորված է սոցիալական, քաղաքական, ռասսայական, ռազմական, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամերով: Միգրանտների հիմնական ուղղությունը եվրոպական և արևմտյան զարգացած երկրներն են: Այս երկրների շարքում Իտալիան առավել ռիսկային պետություններից է, որը կառավարման իր ընթացակարգերով երբեմն շատ դժվարությամբ կանոնակարգում է այդ գործառույթը<sup>5</sup>:

Իտալիան եղել է արտագաղթի երկիր. հաշվարկվել են, որ 1876-ից մինչև 1976 թվականը ավելի քան 24 միլիոն մարդ հեռացել է երկրից (գազաթնակետը եղել է 1913-թ.՝ ավելի քան 870,000 մեկնում)<sup>6</sup>: Վերը նշված ժամանակահատվածում ներգաղթը գրեթե բացակայում էր՝ բացառությամբ Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներից, օրինակ՝ նախկին աֆրիկյան գաղթօջախներից իտալացիների վերադարձը: Սակայն այս տեղաշարժերն աննշան էին, ուստի սոցիալական կամ մշակութային առումով ինտեգրման էական խնդիրներ չէին առաջացնում: Մասնավորապես, 1973 թ. Իտալիան առաջին անգամ ունեցավ միգրացիոն շատ աննշան դրական հաշվեկշիռ (101 մուտք յուրաքանչյուր 100 արտագաղթի համար), այս միտումը հաջորդ տարիներին շարունակվեց: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ այդ ժամանակաշրջանում երկիր էին վերադառնում հիմնականում իտալացի էմիգրանտները:

Օտարերկրացիների հոսքը դեպի Իտալիա սկսվել է միայն XX դարի յոթանասունականների վերջին, երբ Իտալիան կիրառեց «բաց դռների քաղաքականություն»: 1981 թվականին Իտալիայում արդեն հաշվառված էին 321,000 օտարերկրացիներ, որոնց մոտ մեկ երրորդը՝ «մշտական», իսկ մնացածը՝ «ժամանակավոր»: Մեկ տարի անց առաջարկվեց առանց փաստաթղթերի ներգաղթյալների կանոնակարգման առաջին ծրագիրը, սակայն 1986-ին ընդունվեց այդ մասին առաջին օրենքը<sup>7</sup>, որի նպատակն էր հստակ իրավական երաշխիքներ սահմանել

<sup>4</sup> Տե՛ս **Ն. Հարությունյան, Գ. Գեղամյան**, Նորագույն պատմություն, Եր., Զանգակ-97, 2001, էջ 155:

<sup>5</sup> Տե՛ս **Sanfilippo M.** Tematiche delle emigrazioni, in Dizionario di storia, Istituto dell'Enciclopedia Italiana, 2010, էջ 35:

<sup>6</sup> Տե՛ս Իտալիայի միգրացիոն հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրություն՝ [https://www.cser.it/wp-content/uploads/2021/04/Studi-Emigrazione\\_1989\\_93\\_compressed.pdf](https://www.cser.it/wp-content/uploads/2021/04/Studi-Emigrazione_1989_93_compressed.pdf)

<sup>7</sup> Տե՛ս Իտալիայի աշխատանքային ներգաղթյալների և նրանց ընտանիքների հիմ-

ԵՄ անդամ չհանդիսացող պետություններից արտագաղթած անձանց համար՝ հավասարեցնելով վերջիններիս իրավունքները: 1991 թվականին օտարերկրացիների թիվը կրկնապատկվեց՝ հասնելով 625,000-ի: 1993 թվականին Իտալիայի բնակչությունն աճում էր շնորհիվ ներգաղթյալների: Այս ամենը կառավարելու համար պետությունը ընդունեց համապատասխան օրենքներ. «Թուրքո-Նապոլիտանո օրենքը»<sup>8</sup> առաջիններից էր (1998 թ.), որը միտված էր խափանելու մուտքի գաղտնի հոսքերը: Այդ օրենքի ընդունմամբ առաջին անգամ Իտալիայում թուլալարվեց կառուցել ժամանակավոր կեցության կենտրոններ այն օտարերկրացիների համար, որոնք «ենթարկվում են արտաքսման հրամանին»: 2002 թ. այս օրենքը լրամշակվեց<sup>9</sup>, որը, ի թիվս այլ նորմերի, նախատեսում է անօրինական ներգաղթյալների անհապաղ արտաքսման հնարավորությունը հասարակական ճնշման միջոցով: Ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների՝ Իտալիայում կային 1,334,889 օտարերկրացիներ, որոնց մեջ ամենաշատը մարոկկացիներն (180,103) ու ալբանացիներն (173,064) էին<sup>10</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, ներգաղթն Իտալիա զգալի չափերի հասավ հատկապես 1970-ական թթ., այնուհետև՝ երրորդ հազարամյակի սկզբին, այն դարձավ իտալական ժողովրդագրությանը բնորոշ երեվոյթ: Դիտարկելով օրինական ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացիների ծագման երկրների ցանկը՝ կարելի է տեսնել, որ վերջին տարիներին Արևելյան Եվրոպայից նկատվում է հոսքերի զգալի աճ, որը գերազանցել է Հյուսիսային Աֆրիկայի երկրներին, որտեղից մինչև 1990-ական թվականները մեծ էր ներհոսքը<sup>11</sup>: Սա հիմնականում պայմանավորված էր Իտալիայում ռումինական համայնքի արագ աճով, որը 2007 թ. կրկնապատկվել էր՝ հասնելով 625,000-ի: Սա պայմանավորված էր Ռումինիայի՝ ԵՄ-ին անդամակցությամբ: Այսօր այդ թվերը բազմապատկվել են: Ըստ Eurostat-ի 2017 թվականի հունվարի 1-ի տվյալների՝ Իտալիան ԵՄ չորրորդ երկիրն էր՝ 6.1 միլիոն ներգաղթյալ բնակչության թվաքանակով, Գերմանիայից (12.1 միլիոն), Միացյալ Թագավոր-

նախնդիրների վերաբերյալ 1986 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 943 օրենքը, [https://www.edizioneuropee.i-t/LAW/HTML-/0/zn10\\_03\\_042-.html](https://www.edizioneuropee.i-t/LAW/HTML-/0/zn10_03_042-.html)

<sup>8</sup> Իտալիայի Հանրապետության ներգաղթի հարցի վերաբերյալ 1998 թ. մարտի 6-ի N 40 օրենքը, <https://www.parlamento.it/parlam/leggi/980401.htm>

<sup>9</sup> Այն միտված է կարգավորելու Իտալիայում ներգաղթը և ի պատիվ առաջին ստորագրողների՝ Ջանֆրանկո Ֆինիի և Ումբերտո Բոսսիի, որոնք Բեռլինյան երկրորդ կառավարությունում զբաղեցնում էին Խորհրդի փոխնախագահի պաշտոնները, կոչվեց Բոսսի-Ֆինի օրենք, [https://documenti.camera.it/\\_dati/leg17/lavori/documentiparlamentari/indicecesti/022bis/021/00000002.pdf](https://documenti.camera.it/_dati/leg17/lavori/documentiparlamentari/indicecesti/022bis/021/00000002.pdf)

<sup>10</sup> Տե՛ս Իտալիայում բնակչության 14-րդ մարդահամար. ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացիներ (2001 թ. տվյալներ), <https://www.regione.toscana.it/documents/10180/5992297/infbreve38.pdf/9db82253-1da5-4568-878d-d77ab0e94193>

<sup>11</sup> Տե՛ս Իտալիայի միգրացիայի վիճակագրական բառարան, <http://www.treccani.it/vocabolario/-migrazione/>

րությունից (9.3 միլիոն) և Ֆրանսիայից (8.2 միլիոն) հետո<sup>12</sup>: 2020 թ. Ազգային ժողովրդագրական վիճակագրության համաձայն՝ Իտալիայում օրինական կերպով բնակվում էին 5,171,894 օտարերկրյա քաղաքացիներ, ինչը հավասար է ընդհանուր բնակչության 8.45%-ին, որը (+0.87%) -ով ավելի է նախորդ տարվա համեմատ:

Օտարերկրյա քաղաքացիների բաշխվածությունը Իտալիայի տարածքում խիստ անհավասար է. նրանց 34.1%-ը բնակվում է հյուսիս-արևմուտքում, 24.5%-ը՝ հյուսիս-արևելքում, 25.4%-ը՝ կենտրոնում, 15%-ը՝ հարավում և կղզիներում: Նկատվում է նաև մեծ անհավասարություն քաղաքների և գյուղական շրջանների միջև:

*Աղյուսակ*

**Իտալիայում իտալացիների և ներգաղթյալ քաղաքացիները թիվը 2022 թ. դրությամբ**

| Նահանգներ                   | Ներգաղթյալներ    | Իտալացիներ        | Ընդհանուր         |
|-----------------------------|------------------|-------------------|-------------------|
| Լոմբարդիա                   | 1,193,910        | 8,771,136         | 9,965,046         |
| Լացիո                       | 643,092          | 5,072,098         | 5,715,190         |
| Կամպանիա                    | 252,437          | 5,338,244         | 5,590,681         |
| Վենետո                      | 507,601          | 4,347,032         | 4,854,633         |
| Սիցիլիա                     | 189,388          | 4,612,080         | 4,801,468         |
| Էմիլիա-Ռոմանիա              | 566,687          | 3,865,129         | 4,431,816         |
| Պիեմոնտե                    | 415,637          | 3,836,642         | 4,252,279         |
| Պուլիա                      | 139,750          | 3,772,416         | 3,912,166         |
| Տոսկանա                     | 424,215          | 3,252,070         | 3,676,285         |
| Կալաբրիա                    | 93,845           | 1,750,741         | 1,844,586         |
| Սարդենիա                    | 49,552           | 1,529,629         | 1,579,181         |
| Լիգուրիա                    | 151,166          | 1,356,272         | 1,507,438         |
| Մարքե                       | 127,606          | 1,362,183         | 1,489,789         |
| Աբրուձձո                    | 82,338           | 1,191,322         | 1,273,660         |
| Ֆրուլի-Վենեցիա<br>Ջիուլիա   | 116,624          | 1,080,671         | 1,197,295         |
| Ումբրիա                     | 91,658           | 767,914           | 859,572           |
| Տրենտոյի<br>ինքնավար նահանգ | 48,726           | 493,432           | 542,158           |
| Բասիլիկատա                  | 22,863           | 517,136           | 539,999           |
| Բոլջանո<br>ինքնավար նահանգ  | 56,891           | 478,883           | 535,774           |
| Ռեջիո Էմիլիա                | 66,250           | 457,943           | 524,193           |
| Մոլիզե                      | 11,514           | 279,255           | 290,769           |
| Վալե դ' Աոստա               | 16,338           | 230,336           | 246,674           |
| <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>            | <b>5,268,088</b> | <b>54,362,564</b> | <b>59,630,652</b> |

<sup>12</sup> Տե՛ս Եվրոստատի պաշտոնական կայքէջ, [https://ec.europa.eu/eurostat/web/products-datasets/-/migr\\_pop3ctb](https://ec.europa.eu/eurostat/web/products-datasets/-/migr_pop3ctb)

2010 թվականին Իտալիայում բնակվող օտարերկրացիները զգալիորեն ավելի երիտասարդ էին, քան բնիկները. նրանց միջին տարիքը 32.5 էր՝ տեղացիների 44.3-ի համեմատ: Իտալիան ԵՄ երկրների շարքում չորրորդ ամենաերիտասարդ օտարերկրյա համայնք ունեցող պետությունն է: 2010 թվականին Իտալիայում ծնված օտարերկրացիները կազմում էին ընդհանուր ծնունդների 14%-ը, ինչը շատ բարձր ցուցանիշ է<sup>13</sup>:

Շովային սահմանները ապօրինի հատելու միջոցով իտալական ափերին վայրէջք են կատարում և՛ զինված հակամարտություններից կամ հետապնդումներից փախած, և՛ ապաստանի իրավունք հայցող, և՛ տնտեսական միգրանտները՝ ավելի լավ աշխատանքային պայմաններ փնտրելու նպատակով: Վերջին տարիներին միգրանտների հոսքը հիմնականում Հյուսիսային Աֆրիկայի երկրներից է՝ Լիբիա, Թունիս ու Եգիպտոս, նաև՝ Թուրքիայից, Հունաստանից, Ուկրաինայից և Միքիայից<sup>14</sup>:

Այս ամենը հիմք է տալիս ասելու, որ Իտալիայում ներգաղթը մեծ չափերի է հասել և պետական կառավարման համար լրջագույն խոչընդոտներ է հարուցում: Պետք է հստակ քաղաքականություն մշակվի, կոնկրետ օրենսդրական կարգավորումներով լուծումներ առաջարկվեն. մասնավորապես՝ օրինական միգրացիոն քաղաքականության ուղիների կատարելագործմամբ օրենսդրական այնպիսի քաղաքականություն մշակել, որը հնարավորություն կտա ռեսուրսները ճիշտ կառավարելու և հնարավոր ռիսկերից խուսափելու: Իտալիայում արդյունավետ միգրացիոն քաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ են մի քանի կարևոր գործողություններ.

- Իտալիայում օրինական ներգաղթյալները նույնիսկ պահանջված են մի քանի ոլորտներում. կան որոշ աշխատանքներ (ծերերի խնամք, փողոցների մաքրություն, աղբահանություն, գյուղատնտեսական աշխատանքներ և այլն), որ իտալացիները չեն անում, և այդ բացը լրացնելու լավագույն լուծումը ներգաղթյալներին ներառելն է: Մակայն դա պետք է լինի ըստ նախապես մշակված առաջարկ և պահանջարկ հարաբերակցության. օրինակ՝ 2017 թ. նախատեսված էր ընդամենը 17,000 սեզոնային աշխատողների մուտքը Իտալիա, մինչդեռ երկրում շատ էին գործազուրկ երիտասարդ աֆրիկացիները:

- Ընդհանուր կանոններին ենթարկվելը պետք է դառնա պարտադիր պայման երկիր մուտք գործողների համար: Իսկ կարգապահ միգրանտներին պետք է խրախուսել՝ տրամադրելով նրանց առավելություններ (կեցության, աշխատանքի իրավունքի և սոցիալական այլ երաշխիքներ):

- Մարդկանց ինտեգրելու նպատակով աշխատանքների հստակ կազմակերպում. ավելի լավ և համակարգված գործողություններ հնա-

<sup>13</sup> Տե՛ս ԻՄՍՍՍ կազմակերպության վերլուծությունը Իտալիայում բնակվող օտարերկրյա բնակչության վերաբերյալ, <https://www.istat.it/it/iscriviti-a-istatnewsletter>, <https://www.istat.it/it/iscriviti-a-istatnewsletter>

<sup>14</sup> Տե՛ս Իտալիա ներգաղթի մասին վերլուծությունը, <https://www.ismu.org/dati-sulle-migrazioni/>

րավոր են հստակ մշակված կանոնակարգերի առկայությամբ: Պետք է հաշվի առնել, որ երբեմն աշխատավայրերում տեղացիների և օտարերկրացիների միջև կարող են տարաբնույթ խնդիրներ առաջանալ՝ պայմանավորված սոցիալական-մշակութային ավանդույթների տարբերությամբ: Փոխըմբռնումը հեշտացնելու համար աշխատավայրում պետք է ավելի ընդգծվի *մշակութային միջնորդների* դերը, որոնք հնարավորություն կստեղծեն բարելավելու միջմշակութային ինտեգրումը և հետևաբար նաև բարոյահոգեբանական միջավայրը:

- Եվրոպա աշխարհամասի վերաբերյալ առասպելական պատկերացումների վերացում. շատ ներգաղթյալներ (հատկապես աֆրիկյան պետություններից) այն համարում են անսահման հնարավորությունների վայր: Միգրանտների ուղարկած կամ սոցիալական ցանցերում տեղադրված պատմություններն ու լուսանկարներն օգնում են ամրապնդել այս առասպելը: Դա պետք է փոխարինել մեկ այլ առասպելով՝ հաջողություն սեփական երկրում: Իտալիայի լավագույն դաշնակիցները այս հարցում հենց սփյուռքի միգրանտներն են, նրանք, ովքեր տարիների ընթացքում արդեն ինտեգրվել են ընդունող երկրներում:

**ЭДГАР КАЛАНТАРЯН – Основы итальянской миграционной политики.** – В последние годы проблема миграции в мире достигла больших размеров, что вызвано социальными, политическими, расовыми, военными, а также международными экономическими кризисами. Основное направление мигрантов — развитые страны Запада, из которых Италия — одна из самых рискованных стран.

Италия, до 1970-х годов прошлого века была страной эмиграции. Противоположный поток также был результатом проводимой в стране «политики открытых дверей». Сегодня управление всем этим процессом является серьезным вызовом для государства, и способом избежать его будет пересмотр политики в этой сфере и предложение комплексных решений с конкретными правовыми нормами.

**Ключевые слова:** миграционная политика, эмиграция, иммиграция, управленческие процедуры, законодательные нормы, эффективность государственного управления, законность, нелегальная иммиграция

**EDGAR KALANTARYAN – Basics of Italian Migration Policy.** – In recent years, the problem of migration in the world has reached greater dimensions, which is caused by social, political, racial, military, as well as international economic crises. The main destination of migrants is the developed countries of the West, among which Italy is one of the most risky countries.

Italy, until the 1970s of the previous century was a country of emigration. The opposite flow was also the result of the "open door policy" implemented in the country. Today, the management of that entire process is a serious challenge for the state, and the way to avoid it will be to revise the policy in that area and offer comprehensive solutions with specific legal regulations.

**Key words:** migration policy, emigration, immigration, management procedures, legislative regulations, efficiency of public administration, legality, illegal immigration

## **ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

### **ՆԱՐԻՆԵ ԱՍՐՅԱՆ**

Արդյունավետ կառավարման հայեցակարգի հիմնական դրույթների քննարկումն օրակարգային դարձավ հատկապես 20-րդ դ. վերջից, ինչը համաշխարհային պրակտիկայում համընկավ ԽՍՀՄ փլուզման և նորանկախ պետությունների ձևավորման հետ: Ստեղծված պայմաններում նորանկախ երկրները հարկադրված էին բարեփոխելու իրենց կառավարման համակարգերը և գնալու զարգացման հետագծով՝ համապատասխանելով զարգացած պետությունների կողմից սահմանված չափորոշիչներին, ինչը տվյալ ժամանակահատվածում բավականին խնդրահարույց էր և դժվար իրագործելի:

Սույն հոդվածում վերլուծվում են արդյունավետ կառավարման հայեցակարգի կառուցվածքային և բովանդակային ասպեկտները՝ հատկապես հետխորհրդային տարածքում քննարկվող կոնցեպտի ընկալման և փոխակերպման առանձնահատկությունները: Մասնավորապես քննարկվում է, թե որոնք են հետխորհրդային տարածքում արդյունավետ կառավարման հայեցակարգի բաղկացուցիչների ավանդական ընկալման վերափոխման դրդապատճառները, հետևանքները, ինչպես նաև այդ միտումներում միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, Համաշխարհային բանկ և այլն) դերակատարությունը: Որպես հիմնական հարցադրում է առաջ քաշվում հետևյալը՝ փոխառելով արդյունավետ կառավարման արևմտյան չափորոշիչները, թե՞ մշակել և ներդնել սեփական հայեցակարգը՝ հաշվի առնելով պատմամշակութային ժառանգության և հասարակական զարգացման առանձնահատկությունները: Հոդվածում նաև բերված են կանխատեսումներ առ այն, թե ինչ հիմնական տարրեր պետք է լրացնելու գան արդյունավետ կառավարման հայեցակարգին, և որոնք են հետխորհրդային տարածքում վերջիններիս կիրարկման հեռանկարային հնարավորությունները:

**Բանալի բառեր** - *արդյունավետ կառավարում, կառավարման արդյունավետության ցուցիչներ, հետխորհրդային տարածք, զարգացող և անցումային պետություն, կառավարման արդյունավետություն, թափանցիկություն, բարեփոխում, աճ և զարգացում*

### **Ներածություն**

Սկսած 1990-ական թթ.՝ արդյունավետ կառավարման հայեցակարգը կենտրոնական տեղ է զբաղեցրել զարգացման ռազմավարական մտածողության և պրակտիկայի շրջանակներում: Սակայն արդ-



յունավետ կառավարմանը վերաբերող ուսումնասիրությունները սկսել են լայն թափ առնել հատկապես 2000-ական թթ., քանի որ ոլորտի տեսաբանները և պրակտիկները հանգել էին այն համոզման, որ արդյունավետ կառավարումը հասարակության տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման առանցքային նախապայմանն է:

«Արդյունավետ կառավարում» եզրույթը միջազգային զարգացման օրակարգում հայտնվեց մի քանի գործոնների համակցության արդյունքում, մասնավորապես՝ Սառը պատերազմի ավարտը և այն բանի գիտակցումը, որ շուկայի կառուցվածքային բարեփոխումների քաղաքականությունն անարդյունավետ էր, քանի որ չտվեց ցանկալի արդյունքներ և չկարողացավ լուծել ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ երկրների առջև ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրները: Սակայն կառուցվածքային վերափոխման ծրագրերի ոչ պատշաճ իրականացումը, Սառը պատերազմի հանգուցալուծումը և նորահայտ պետությունների ֆինանսավորումը, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության տնտեսության ֆինանսավորմանն առնչվող քաղաքական խնդիրները ևս նպաստեցին արդյունավետ կառավարման գաղափարի որակապես նոր շեշտադրմանը:

Ուշագրավ է, որ քննարկվող հայեցակարգը օրակարգային էր դարձել հատկապես միջազգային կազմակերպությունների համար: Վերջիններս առաջ էին քաշել մրցակցային բազմաթիվ տեսակետներ այն մասին, թե ինչ պետք է նշանակի «արդյունավետ կառավարում» եզրույթը: Այսպես, ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանը նշում էր, որ «արդյունավետ կառավարումը թերևս աղքատության հաղթահարման և զարգացմանը միտված անկյունաքարային գործոններից մեկն է»<sup>1</sup>, իսկ ՄԱԿ-ի սոցիալական հարցերով հանձնաժողովի բնորոշմամբ՝ «արդյունավետ կառավարումը մասնակցային, փոխզիջման կողմնորոշմամբ, անաչառ, ներառական և օրենքի իշխանությունը ճանաչող կառավարման ձև է: Այն պետք է նվազագույնի հասցնի կոռուպցիան և ներհասարակական այլ արատավոր երևույթները, լսելի դարձնի փոքրամասնությունների և հասարակության առավել խոցելի խավերի ձայնը և միտված լինի արձագանքելու հասարակության ներկա և ապագա պահանջմունքներին»<sup>2</sup>: Միննույն ժամանակ արդյունավետ կառավարումը Հազարամյակի զարգացման նպատակներից է (ՀԶՆ)՝ աղքատության նվազեցման և կայուն զարգացման օրակարգի ձևավորման տեսքով, որի շուրջ համաշխարհային առաջնորդները համաձայնության են եկել դեռևս 2000 թ. սեպտեմբերին Հազարամյակի գագաթնաժողովում<sup>3</sup>:

<sup>1</sup> **Annan, K.**, United Nations Annual Report of the Secretary-General on the Work of the Organization, 27 August, 1998, <http://www.un.org/Docs/SG/Report98/ch2.htm>

<sup>2</sup> United Nations Social Commission for Asia and the Pacific (n.d.). «What is Good Governance?», <http://www.unescap.org/pdd/prs/projectactivities/ongoing/gg/governance.asp>

<sup>3</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիր, Եր., ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, 2000, էջ 11-14, [https://unic.un.org/aroundworld/unics/common/documents/publications/millenniumdeclaration/armenia\\_millennium\\_declaration\\_armenian.pdf](https://unic.un.org/aroundworld/unics/common/documents/publications/millenniumdeclaration/armenia_millennium_declaration_armenian.pdf)

ՄԱԿ-ի համանմանությամբ՝ Եվրոպական հանձնաժողովը և վերջինիս անդամ պետություններից շատերը գտնում էին, որ արդյունավետ կառավարման հայեցակարգը պետք է առնչվի այնպիսի ինստիտուտների, ինչպիսիք են պետական կառավարումը, քաղաքական համակարգը, մարդու իրավունքները, քաղաքացիական հասարակությունը և այլն: Այսինքն՝ արդյունավետ կառավարումը կարելի է դիտարկել ոչ միայն որպես նպատակ (Objective), այլ նաև որպես մի շարք այլ կողմնակի արդյունքների (Outcomes), մասնավորապես աճի և զարգացման հասնելու միջոց: Դեռևս 2011 թ. ԵՄ զարգացման քաղաքականության «Փոփոխությունների օրակարգում» նշվում էր, որ «արդյունավետ կառավարումը իր քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական ասպեկտներով կենսական նշանակություն ունի կայուն և ներառական զարգացման համար»<sup>4</sup>:

### **Բացահայտելով արդյունավետ կառավարումը**

«Արդյունավետ կառավարում» եզրույթի իմաստային անորոշությունն ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրում ենք հայեցակարգի ձևավորման և զարգացման պատմական էվոլյուցիան: Այստեղ անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ ժամանակաշրջանները:

- *1980-ական թթ. սկիզբ*, երբ զարգացող երկրների և միջազգային կազմակերպությունների մեծ մասի մտահոգությունն էր արագացնել զարգացող երկրներում աճը խթանող ոլորտների ստեղծումը: Այնուամենայնիվ նրանք չկարողացան այս ռազմավարություններն արդյունավետ իրականացնելու համար ապահովել կառավարման անհրաժեշտ հմտությունների զարգացումը<sup>5</sup>:

- Չարգացման քաղաքականության *երկրորդ փուլը սկսվում է մոտավորապես 1980-ականների կեսերից*, երբ կառուցվածքային ճշգրտումները բացահայտեցին, որ զարգացման նախորդ ռազմավարությունները բազմաթիվ զարգացող երկրներում հանգեցրել էին բյուջետային լուրջ ճգնաժամերի. օրենքի իշխանության բացակայությունը, ինստիտուցիոնալ թույլ համակարգը, կոռուպցիան և այլ խնդիրներ դարձել էին մտահոգության առարկա, սակայն ակնկալվում էր, որ ազատականացումը կլուծի այս խնդիրները: Չոն Թոյը այս ամենը որակեց որպես «զարգացման հակահեղափոխություն» («Development Counterrevolution»): Քաղաքականության այս փուլի արդյունքները նույնիսկ ավելի հիասթափեցնող էին՝ առանց զարգացող պետությունների համար նկատելի բարելավումների ինչպես աճի հեռանկարների, այնպես էլ կառավարման պայմանների տեսանկյունից<sup>6</sup>:

- *1980-ական թթ. վերջ-1990-ական թթ. սկիզբ*, երբ մարտահրա-

<sup>4</sup> European Commission, Development and Cooperation – EuropeAid (n.d.) ‘Human Rights and Democracy’. [http://ec.europa.eu/europeaid/what/humanrights/index\\_en.htm](http://ec.europa.eu/europeaid/what/humanrights/index_en.htm)

<sup>5</sup> Տե՛ս **Matthews, R.C.O.**, The Economics of Institutions and the Sources of Growth, Economic Journal 96 (384), 1986, էջ 903-918:

<sup>6</sup> Տե՛ս **Toye, J.**, Dilemmas of Development: Reflections on the Counter-Revolution in Development Theory and Policy. Oxford: Basil Blackwell, 1987:

վեր նետվեց զարգացման հարցում պետության դերին՝ հղում կատարելով նախկին Խորհրդային Միության շուկայական վերակառուցումների փորձառությանը:

• *1990-ական թթ. հետո*, որին բնորոշ էր տնտեսության ուսումնասիրության ինստիտուցիոնալ նոր մոտեցումների գերակայությունը<sup>7</sup>:

Արդյունավետ կառավարման հայեցակարգը սկզբնապես տեղավորվում էր դոնորական դիսկուրսի շրջանակներում, այսինքն՝ որպես զարգացած պետությունների կողմից զարգացող երկրներին օգնելու և վարկավորելու երաշխավորություն: Միջազգային կազմակերպություններից Համաշխարհային բանկն էր առաջին խոշոր դոնորական ինստիտուտը, որն ընդունեց արդյունավետ կառավարման հայեցակարգը՝ որպես զարգացող երկրներին վարկավորելու երաշխիք: Լինելով գլոբալ զարգացման ռազմավարությունը կյանքի կոչող կառույցներից մեկը՝ Համաշխարհային բանկը միշտ ունեցել է արդյունավետ կառավարման գաղափարի սեփական տեսլականը, որը կարելի է քննարկել երեք ասպեկտներով<sup>8</sup>.

1. Կազմակերպությունը մեծ ուշադրություն է դարձնում զարգացող երկրներին ներսից վերափոխելու անհրաժեշտությանը: Արդյունավետ կառավարման օրակարգը անվերապահորեն ընդունում է, որ դոնորներից ստացվող օգնությունը չի կարող արդյունավետ լինել բարենպաստ քաղաքական միջավայրի բացակայության դեպքում:

2. Արդյունավետ կառավարման ներկայիս օրակարգը սահմանում է պետության և ինստիտուտների թեև սահմանափակ, սակայն դրական դերը դոնորներից տրվող օժանդակությունը նախատեսված էր զարգացող երկրների տնտեսություններում պետական միջամտությունը նվազեցնելու համար:

3. Արդյունավետ կառավարման օրակարգը Համաշխարհային բանկին տարել է նախկինում չբացահայտված տարածք, որտեղ մասնակցության, կոռուպցիայի խնդիրներ, և ժողովրդավարական բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն կա:

Իսկապես, արդյունավետ կառավարումը անցումային շրջանի պետությունների համար դարձավ դոնոր երկրներից օգնություն ակնկալելու և ստանալու նախապայման. անհերքելի փաստ է, որ կառավարման վատ համակարգեր ունեցող երկրներում կոռումպացված բյուրոկրատները և քաղաքական գործիչները խոչընդոտում են զարգացման

---

<sup>7</sup> Տե՛ս **Grindle M. S.**, Good Governance: The Inflation of an Idea, Center for International Development Working Paper No. 202 (Harvard University, October 2010); **Levy B.**, Working with the Grain: Integrating Governance and Growth in Development Strategies, Oxford University Press, 2014, էջ 3-5:

<sup>8</sup> Տե՛ս Good Governance and the World Bank, Based on research by Elizabeth Drake, **Amreen Malik**, **Ying Xu**, **Ioanna Kotsioni**, **Rasha El-Habashy**, and **Vivek Misra**, LSE Masters students 2001-2 Edited by Vivien Collingwood, Nuffield College, University of Oxford, [https://www.ucl.ac.uk/dpu-projects/drivers\\_urb\\_change/urb\\_economy/pdf\\_glob\\_SAP/BWP\\_Governance\\_World%20Bank.pdf](https://www.ucl.ac.uk/dpu-projects/drivers_urb_change/urb_economy/pdf_glob_SAP/BWP_Governance_World%20Bank.pdf), էջ 4:

ուղղությամբ ջանքերի ներդրումը և գործարկումը: Մյուս կողմից հարկ ենք համարում նշել, որ սկզբում հետխորհրդային տարածքի երկրներում արդյունավետ կառավարման հայեցակարգի տեսածիրը բավականին ապաքաղաքական էր և ընկալվում էր որպես պետական հատվածի կառավարման որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ամբողջություն: Այսինքն, ըստ Համաշխարհային բանկի, անցումային երկրների համար արդյունավետ կառավարման հայեցակարգը պետք է դառնա պետությունների զարգացմանը միտված բաց քաղաքականություն՝ պրոֆեսիոնալ կառավարմամբ և հանրային բարիքների որակի բարձրացմանն ուղղված գործունեությամբ, և ունենա օրենսդրական կայացած համակարգ ու քաղաքացիական գիտակից հասարակություն:

### **Արդյունավետ կառավարումը հետխորհրդային տարածքում**

Մույն համատեքստում քննարկելով հետխորհրդային պետությունների ներսում արդյունավետ կառավարման հայեցակարգի իրականացման գործընթացը՝ պետք է նշել, որ այստեղ «արդյունավետ կառավարում» (Good Governance) գաղափարին փոխարինելու է գալիս Մերիլին Գրինդլի առաջ քաշած «բավականին լավ կառավարում» (Good Enough Governance) թեզը<sup>9</sup>: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նախկինում վարչահրամայական քաղաքական համակարգ ունեցող անցումային պետությունները չէին կարող միանգամից որդեգրել և կյանքի կոչել արդյունավետ կառավարման բոլոր սկզբունքները: Իսկապես, անցումային երկրների համար զարգացած պետությունների սահմանած չափորոշիչներն անիրագործելի էին, և ավելի քան ակնհայտ էր, որ թե՛ քաղաքական-տնտեսական, թե՛ կառուցվածքային-ինստիտուցիոնալ, թե՛ արժեքաբովանդակային փոփոխությունները նման երկրներում պետք է իրականացվեին աստիճանաբար՝ նրանց համար սահմանելով նվազագույն բավարար այն պահանջները, որոնք անհրաժեշտ էին դոնոր պետություններից օժանդակություն ստանալու համար:

Հաշվի առնելով արդյունավետ կառավարման հայեցակարգի անընդհատ փոփոխվող և լրացվող բնութագրերը՝ Մ. Գրինդլը միջազգային դոնորներին առաջարկեց իրենց ուշադրությունը սևեռել անցումային երկրներում իրականացվող կառավարչական միջամտությունների և համատեքստին, և բովանդակությանը: Նախ ընդլայնվեցին կառավարչական համատեքստի վերաբերյալ գաղափարները՝ պետությունները դասակարգելով ըստ տիպաբանության (փլուզված և ձախողված պետություններ, նվազագույն չափով ինստիտուցիոնալացված պետություններ, ինստիտուցիոնալացված ոչ մրցունակ պետություններ և

---

<sup>9</sup> St' u Grindle, M. S., Good Enough Governance: Poverty Reduction and Reform in Developing Countries, Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions 17 (4), 2004, էջ 525– 528:

ինստիտուցիոնալացված մրցունակ պետություններ)<sup>10</sup>: Այս դասակարգումը թույլ կտար գնահատել, թե որքանով է կայուն պետությունների տեսլականը արդյունավետ կառավարման ապահովմանը միտված միջամտության նկատմամբ: Ինչ վերաբերում է միջամտությունների բովանդակությանը, ապա այս մասով, ըստ Մ. Գրինդլի, միջազգային հովանավորները պետք է լինեն ավելի ընտրողական և կենտրոնանան թեկուզ քիչ, սակայն ավելի իրագործելի փոփոխությունների վրա. այլ կերպ ասած՝ միջամտությունների բովանդակությունը պետք է համապատասխանի թիրախային պետության(ների) ներուժին:

Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, պետք է նշել, որ, ըստ Մ. Գրինդլի, արդյունավետ կառավարման հայեցակարգը վատ կողմնորոշիչ է պետական քաղաքականության նախագծման և կյանքի կոչման առումով, քանի որ այն առանձնահատուկ բնույթ ունի, բավականին բազմաբովանդակ է և հարմարեցված չէ պատմական զարգացման և հաջորդականության չափորոշիչներին<sup>11</sup>:

Մ. Էնդրյուսի կարծիքով արդյունավետ կառավարման գերակշռող մոդելները «նման են այն բանին, որ զարգացող երկրներին պարտադրվի, թե զարգացած դառնալու ճանապարհը հենց իրենց մատնանշած ուղին և ձևն են»<sup>12</sup>. այս առումով կառավարման «միակողմանի լավագույն մոդելը» անտեսում է երկրների ինստիտուցիոնալ տարբերությունները:

Բ. Լևին ևս խոսում էր «կառավարման բարեփոխումներին համապատասխան մոտեցման» դիրքերից. նա երկրները խմբավորեց ըստ հատուկ կատեգորիաների՝ ընդհանուր բնութագրերով (օրենքի իշխող գերակայությամբ, անձնավորված մրցակցային և օրենքի մրցակցային գերակայությամբ): Այս տիպաբանության կիրառումը թույլ կտա իրականացնել «նմանների հետ նմանների ավելի արդյունավետ համեմատություն և դրանով իսկ հասնել կառավարման բարեփոխումների ավելի նպատակաուղղված և ավելի արդյունավետ տարբերակների բացահայտմանը»<sup>13</sup>: Բացի այդ, տեսաբանը կոչ էր անում ընդունել իրականացվելիք փոփոխությունների սահմանափակ բնույթը և սկսել ավելի փոքրածավալ բարեփոխումներից («Small-G» governance reforms), որոնք ներառում են, մասնավորապես, քաղաքական տեսանկյունից իրագործելի մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավումը. ավելի լայնածավալ բարեփոխումները («Big-G» governance reforms) միտված են ստեղծելու հաշվետվողականության և պատաս-

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 530-538:

<sup>11</sup> Տե՛ս **Grindle M. S.**, Good governance, R.I.P.: A critique and an alternative. Governance 30(1), 2017, էջ 17-22:

<sup>12</sup> **Andrews M.**, Good Governance Scripts: Will Compliance Improve Form or Functionality? in Jomo Kwame Sundaram and Anis Chowdhury, eds., Is Good Governance Good for Development? United Nations Series on Development (London: Bloomsbury Academic, 2012):

<sup>13</sup> **Levy B.**, Governance reform: Getting the fit right. Public Administration and Development 35(4), PAD-15-0064.R1, 2015, էջ 238-249:

խանատվության ինստիտուտներ, որոնց իրականացման հարցում քաղաքական վերնախավն այնքան էլ չէր շտապում<sup>14</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրահանգել, որ անհրաժեշտ է հրաժարվել անցումային երկրներում արդյունավետ կառավարման հայեցակարգի ապահովման մեկ միասնական մոտեցումից, քանի որ միջազգային դոնորների՝ այս երկրներում արդյունավետ կառավարման ապահովմանն ուղղված միջամտությունների բովանդակությունը, ի վերջո, կախված կլինի պետության համատեքստային բնութագրիչներից: Մա նշանակում է, որ արդյունավետ կառավարման հայեցակարգից բխող նպատակների սահմանման և իրականացման գործընթացում հիմնական դերակատարը դեռևս մնում է ազգային պետությունը: Մասնավորապես, մի պետության ներսում, որը դեռևս փնտրում է սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովող լուծումներ, արդյունավետ կառավարումը մշտապես համարվել է զարգացման առաջնադասման կարևորագույն գործիք<sup>15</sup>:

Ինչ վերաբերում է հետխորհրդային պետություններում արդյունավետ կառավարման հայեցակարգի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, ապա պետք է նշել, որ նախկին Խորհրդային Միության երկրներում եկամուտների անհավասարության կտրուկ աճը եղել է կենտրոնացված պլանային տնտեսությունից շուկայական հարաբերությունների անցման կարևոր բնութագրիչներից մեկը: Պլանային տնտեսությունների քաղաքական-տնտեսական համակարգը ստեղծվել էր անհավասարության չափը սահմանափակելու համար, այդ պատճառով խորհրդային հասարակությունը բավականին էգալիտար էր: Մակայն կենտրոնացված պլանային տնտեսությունից շուկայականի անցումը լիովին փոխեց իրավիճակը. մասնավորեցվեց հանրային սեփականությունը, չեղարկվեց աշխատավարձերի հավասարեցման քաղաքականությունը և արձանագրվեց հանրային բարիքներից ու սոցիալական ապահովության ծառայություններից օգտվելու անհավասարությունը, ինչը, իր հերթին, 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին հանգեցրեց անցումային երկրներում հարուստների և աղքատների միջև բևեռացման խորացմանը<sup>16</sup>:

Հաշվի առնելով անհավասարության համեմատաբար ցածր մակարդակի մեկնարկային կետը՝ անհավասարության կտրուկ աճը ունեցավ «ձնագնդի էֆեկտ»: Ուստի անցումային երկրների կառավարություններն ընդունեցին բարեկեցության խթանման միջոցառումների լայն

<sup>14</sup> Տե՛ս **Levy B.**, The Case for Principled Agnosticism, Journal of Democracy 21, no. 4 (October 2010):

<sup>15</sup> Տե՛ս **Simonis, U. E.**, Defining good governance - the conceptual competition is on. (Discussion Papers / Wissenschaftszentrum Berlin für Sozialforschung, 2004-005). Berlin: Wissenschaftszentrum Berlin für Sozialforschung gGmbH. <https://nbn-resolving.org/urn:nbn:de:0168-ssaar-110379>, 2004, էջ 5-7:

<sup>16</sup> Տե՛ս **Petrova B.**, Redistribution and the Quality of Government: Evidence from Central and Eastern Europe. British Journal of Political Science, 2020, էջ 1–20. <https://doi.org/10.1017/S0007123419000085>:

շրջանակ՝ միտված հարուստների և աղքատների միջև եկամտային տարբերությունները նվազեցնելուն: Ներդրվեց և գործարկվեց աշխատաշուկայի ակտիվացման քաղաքականություն, քայլեր ձեռնարկվեցին առողջապահության, կրթության, բնակարանային և հանրային այլ ծառայությունների մատչելիությունն ու հասանելիությունը խթանող սոցիալական պաշտպանության արդյունավետ համակարգի ձևավորման համար:

1990-ական թթ.՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, անցյալի հետ կապերը հիմնովին խզելու հույս ծագեց. նորանկախ հանրապետությունները պետք է միանային ժողովրդավարական երկրների համայնքին: Մակայն այս մեծ ակնկալիքներն արդարացան միայն Բալթյան տարածաշրջանում, որտեղ երեք երկրները կատարեցին անհրաժեշտ բարեփոխումները և համախմբեցին ժողովրդավարական համակարգերը, իսկ տարածաշրջանի մնացած մասը վերադարձավ ամբողջատիրական համակարգին կամ բավարարվեց մասնակի բարեփոխումներով, որոնք ձեռնտու էին միայն հասարակության որոշակի նեղ շրջանակների: Այս երկրներում պետությունը ոչ այլ ինչ էր, քան էլիտար խմբակցությունների միջև մրցակցության թատերաբեմ, մինչդեռ խորհրդային վարչակարգը տապալած ապստամբ զանգվածները նահանջեցին իրենց նպատակներից<sup>17</sup>:

Հետխորհրդային տարածաշրջանի երկրների հանգամանքը քննարկելիս հարկ է նշել, որ մասամբ սոցիալիզմի պատմական ժառանգության հետևանքով այդ երկրները ունեն պետության կողմից հովանավորվող վերաբաշխիչ քաղաքականությանն աջակցության ավելի բարձր մակարդակ: Այսպես, Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո այս երկրներում աճեց կրթության, առողջապահության և հանրային ծառայությունների հասանելիությունը, մեղմվեցին գործազրկության ցուցանիշները, իսկ եկամտուտների տարբերությունները արհեստականորեն ճնշվեցին, ուստի այդ պետությունների բնակիչներն ավելի պակաս հանդուրժող են տնտեսական անհավասարության նկատմամբ և ընդհանրապես ակնկալում են, որ պետությունը բարեփոխումների միջոցով կմեղմի սոցիալական տարբերությունները:

Խորհրդային Միության փլուզումից հետո մի քանի պետություններում կատարվել են մասնավորեցման, ազատականացման և կայունացման մի շարք բարեփոխումներ, որոնց նպատակը շուկայական ազատ տնտեսություն և ժողովրդավարություն ձևավորելն էր: Մակայն ամեն ինչ այլ կերպ ընթացավ. բարեփոխումները, որոնք միտված էին ձևավորելու հետկոմունիստական միջին խավ, հակառակ արդյունքն են տվել՝ թուլացել է պետությունը, աղքատացել քաղաքացիների մեծամասնությունը, և առաջացել է կլեպտոկրատական փոքր վերնախավ, որն իր քաղաքական կապերը և վարչական ռեսուրսն օգտագործում է

<sup>17</sup> St u **McFaul M.**, Transitions from Postcommunism, *Journal of Democracy*, 16 (July 2005), էջ 5–19:

անձնական շահերն սպասարկելու համար:

Խորհրդային Միության ոչ բալթյան հանրապետությունների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հանգեցրեց երկու տխուր արդյունքի: Նախ՝ Բելառուսը, Ադրբեջանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը և Թուրքմենստանը պահպանեցին ստատուս քվոն կամ քիչ բարեփոխումներ իրականացրին՝ տնտեսության մեծ մասը թողնելով պետության ձեռքում: Երկրների երկրորդ խմբում՝ Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա, Հայաստան, Վրաստան, Ղազախստան և Ղրղզստան, հապճեպ և կոռումպացված մասնավորեցումը ակտիվները փոխանցեց լավ դիրքավորված պատեհապաշտների ձեռքը<sup>18</sup>:

Կիտշելտը պնդում է, որ անցումային երկրներում կոմունիզմի գաղափարը տարբեր ձևեր և դրսևորումներ է ստացել<sup>19</sup>: Այսպես, քննարկվող տարածաշրջանի տարբեր երկրներ գործարկել են ճնշումների, կլիենտելիզմի, բյուրոկրատիայի և բարեփոխումների տարբեր ձևեր: Որպես հետևանք՝ այս «ժառանգությունները» կարող էին նպաստել վերաբաշխման որոշակի յուրահատկությունների և կառավարման արդյունավետության ուրույն ցուցանիշների դրսևորմանը: Այս իմաստով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարբեր երկրների խմբեր (Խորհրդային Միության նախկին հանրապետություններ, բյուրոկրատական ավտորիտար երկրներ (Չեխիա և Սլովակիա), ազգային հարմարվողական վարչակարգեր (Հունգարիա, Լեհաստան, Սլովենիա և Մերձբալթյան հանրապետություններ), վոտչինային պետություններ (Բուլղարիա և Ռումինիա)) արձանագրում են միմյանցից զանազանվող արդյունքներ:

Սակայն, ընդհանուր առմամբ, կոմունիստական ժառանգությունը ակներևաբար ազդում է քննարկվող տարածաշրջանի երկրների բոլոր խմբերի վրա, և WGI (World Governance Indicators) ցուցանիշները վիճակագրական իմաստով նշանակալի են<sup>20</sup>: Ասվածի մասին են փաստում ստորև ներկայացվող գծապատկերում արդյունավետ կառավարման ցուցիչների արժեքները<sup>21</sup>:

<sup>18</sup> Տե՛ս **Haggard S., Kaufmann R. R.**, *The Political Economy of Democratic Transitions*, Princeton: Princeton University Press, 1995, էջ 53–55:


<sup>19</sup> Տե՛ս **Kitschelt H.**, *Post-Communist Party Systems: Competition, Representation, and Inter-Party Cooperation*. Cambridge: Cambridge University Press, 1999:

<sup>20</sup> Համաշխարհային բանկի երկարամյա հետազոտական ծրագրի հիման վրա ստեղծված՝ արդյունավետ կառավարման ցուցիչները ներառում են կառավարման վեց հիմնական չափորոշիչներ՝ ձայն և հաշվետվողականություն, քաղաքական կայունություն և բռնության բացակայություն, կառավարության արդյունավետություն, կարգավորման որակ, օրենքի իշխանություն և կոռուպցիայի վերահսկում: Սկսած 1996 թ. մինչ այժմ դրանք մատնանշում են կառավարման որակը ավելի քան 200 երկրներում՝ հիմնված մոտ 40 աղբյուրների վրա, որոնք մշակում են աշխարհի ավելի քան 30 կազմակերպություններ, և թարմացվում են ամեն տարի՝ սկսած 2002 թ.-ից: Արդյունավետ կառավարման ցուցիչները հաշվարկվում են 1-100 սանդղակով, ընդ որում՝ որքան ցուցիչը մոտ է 1-ին, այնքան ցածր է և ընդհակառակը՝ որքան մոտ 100-ին, այնքան բարձր է կառավարման արդյունավետությունը:

<sup>21</sup> Թվային տվյալները վերցվել են Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջից, <https://info.worldbank.org/>



Արդյունավետ կառավարման ցուցիչների արժեքները հետխորհրդային պետություններում, 1996թ.



Որպես հաշվարկման տարեթիվ է ընդունվել 1996 թ., քանի որ, նախ՝ արդյունավետ կառավարման ցուցիչները մշակած Համաշխարհային բանկը առաջին տվյալները տալիս է հենց այս թվականից սկսած և երկրորդ՝ նպատակ ենք ունեցել մատնանշել Խորհրդային Միության փլուզումից հետո՝ հինգ տարվա ընթացքում, նորանկախ պետությունների արդյունավետ կառավարման ցուցիչների արժեքները: Այստեղ կարևորվում են քաղաքական կայունության (Political Stability), կարգավորման որակի (Rule of Law) և կառավարման արդյունավետության (Government Effectiveness) ցուցիչները: Այս ցուցիչներով հետխորհրդային տարածքում միանշանակ առաջատարի դիրքերում են Մերձբալթյան պետությունները (Լիտվա, Լատվիա, Էստոնիա), որոնց հաջողվել է բարելավել ներպետական ինստիտուցիոնալ միջավայրը և իրականացնել կառավարման արդյունավետության ապահովմանը միտված արմատական բարեփոխումներ:

Արդյունավետ կառավարման ամենացածր ցուցանիշները Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի՝ ԽՍՀՄ նախկին պետություններինն են (Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան), թեև արդարացիորեն պետք է նշել, որ, օրինակ, բավականին բարձր են Տաջիկստանի դեպքում՝ «կարգավորման որակ», իսկ Թուրքմենստանի դեպքում՝ «քաղաքական կայունություն» ցուցիչները (համապատասխանաբար 65,98 և 61,17): Մա թերևս պայմանավորված է նշյալ երկրներում վարչապետության վարչակարգի առկայությամբ, որը մի կողմից միտված է ստատուս քվոյի պահպանմանը և թույլ չի տալիս հասարակական-քաղաքական անկայունության դրսևորումներ, իսկ մյուս կողմից՝ կառավարության՝ տնտեսության պետական ամբողջատիրական կարգավորմամբ և շուկայական տնտեսական համակարգերի վրա միանձնյա վերահսկողությամբ:

Դիտարկելով արդյունավետ կառավարման ցուցիչների արժեքները նույն ժամանակաշրջանի (1996 թ.) ՏՀԶԿ անդամ և ոչ անդամ պետությունների ցուցանիշների հետ՝ պարզ է դառնում, որ զարգացած ոչ ՏՀԶԿ անդամ պետություններում արդյունավետ կառավարման ցուցիչները որոշակիորեն զիջում են մյուսներին, սակայն ուշագրավն այն է, որ բոլոր ցուցիչների արժեքները մոտավորապես նույն հարթության վրա են<sup>22</sup>: Սա վկայում է այն մասին, որ զարգացած պետությունների ընկալմամբ՝ արդյունավետ կառավարումը ենթադրում է բաղկացուցիչների (գործադիր իշխանության գործառույթ, քաղաքական համակարգ, օրենսդրական դաշտ) համաչափ զարգացում:

### **Արդյունավետ կառավարման հայեցակարգի ապագան**

Արդյունավետ կառավարման հայեցակարգի ընկալման դինամիկ զարգացումները թույլ են տալիս ենթադրել, որ ապագայում դրան կարող են ավելանալ նոր տարրեր: Հաշվի առնելով ներկայիս պատկերացումները՝ այնուամենայնիվ առանձնացնենք արդյունավետ կառավարման հայեցակարգի առնվազն երեք հիմնական որոշիչ հատկություն.

*-Նախ, արդյունավետ կառավարումը պետք է հիմնված լինի կառավարության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի միջև փոխադարձ աջակցության և համագործակցային հարաբերությունների վրա:* Նշյալ դերակատարների միջև փոխգործակցությունը դյուրին դարձնելու համար կենսունակ մեխանիզմների ամրապնդման անհրաժեշտությունը կարևոր նշանակություն ունի: Այս համատեքստում արդյունավետ կառավարման հայեցակարգի գաղափարական ընկալման մեջ կարևոր է ներմուծել նաև մասնակցության բաղադրիչը, որը ենթադրում է խորհրդատվություն քաղաքականություն մշակելու և որոշումներ կայացնելու, ընտրությունների և ժողովրդավարական այլ գործընթացներում: Մյուս կողմից՝ մասնակցության ապահովումը կառավարություններին հնարավորություն կտա ստանալու կարևոր տեղեկատվություն անհատների, համայնքների և մասնավոր ձեռնարկությունների կարիքների և առաջնահերթությունների մասին:

*-Երկրորդ, արդյունավետ կառավարումը պետք է սահմանվի որպես հետևյալ բոլոր տարրերի կամ դրանց մի քանիսի համակցություն՝ որոշումների կայացման թափանցիկություն, հաշվետվողականություն, օրենքի գերակայություն, կանխատեսելիություն:* Հաշվետվողականությունը և օրենքի գերակայությունը պետք է պահանջեն թափանցիկություն և տեղեկատվության հասանելիության ապահովում: Անհրաժեշտ է ուժեղացնել հաշվետվողականության ինստիտուտը՝ ավելի շատ կենտրոնանալով կատարողականի վրա, ոչ թե սահմանափակվելով որոշումների կայացման պարբերականությամբ պայմանավորված հաշվետվողականությամբ:

<sup>22</sup> Թվային տվյալները վերցրել ենք Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջից, <https://info.worldbank.org/>

-*Երրորդ, աճի նվաճված ցուցանիշները դժվար է պահպանել առանց ինստիտուցիոնալ զարգացման ապահովման*, հատկապես երբ գլոբալացման արդի պայմաններում տնտեսությունների կառուցվածքն աստիճանաբար ավելի է բարդանում: Ընդլայնված աճը պահանջում է հանձնառու, վստահելի և կարողունակ կառավարություններ և շուկայական գործող համակարգեր, որոնք խթանում են բոլորին՝ թե՛ հանրային/պետական և թե՛ մասնավոր ու հասարակական հատվածներին: Այս ռազմավարությունը կարող է նաև ձևավորել սոցիալական ինտեգրման ավելի արդյունավետ համակարգ, օրինակ՝ կրթական, սոցիալական ապահովագրության և աշխատաշուկայի բարելավման միջոցով: Բացի այդ, պաշտպանելով սեփականության իրավունքները և աջակցելով օրենքի արդար կիրարկմանը բոլոր անհատների և ինստիտուտների համար՝ օրենքի ուժեղ գերակայություն ունեցող համակարգը նաև նպաստում է ներառականության աճին:

-*Չորրորդ, արդյունավետ կառավարումը հայեցակարգային իմաստով նորմատիվային է*: Դա նշանակում է, որ արդյունավետ կառավարման ամուր հիմքն ապահովող արժեքները հիմնական դերակատարների և ինստիտուտների ընդունած և սահմանած կողմնորոշիչներն են: Այս վերջին հատկությունն առանձնակի ուշադրության է արժանի. այսպես, եթե անցումային երկրներին պարտադրվեցին դոնորների սահմանած արդյունավետ կառավարման չափանիշները, ապա դա կնշանակի, որ արևմտյան վարքագծի չափանիշները պետք է ընդունելի լինեն նաև ոչ արևմտյան քաղաքական-մշակութային համատեքստում: Ոլորտի տեսաբանները նաև բարձրացրել են տարբերի միջև հնարավոր հակասությունների և փոխզիջումների խնդիրը, օրինակ՝ աճը և զարգացումը, մարդու իրավունքները, քաղաքացիական ազատությունները, շրջակա միջավայրի պաշտպանությունը և այլն:

Այսինքն՝ անցումային շրջանի երկրների պարագայում «արդյունավետ կառավարում» եզրույթի հայեցակարգային դրույթներն ընկալելու իմաստով կարևոր հասկանալի հետևել է քննարկվող դոկտրինի արևմտյան մոդելին, թե՛ փոխառել վերջինիս առանձին դրույթներ՝ հաշվի առնելով տեղական արժեքանորմատիվային համակարգը, պատմամշակութային ժառանգությունը, հասարակական զարգացման առանձնահատկությունները և այլն:

Արդյունավետ կառավարման երկու հատկանիշ՝ կառավարման արդյունավետությունը և օրենքի գերակայությունն են խթանում զարգացումը: Այստեղից կարելի է ենթադրել, որ զարգացումը պետք է ապահովվի պատասխանատու և թափանցիկ պետական կառավարմամբ, կառավարության արդյունավետ քաղաքականությամբ և օրինապահ մարմինների ու հաստատությունների նկատմամբ վստահությունը խթանելու ջանքերով: Մյուս կողմից, արդյունավետ կառավարման քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ հատկանիշների հա-

մակցումը, հատկապես կոռուպցիայի և կարգավորման որակի վերահսկումը բարելավում են հասարակության տնտեսապես խոցելի խավերի վիճակը և նվազեցնում աղքատության ծավալները:

### **Եզրակացություն**

Այսպիսով, ուսումնասիրելով արդյունավետ կառավարման ընկալման հիմնական տարրերը, կարևոր է նշել, որ հայեցակարգը պետք է ենթադրի «մարդ-հասարակություն-պետություն» հավասարակշռված հարաբերությունների կառուցում և հասարակության համար պետության կողմից հասցեական սոցիալական պատվերի ձևավորում: Ավելի լայն իմաստով՝ արդյունավետ կառավարման հայեցակարգը պետք է ընկած լինի պետության զարգացման քաղաքականության և դրա կյանքի կոչմանը միտված ռազմավարական նպատակների հոչակման հիմքում: Դռնոր պետությունները իրենց հերթին պետք է ոչ միայն կառուցողական աջակցություն ցուցաբերեն զարգացող երկրներին, այլ նաև մշտապես իրենց ուշադրության կենտրոնում պահեն կառավարման որակի և արդյունավետության ցուցանիշները:

Պետք է նշել նաև, որ արդյունավետ կառավարման հայեցակարգը քննադատողների գլխավոր առարկությունն այն է, որ զարգացած երկրների լավագույն փորձի իդեալները զարգացող երկրներում բարեփոխումներ իրականացնելու վատ ուղենիշներ են: Նման առաջարկությունների նկատմամբ բուռն թերահավատությունը, սակայն, չի բացառում կառավարման համակարգը բարելավելու, «ավելի լավ կառավարման» ուղղությամբ շարժվելու զարգացող երկրների հնարավորությունը, իսկ հասարակության կարիքները բավարարելու այլընտրանքային կառավարման մոդելների մշակումը և գործարկումը կմնան զարգացման ռազմավարության անբաժանելի մասը:

**НАРИНЕ АСРЯН – *Восприятие и трансформация концепции эффективного управления на постсоветском пространстве.*** – Обсуждение основных положений концепции эффективного управления стало актуальным особенно с конца XX века, что в мировой практике совпало с распадом СССР и образованием новых независимых государств. В создавшихся условиях новые независимые страны были вынуждены реформировать свои системы управления и идти по пути развития в соответствии со стандартами, заданными развитыми странами, что было достаточно проблематично и трудноосуществимо в данный период.

В данной статье анализируются структурно-содержательные аспекты понятия эффективного управления, особенности понимания и трансформации рассматриваемого понятия на постсоветском пространстве. В частности, обсуждается, каковы мотивы и последствия трансформации традиционного восприятия компонентов концепции эффективного управления на постсоветском пространстве, а также роль международных организаций (ООН, Всемирного банка и др.) в этих тенденциях. Главный вопрос заключается в следующем: заимствовать ли западные стандарты эффективного управления или разработать и внедрить собственную концепцию с учетом особенностей историко-культурного наследия и общественного развития. В

статье также даются прогнозы о том, какие базовые элементы следует добавить в концепцию эффективного управления и каковы перспективные возможности их реализации на постсоветском пространстве.

**Ключевые слова:** *эффективное управление, постсоветское пространство, развивающееся и переходное государство, эффективность управления, прозрачность, реформ, рост и развитие*

**NARINE ASRYAN – *Perception and Transformation of the Concept of Good Governance in the Post-Soviet Space.*** – The discussion of the main provisions of the concept of good governance became relevant, especially since the end of the XX century that in world practice coincided with the collapse of the USSR and the formation of new independent states. In the created conditions the newly independent countries were forced to reform their management systems and follow the path of development in accordance with the standards set by the developed countries, which was quite problematic and difficult to implement in this period.

This article analyzes the structural and substantive aspects of the concept of good governance, the features of understanding and transformation of the considered concept in the post-Soviet space. In particular, it is discussed what are the motives and consequences of the transformation of the traditional perception of the components of the concept of effective management in the post-Soviet space, as well as the role of international organizations (UN, World Bank, etc.) in these trends. The main question is whether to borrow the western standards of good governance or to develop and implement our own concept taking into account the features of the historical and cultural heritage and social development. The article also gives forecasts about what basic elements should be added to the concept of good governance and what are the promising opportunities for their implementation in the post-Soviet space.

**Key words:** *good governance, post-Soviet area, developing and transitional state, governance effectiveness, transparency, reform, growth and development*

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԿԱՊԻՏԱԼԻ  
ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

**ՄԵՐԳՈ ՕԳԱՆՈՎ**

Տնտեսական նոր իրողությունը, որը թելադրում է զարգացման նոր հրա-  
մայականներ, կարևորում է մտավոր սեփականության դերը: Մտավոր սեփա-  
կանությունը, դառնալով զարգացման նոր շարժիչ ուժ, կարևորում է համալ-  
սարանների և գիտահետազոտական ինստիտուտների դերը, որոնք դիտարկ-  
վում են որպես գիտելիքի ստեղծման կապիտալներ: Մտավոր սեփականությ-  
յան կառավարման անհրաժեշտությունը պայմանավորված է գլոբալացման և  
գիտելիքի տնտեսության աճով, որի նպատակը ապրանքներն ու ծառայությ-  
յունները առևտրային առումով կենսունակ արժեքի վերածելն է: Տնտեսական  
նոր իրողությունը հրամայական է դարձնում գիտելիքի ստեղծման կապիտալ-  
ների դերի մեծացումը, ինչպիսիք են նաև համալսարանները: Համալսարան-  
ները աստիճանաբար փոխարինում են հետազոտության, ուսուցման և գիտե-  
լիքի տարածման ավանդական գործառույթը նոր՝ ավելի առաջադեմ դերով, ո-  
րը նպաստում է բիզնես-ակադեմիական մոդելի ստեղծմանը: 21-րդ դարում  
հետազոտական համալսարանները գիտելիքի ստեղծման հիմնական կապի-  
տալն են, որոնք խթանում են գիտական և տեխնոլոգիական առաջընթացի  
վրա հիմնված տնտեսական զարգացումը, որում կարևոր է գիտելիքահեն գոր-  
ծոնների դերը տնտեսության առաջընթացը խթանելու համար, բարձր պատ-  
րաստված մարդկային կապիտալի ստեղծումը և հետազոտությունների  
առևտրայնացումը: Համալսարանական ինտելեկտուալ կապիտալի արդյու-  
նավետ գործարկման համար անհրաժեշտ է մեկնաբանել «ինտելեկտուալ կա-  
պիտալ» հասկացությունը, ներկայացնել առևտրայնացման ձևերն ու մեխա-  
նիզմները, որոնք կուսումնասիրենք սույն հոդվածում:

**Բանալի բառեր** - *ինտելեկտուալ կապիտալ, մտավոր սեփականություն (ՄՍ), ՄՍ  
օբյեկտների լիցենզավորում, վենչուրային հիմնադրամներ և տեխնոլոգիական պար-  
կեր, տեխնոլոգիական փոխանցման գրասենյակ, սփին-օֆֆ ձեռնարկություններ*

Համաշխարհային տնտեսության նորարարական զարգացման օբ-  
յեկտիվ միտումը, գլոբալիզացված համաշխարհային շուկայում ընկե-  
րությունների միջև աճող մրցակցությունը ակնառու են դարձնում, որ ժա-  
մանակակից տնտեսությունը կախված է մտավոր կապիտալից, որի դերը  
անշեղորդն աճում է կապիտալի այլ տեսակների համեմատությամբ<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **A. Dzhioev, L. Gurieva**, The Intellectual Capital Role in Market Growth of Compa-  
nies in Developed and Emerging Markets, Atlantis Press, Advances in Economics, Business and  
Management Research, volume 114, 2019, էջ 107:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, նորարարական բիզնես ներառյալ գիտատար արտադրանքի ոլորտում հաջողված գործունեություն, իրականացնում են այն ընկերությունները, որոնք, հիմնվելով ինտելեկտուալ գործունեության արդյունքների վրա, կարևորում են մտավոր սեփականության բացառիկ իրավունքների պաշտպանությունը և առևտրայնացումը<sup>2</sup>:

Տնտեսական նոր իրողությունը հրամայական է դարձնում գիտելիքի ստեղծման կապիտալների դերի մեծացումը, ինչպիսիք են նաև համալսարանները: 21-րդ դարում պետական և մասնավոր հետազոտական համալսարանները գիտելիքի ստեղծման հիմնական կապիտալն են, որոնք խթանում են գիտական և տեխնոլոգիական առաջընթացի վրա հիմնված տնտեսական զարգացումը: Այնուամենայնիվ կան գիտելիքահեն գործոններ, որոնք անհրաժեշտ են տնտեսության առաջընթացը խթանելու համար. դրանք են՝ բարձր պատրաստված մարդկային կապիտալի ստեղծում և հետազոտությունների առևտրայնացում՝ գիտելիքը վերածելով մասնավոր հատվածի սպառման օբյեկտի<sup>3</sup>: Առևտրայնացումը՝ որպես ինովացիոն գործընթացի կարևորագույն տարր, այժմ դարձել է բիզնես գործունեության անկախ ոլորտ, որի վերջնական նպատակը առավելագույն տնտեսական էֆեկտով ապրանքների և ծառայությունների արտադրությունն ու վաճառքն է:

Համալսարանները աստիճանաբար փոխարինում են հետազոտության, ուսուցման և գիտելիքի տարածման ավանդական գործառույթը նոր՝ ավելի առաջադեմ դերով, որը նպաստում է բիզնես-ակադեմիական մոդելի ստեղծմանը: Համալսարաններն ու գիտահետազոտական ինստիտուտները այն վայրերն են, որտեղ մեծ տեղ է հատկացվում առաջադեմ տեխնոլոգիաներին և գյուտերին<sup>4</sup>: Ուստի համալսարանական ինտելեկտուալ կապիտալի արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ է մեկնաբանել «ինտելեկտուալ կապիտալ» հասկացությունը, ներկայացնել առևտրայնացման ձևերն ու մեխանիզմները, որոնք կուսումնասիրենք սույն հոդվածում:

Համալսարանական ինտելեկտուալ կապիտալի շուկայական արժեքը փոխարինելիս փոխվում է բուհերի ավանդական մտածողության ընդհանուր սխեման. հետազոտության արդյունքների առևտրայնացմամբ, գիտնականների և ձեռնարկատերերի համագործակցությամբ հետազոտական նախագծեր իրականացնելու փորձերը, հետազոտության մեջ արդյունաբերության արդյունքները ներդնելը այլևս առաջնահերթություն են գիտության ներկայացուցիչների համար: Գիտական հետազոտության

<sup>2</sup> Տե՛ս **В. И. Кудашов, Ю. В. Нечепуренко**, *Формы и методы коммерциализации интеллектуальной собственности. № 7, Экономика и управление, 2015, էջ 35:*

<sup>3</sup> Տե՛ս **R. DeVol, J Lee, M. Ratnatunga**, *Concept to Commercialization: The Best Universities for Technology Transfer, Milken institute center for jobs and human capital. 2015, էջ 2:*

<sup>4</sup> Տե՛ս **N. D. Minh, T. T. Van**, *University Spin-Off: The Solution to Intellectual Property Commercialization in Universities, Open Journal of Social Sciences, Vol. 10, No. 4, 2022, էջ 1-2:*

գաղափարը պետք է լինի ոչ միայն ինտելեկտուալ հայեցակարգը, այլև պետք է համապատասխանի շուկայի պահանջներին և կարիքներին:

Հետազոտության արդյունքները օգտագործելու համար անհրաժեշտ է ներդնել գիտելիքի և տեխնոլոգիաների առևտրայնացման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան միավորելու ակադեմիական դարավոր ավանդույթները<sup>5</sup>:

Բազմաթիվ հեղինակներ ներկայացնում են «ինտելեկտուալ կապիտալ» հասկացության էությունը բնութագրող տարատեսակ սահմանումներ:

Օրինակ՝ Ջ. Դևիսը և Ս. Հարիսոնը ինտելեկտուալ կապիտալը սահմանել են որպես «գիտելիք, որը կարող է փոխակերպվել արժեքի»: Հեղինակները առանձնացնում են երկու բաղադրիչ՝ մարդկային կապիտալ (գաղափարներ, որոնք կրում և պահպանում ենք մեր մտքում) և ինտելեկտուալ ակտիվներ (գաղափարներ, որոնք ինչ-որ ձևով ծածկագրված են):

Ինտելեկտուալ ակտիվների շրջանակներում գոյություն ունեցող գաղափարների այն ենթախումբը, որը հնարավոր է օրենքով պաշտպանել, սահմանվեց որպես մտավոր սեփականություն<sup>6</sup>:

Լ. Էդվինսոնը և Մ. Մալոնը ինտելեկտուալ կապիտալը համարում են անձնակազմի գիտելիքների ամբողջությունը, որը կարող է վերածվել կանխիկ եկամտի կամ բիզնեսի համար տնտեսապես նշանակալի այլ ապրանքներին<sup>7</sup>:

Ինտելեկտուալ կապիտալը դինամիկ համակարգ է. դրա տարրերը մշտապես փոխգործակցում են, ենթարկվում փոփոխությունների, որոնց շնորհիվ ձևավորում է կայուն վերջնարդյունք՝ «մտավոր սեփականություն» անվանմամբ, որը ինտելեկտուալ կապիտալի գործարկման տարատեսակներից է: Մտավոր սեփականությունը, լինելով հետազոտական, գործընթացային նախագծի արդյունք, ի վերջո վերածվում է որոշակի նորարարության, որը կարելի է արտոնագրել, և որից հետո այն դառնում է կայուն: Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը այս հասկացությունը սահմանել է որպես մարդու մտավոր աշխատանքի արդյունք. դրանք են՝ գյուտերը, գրականության և արվեստի ստեղծագործությունները, ինչպես նաև առևտրային գործունեության մեջ օգտագործվող նշանները, անունները, պատկերներն ու նմուշները<sup>8</sup>:

Ակադեմիական և համալսարանական կազմակերպություններում ստեղծված մտավոր սեփականության օբյեկտները, ունենալով բազմաթիվ

<sup>5</sup> Տե՛ս **J. Michalak, J. Krasodomska, G. Rimmel, J. Sort, D. Trzmielak**, Intellectual capital management in public universities. Poland, 2016, էջ 20:

<sup>6</sup> Տե՛ս **M. Çela**, Intellectual Property Management and Strategy in Business, Mediterranean Journal of Social Sciences MCSER. Vol. 4, No. 11, Rome-Italy, 2013, էջ 445:

<sup>7</sup> Տե՛ս **Шишалова Ю.** Коммерциализация интеллектуального капитала университета: отечественный и зарубежный опыт, Экономика и социум: современные модели развития. Том 11, Номер 2, 2021, М., էջ 144:

<sup>8</sup> Տե՛ս Մտավոր սեփականության իրավունքների կիրարկման ուղեցույց, <https://www.aipa.am/hy/ip-infringement/>



առանձնահատկություններ, առևտրայնացման և օգտագործման զանազան տարբերակներով գործածվում են միջազգային պրակտիկայում: Մտավոր սեփականության առևտրայնացումը բարդ և երկարատև գործընթաց է, հետևաբար անհրաժեշտ է հասկանալ առևտրայնացման գործընթացը, որպեսզի կարողանանք կանխատեսել առևտրայնացման հավանական արդյունքները: Այլ կերպ ասած՝ հաջողությունը կամ ձախողումը մեծապես կախված են հենց առևտրայնացման գործընթացից, որոնց առավել հայտնի մի քանի տարատեսակներ ներկայացվում են ստորև:

*Մտավոր սեփականության օբյեկտների լիցենզիաների վաճառքի կամ վարձակալության հետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացման բիզնես մոդել*, ըստ որի՝ համալսարանը վաճառում կամ վարձակալում է բացառիկ մտավոր սեփականության իրավունքներ և դրա դիմաց ստանում է միանվագ կամ պարբերական վարձատրություն<sup>9</sup>: Լիցենզիայի համաձայն՝ մտավոր սեփականության իրավատերը (լիցենզատու) իր մտավոր սեփականությունը օգտագործելու թույլտվությունը տալիս է այլ անձի (լիցենզատուի) պայմանագրի դրույթներով սահմանված կարգով: Բիզնես մեկնաբանմամբ՝ լիցենզիան թույլ է տալիս արտոնագրողին շահույթ գեներացնել իր մտավոր ակտիվներից՝ դրա օգտագործման դիմաց լիցենզավորված անձից գումար գանձելով<sup>10</sup>:

*Համալսարանների հիման վրա նորարարական փոքր ձեռնարկությունների ստեղծման բիզնես մոդելը* ենթադրում է ստեղծել համալսարանից տնտեսապես և ֆինանսապես կախված մի կառույց, որը կզբաղվի գիտական զարգացումների գործնական փորձարկումով և շուկայում դրանց առևտրայնացմամբ: Ինչպես ցույց է տալիս արտասահմանյան փորձը, մտավոր սեփականության առևտրայնացման խոստումնալից ուղղություն է նորարարական փոքր ձեռնարկությունների ստեղծումը. վերջիններս հնարավորություն են տալիս շուկայական հետազոտության գործընթացում բացահայտված կարիքների հիման վրա ստեղծելու մտավոր սեփականության այլ օբյեկտներ, մշակված տեխնոլոգիաների ներդրմամբ հիմնելու արտադրություն՝ շահավետ անցում կատարելով զանգվածային արտադրության:

*Համալսարանների մասնակցությունը վենչուրային հիմնադրամների և (կամ) տեխնոլոգիական պարկերի (տեխնոպոլիսների) աշխատանքներին իրենց մտավոր կապիտալի առևտրայնացման առումով համեմատաբար երիտասարդ բիզնես մոդել է*, որը առաջինը գործարկվել է ԱՄՆ-ում: Մոդելի հիմնական նպատակն է համալսարանին տրամադրել տարածքներ և սարքավորումներ արտոնյալ վարձակալության պայմաններով և օժանդակել մտավոր սեփականության առևտրայնացմանը աուստրալիանցի մեխանիզմով: Վենչուրային հիմնադրամների դեպքում համալսարանը կարող է լրացուցիչ ֆինանսավորում ստանալ դրամաշ-

<sup>9</sup> St' u Ю. Шишалова, նշվ. աշխ., էջ 151-152:

<sup>10</sup> St' u Your Guide to IP Commercialisation, The European IP Helpdesk, 2019, էջ 17:

նորհների կամ վենչուրային կապիտալի ֆինանսավորման տեսքով հիմնադրամի կառավարիչ գործընկերոջից: Այս մոդելը հնարավորություն է տալիս համալսարաններին ստանալու անհրաժեշտ ռեսուրսներ մտավոր սեփականության օբյեկտների առևտրայնացման համար, սակայն գործընթացի մնացյալ մասը մնում է համալսարանների կառավարման ներքո, որը և պայմանավորելու է առևտրայնացման հաջողությունը:

*Պետական զարգացման նորարարական ծրագրերում և պետական բարձր տեխնոլոգիական կորպորացիաներում համալսարաններին ընդգրկելու բիզնես մոդել բուհի մտավոր կապիտալի առևտրայնացման համար.* այս մոդելով համալսարանները ներգրավվում են բարձր տեխնոլոգիական մեգաբիզնեսի նորարարական նախագծերում և ծրագրերում՝ ստեղծելով համալսարանական կոնսորցիումներ<sup>11</sup>:

*Համալսարաններում տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակների ստեղծում՝ որպես մտավոր կապիտալի առևտրայնացման մեխանիզմ:* Ակնհայտ է հետազոտողները սովորաբար չունեն նախատիպերից առևտրային առավելություններ ստանալու տեխնիկական բավարար գիտելիքներ: Ջարգացումից առևտրայնացում անցումը հեշտացնելու համար համալսարանները ստեղծում են տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակներ<sup>12</sup>:

Տեխնոլոգիաների փոխանցումն ընդգրկում է համալիք արժեքային շղթա, որը կապում է հետազոտությունը դրա վերջնական հասարակական տեղակայմանը: Սա սկսվում է հետազոտական հաստատություններում նոր տեխնոլոգիաների փնտրտուքով, որին հաջորդում են այդ տեխնոլոգիաների բացահայտումը, գնահատումը և պաշտպանությունը: Հաջորդ քայլերը ներառում են շուկայավարում, պոտենցիալ լիցենզավորման պայմանագրեր և տեխնիկական գյուտերի վրա հիմնված ապրանքների մշակում: Այս ապրանքների ֆինանսական եկամուտները կարող են օգտագործվել հետագա հետազոտությունների համար<sup>13</sup>: Մեկ այլ սահմանմամբ՝ տեխնոլոգիաների փոխանցման մեթոդները գործողությունների կանխորոշված շարք է, որի ընթացքում հայտատուն ձեռք է բերում անհրաժեշտ տեխնոլոգիա<sup>14</sup>:

*Համալսարաններում և գիտահետազոտական հաստատություններում մտավոր սեփականության իրավունքների առևտրայնացման «սփին-օֆֆ» մոդելը:* Ընդհանրական իմաստով *սփին-օֆֆը* անկախ իրավաբանական անձ է, որը հիմնադրվել է մայր կազմակերպության

<sup>11</sup> Տե՛ս **Ю. Шишалова**, նշվ. աշխ., էջ 150-151, 152-153:

<sup>12</sup> Տե՛ս **S. M. Sharif, A. Ahamat, M. M. Abdullah, J. Jabar, M. H. Bakri**, University intellectual property commercialization: a critical review of literature, The Turkish Online Journal of Design, Art and Communication, 2018, էջ 878:

<sup>13</sup> Տե՛ս An official website of the European Union: [https://knowledge4policy.ec.europa.eu/technology-transfer/what-technology-transfer\\_en](https://knowledge4policy.ec.europa.eu/technology-transfer/what-technology-transfer_en)

<sup>14</sup> Տե՛ս **N. Luna**, Understanding Technology Transfer; Its Facts and Models, Cebu Technological University, Cebu City, Philippines, 2020, էջ 2:

կողմից՝ մտավոր սեփականությունը շահագործելու համար: Մփին-օֆֆը շահույթ ստանալու նպատակով գործող և համալսարաններից անկախ կազմակերպություն է, որում ընդգրկվում է համալսարանի առնվազն մեկ անդամ կամ դրանում բաժնետոմսեր ունեցող համալսարան: Մփին-օֆֆ ընկերության մոդելը ձևավորվել է 19-րդ դարի սկզբին զարգացած երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Միացյալ Թագավորությունը, այնուհետև տարածվել է Եվրոպայում և Ճապոնիայում: Այն թույլ է տալիս գյուտարարներին պահպանել իրենց մտավոր սեփականությունը՝ միաժամանակ ստանալով տնտեսական շահույթ<sup>15</sup>:

Մփին-օֆֆի ստեղծումը բարդ գործընթաց է, որը ենթադրում է առանձին բիզնեսի զարգացում՝ մտավոր սեփականության իրավունքների և պարտականությունների հետագա բաշխում, նախագծերի ու ռիսկերի կառավարում և որոշակի հանգամանքներում ֆոնդերի հավաքագրում՝ ներդրողների ֆինանսական միջոցները կառավարելու համար: Ինչ վերաբերում է սխեմայի բարդությանը, ապա կարևոր է նշել, որ շատ հաճախ գիտական, ակադեմիական ներկայացուցիչները չունեն մտավոր սեփականության կառավարման զգալի փորձ, ինչը, հավանաբար, կխաթարի նոր արտադրանքի առևտրային ներուժը: Հետևաբար, նրանց գործառույթներին բիզնեսի վրա հիմնված աջակցությունը կարևոր է միջոցներ ձեռք բերելու հնարավորությունները, ինչպես նաև բաժնետերերի և հաճախորդների վստահությունը մեծացնելու առումով<sup>16</sup>:

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին.

Լավ կամ բարձրորակ հետազոտության արդյունքները բավարար չեն մտավոր սեփականության օբյեկտների հաջող առևտրայնացման համար: Ընդհանուր տեղեկացվածությունն ու պատրաստակամությունը ինչպես կազմակերպությունների, այնպես էլ անհատների շրջանում, ինչպես նաև հատուկ հմտություններն ու կարողությունները, ինչպիսիք են ռիսկերի ֆինանսավորման հասանելիությունը և մտավոր սեփականության կառավարումը, նույնպես անհրաժեշտ բաղադրիչներ են:

Մտավոր սեփականության առևտրայնացման տեսակներից որևէ մեկի ընտրությունը պայմանավորված է ինքնին սեփականության օբյեկտի և տվյալ պետության օրենսդրական առանձնահատկություններով:

Համալսարանները դառնում են զարգացող տնտեսությունների հիմնական նորարարական կենտրոններից մեկը՝ շնորհիվ տարբեր մակարդակների և սոցիալական կարգավիճակի. մտավոր կապիտալի ստեղծումը խթանելու համար կարևոր է համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների դերի ընկալման փոփոխությունը:

Մտավոր սեփականության իրավունքները նորարարության և ստեղծագործական գործունեության խթանման կարևոր գործոն են՝

<sup>15</sup> Տե՛ս N. D. Minh, T. T. Van, նշվ. աշխ., էջ 4:

<sup>16</sup> Տե՛ս Commercialising Intellectual Property: Spin-offs, European IPR Helpdesk, 2013, էջ 5:

հանգեցնելով շարունակական էվոլյուցիայի ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական առումով:

Արդյունավետությունը, որով համալսարանն օգտագործում է մտավոր սեփականությունը, նույնպես անհրաժեշտ գործոն է, որն ազդում է համալսարանի հայտնիության էվոլյուցիայի վրա, քանի որ մտավոր սեփականությունը համարվում է արժեք ստեղծող հիմնական ցուցիչներից մեկը:

Կառավարությունը, գիտահետազոտական և կրթական ինստիտուտները, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական համակարգը մտավոր սեփականության իրավունքները կառավարող և հասարակության հետ կապ հաստատող հաստատություններ են՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունն ապահովելու և երաշխավորելու հիմնական նպատակներով. սա օգնում է շրջանցելու զարգացման հնարավոր խոչընդոտները՝ խրախուսելով ստեղծարարությունն ու նորարարությունը:

Ամբողջացնելով կարող ենք արձանագրել, որ նշյալ համակարգերի զարգացման խթան կարող է լինել հետազոտությունների իրականացման շուկայական արժեքի փաստարկումը, ինչպես նաև համապատասխան աշխատանքի անհրաժեշտության երաշխավորությունը թե՛ մասնավոր, թե՛ պետական հատվածի կողմից: Ոլորտի կարգավորումը և արդյունավետությունը համակարգային գործողությունների ամբողջություն են, որը կարիք ունի հանրային քաղաքականության մշակման և իրականացման:

**СЕРГО ОГАНОВ – *Формы и механизмы коммерциализации интеллектуального капитала вузов и научно-исследовательских институтов.*** – Новая экономическая реальность, диктующая новые императивы развития, выдвигает на первый план роль интеллектуальной собственности. Интеллектуальная собственность, становясь новым двигателем развития, выдвигает на первый план роль университетов и научно-исследовательских институтов, которые считаются столпами создания знаний. Необходимость управления интеллектуальной собственностью является следствием глобализации и роста экономики знаний, конечным результатом которой является процесс преобразования товаров и услуг в коммерчески жизнеспособную ценность. Созданная новая экономическая реальность требует повышения роли капиталов создания знаний, таких как университеты. Университеты постепенно заменяют традиционную функцию исследования, обучения и распространения знаний новой, более продвинутой ролью, которая способствует созданию бизнес-академической модели. В 21 веке исследовательские университеты являются основным капиталом создания знаний, способствующих экономическому развитию на основе научно-технического прогресса, в котором важна роль наукоемких факторов для продвижения на передний план экономики, они являются созданием высоко подготовленного человеческого капитала и коммерциализации исследований. Для эффективной работы интеллектуального капитала вуза необходимо интерпретировать понятие «интеллектуальный капитал», представить формы и механизмы коммерциализации, которые мы и изучим в данной статье.

**Ключевые слова:** интеллектуальный капитал, интеллектуальная собственность (ИС), лицензирование объектов ИС, венчурные фонды и технопарки, офис трансфера технологий, спин-офф предприятия

**SERGO OGANOV – *Forms and Mechanisms of Commercialization of Intellectual Capital of Universities and Research Institutes.*** - The new economic reality, which dictates new development imperatives, highlights the role of intellectual property. Intellectual property, becoming a new driver of development, highlights the role of universities and research institutes, which are considered capitals of knowledge creation. The need for intellectual property management is driven by globalization and the growth of the knowledge economy, which aims to transform products and services into commercially viable value. The new created economic reality makes it imperative to increase the role of knowledge creation capitals, such as universities. Universities are gradually replacing the traditional function of research, teaching and knowledge dissemination with a new, more advanced role that contributes to the creation of a business-academic model. In the 21<sup>st</sup> century, research universities are the main capital of knowledge creation, promoting economic development based on scientific and technological progress, in which the role of knowledge-based factors is important to promote the forefront of the economy, they are the creation of highly trained human capital and the commercialization of research. For the effective operation of university intellectual capital, it is necessary to interpret the concept of "intellectual capital", to present the forms and mechanisms of commercialization, which we will study in this article.

**Key words:** *intellectual capital, intellectual property (IP), licensing of IP objects, venture funds and technology parks, technology transfer office, spin-off enterprises*

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ**  
**INFORMATION ABOUT THE AUTHORS**

- 1. Պեղամ Պետրոսյան** – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան  
**Гегам Петросян** – доктор исторических наук, профессор, декан факультета международных отношений ЕГУ  
**Gegham Petrosyan** – Sc. D. in History, Professor, Dean of YSU Faculty of International Relations  
Էլ. փոստ՝ [gegham.petrosyan@ysu.am](mailto:gegham.petrosyan@ysu.am)
- 2. Ռուբեն Մելկոնյան** – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան  
**Рубен Мелконян** – доктор исторических наук, профессор, декан факультета востоковедения ЕГУ  
**Ruben Melkonyan** – Sc. D. in History, Professor, Dean of YSU Faculty of Oriental Studies  
Էլ. փոստ՝ [rubenmelkonyan@ysu.am](mailto:rubenmelkonyan@ysu.am)
- 3. Հայկ Սողոմոնյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հայցորդ, Երևանի Կապույտ մզկիթի պարսկերենի ուսուցիչ  
**Айк Согомонян** – соискатель института востоковедения НАН РА, учитель персидского языка Голубой мечети Еревана  
**Hayk Soghomonyan** – Applicant at the Institute of Oriental Studies of NAS RA, Persian Language Teacher of the Blue Mosque of Yerevan  
Էլ. փոստ՝ [hayksoghomonyan1985@gmail.com](mailto:hayksoghomonyan1985@gmail.com)
- 4. Խաչիկ Գալստյան** – քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր  
**Хачик Галстян** – доктор политических наук, профессор кафедры политологии ЕГУ  
**Khacik Galstyan** – Sc. D. in Political Sciences, Professor at YSU Chair of Political Science  
Էլ. փոստ՝ [khgalstyan@ysu.am](mailto:khgalstyan@ysu.am)
- 5. Վիկտորյա Մելքոնյան** – ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ  
**Виктория Мелконян** – аспирант кафедры политологии ЕГУ  
**Viktorya Melkonyan** – PhD student at YSU Chair of Political Science  
Էլ. փոստ՝ [melkonyanviktorya@gmail.com](mailto:melkonyanviktorya@gmail.com)
- 6. Մանե Ատիկյան** – ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ  
**Мане Атикян** – аспирант кафедры политического управления и публичной политики академии государственного управления РА  
**Mane Atikyan** – PhD Student at the Chair of Political Governance and Public Policy at Public Administration Academy of the RA  
Էլ. փոստ՝ [mane.atikyan@ysu.am](mailto:mane.atikyan@ysu.am)

7. **Էդգար Քալանթարյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հանրային կառավարման ամբիոնի դոցենտ  
**Эдгар Калантарян** – кандидат политических наук, доцент кафедры государственного управления ЕГУ  
**Edgar Kalantaryan** – PhD in Political Sciences, Associate Professor at YSU Chair of Public Administration  
Էլ. փոստ՝ edgar.kalantaryan@ysu.am
8. **Նարինե Ասրյան** – ԵՊՀ հանրային կառավարման ամբիոնի դասախոս  
**Нарине Асрян** – преподаватель кафедры государственного управления ЕГУ  
**Narine Asryan** – Lecturer at YSU Chair of Public Administration  
Էլ. փոստ՝ narine.asryan@ysu.am
9. **Սերգո Օգանով** – ԵՊՀ հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ  
**Серго Оганов** – ассистент кафедры государственного управления ЕГУ  
**Sergo Oganov** – Assistant at YSU Chair of Public Administration  
Էլ. փոստ՝ soganov@ysu.am

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ INTERNATIONAL RELATIONS

- Պեղամ Պևրոսյան** – Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության բանակցությունները թուրք քաղաքական ու պետական գործիչների և մամուլի ներկայացուցիչների հետ (1918 թ. հունիս-հուլիս)..... 3
- Гегам Петросян** – Переговоры делегации Республики Армения с турецкими политическими и государственными деятелями и представителями печати в Константинополе (июнь-июль 1918 г.)
- Gegham Petrosyan** – Negotiations of the Delegation of the Republic of Armenia with Turkish Political and State Figures and Press Representatives in Constantinople (June-July 1918)
- Ռուբեն Մելքոնյան** – Հայ-թուրքական չստացված երկխոսության պատմություննից. «Թուրք-հայկական հաշտեցման միությունը» (1922-1927 թթ.)..... 17
- Рубен Мелконян** – Из истории армяно-турецкого несостоявшегося диалога: «Союз турецко-армянского примирения» (1922-1927 гг.)
- Ruben Melkonyan** – From the History of the Armenian-Turkish Failed Dialogue “Turkish-Armenian Reconciliation Union” (1922-1927)
- Հայկ Սոցոմոնյան** – Անգլո-խորհրդային զորքերի կողմից Իրանի ռազմակալման գործողությունը (1941 թ.) ..... 28
- Айк Согомонян** – Оккупация Ирана британскими и советскими войсками (1941г.)
- Hayk Soghomonyan** – The British and Soviet Occupation of Iran (1941)

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ПОЛИТОЛОГИЯ POLITICAL SCIENCE

- Խաչիկ Գալստյան** – Արցախյան հարցի կարգավորման բանակցային նոր հայեցակարգը. ամեն ինչ որոշում են արժեքները..... 41
- Хачик Галстян** – Новая переговорная концепция урегулирования арцахского вопроса: ценности решают все
- Khachik Galstyan** – New Negotiation Concept of the Artsakh Settlement: Values Matter Everything
- Վիկտորյա Մելքոնյան** – Էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկումը որպես հասարակություն-պետություն արդյունավետ հաղորդակցության գործիք..... 55
- Виктория Мелконян** – Внедрение систем электронного управления как инструмент налаживания эффективной коммуникации общество-государство
- Viktorya Melkonyan** – Implementation of Electronic Governance Systems as a Tool for Establishing Effective Society-State Communication



|   |    |
|---|----|
| <i>Մանն Աթիկյան</i> – Համագործակցության մշակույթը որպես կուսակցական լիդերի կայացման պայման..... | 68 |
| <i>Мане Атикян</i> – Культура сотрудничества как условие становления партийного лидера          |    |
| <i>Mane Atikyan</i> – The Culture of Cooperation as a Condition of Shaping a Party Leader       |    |

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**  
**ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ**  
**PUBLIC ADMINISTRATION**

|  |     |
|--|-----|
| <i>Էդգար Զարակչարյան</i> – Իտալիայի միգրացիոն քաղաքականության հիմնախնդիրները .....   | 81  |
| <i>Эдгар Калантарян</i> – Основы итальянской миграционной политики   |     |
| <i>Edgar Kalantaryan</i> – Basics of Italian Migration Policy  |     |
| <i>Նարինե Ասրյան</i> – Արդյունավետ կառավարման հայեցակարգի ընկալումը և փոխակերպումը հետխորհրդային տարածքում .....                     | 88  |
| <i>Нарине Асрян</i> – Восприятие и трансформация концепции эффективного управления на постсоветском пространстве                     |     |
| <i>Narine Asryan</i> – Perception and Transformation of the Concept of Good Governance in the Post-Soviet Space                      |     |
| <i>Սերգո Օգանով</i> – Համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների ինտելեկտուալ կապիտալի առևտրայնացման ձևերն ու մեխանիզմները ..... | 102 |
| <i>Серго Оганов</i> – Формы и механизмы коммерциализации интеллектуального капитала вузов и научно-исследовательских институтов      |     |
| <i>Sergo Oganov</i> – Forms and Mechanisms of Commercialization of Intellectual Capital of Universities and Research Institutes      |     |
| Տեղեկություններ հեղինակների մասին .....  | 110 |
| Сведения об авторах  |     |
| Information about the Authors  |     |

**Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1**  
**Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1**  
**Address: 1, Alex Manoogian str., Yerevan**

**Վայք՝ journals.ysu.am**  
**Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am**

**Հեռ. 060 710 218, 060 710 219**

**Հրատարակչական խմբագիր՝**  
**Издательский редактор**  
**Publishing Editor**

**Արմեն Հովակիմյան**  
**Армен Овакимян**  
**Armen Novakimyan**

**Վերստուգող սրբագրիչ՝**  
**Контрольный корректор**  
**Proofreader**

**Փայանե Գրիգորյան**  
**Гаяне Григорян**  
**Gayane Grigoryan**

**Թողարկման պատասխանատու՝**  
**Ответственный выпуска**  
**Issued by**

**Հասմիկ Եսայան**  
**Насмик Есаян**  
**Hasmik Yesayan**

**Ստորագրված է տպագրության 12. 04. 2023:**